ԵՐԵՎԱՆ

#4(63)
2020

քաղաքի
ամսագիր

ереван / yerevan

ՄԵՆՔ ՄԵՐՈՆՅՈՎ
Փակ սահմաններն ու ներքին տուրիզմի անսահման հնարավորությունները

artonyan

Ընտարեն

Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացուն վայել մոտեցում

մարքեթինգ • հրատարակչություն • գովազդություն • պրոմո նյութեր

Երբ 2020 թվականի (միայն թե շուտ անցնի) մարտին համարյա բոլորս փակվեցինք տներում ու հայտնվեցինք ակամա արձակուրդի մեջ, շատերս սկսեցինք մտածել, թե ինչով կարելի է լցնել ժամանակը ստեղծված իրավիճակից գոնե մի օգտակար բան քաղելու համար։ Լիքը գրքեր ընթերցվեցին, վաղուց քաշած, բայց համակարգչի խորքերում մնացած սերիալներ դիտվեցին, օտար լեզուների ձեռնարկներ ուսումնասիրվեցին, փոշոտ երաժշտական գործիքներ դուրս բերվեցին խորդանոցներից։ Ով նկարում էր, նկարեց վաղուց մտածածը, գրողները գրքեր գրեցին (որոշ գործեր նույնիսկ գուցե հայտնվեն գրականության նոր դասագրքերում), իրար երես չտեսածները շփվեցին միմյանց հետ, երեխաների հետ «լեգո» հավաքեցին, վերջապես վերանորոգեցին ճոճռացող պահարանը, հետո նորից հանգիստ սրտով նստեցին սերիալ նայելու։

Ոչինչ, մտածում էինք շատերս, մի երկու ամսում ամեն ինչ կլուծվի, իսկ ամռանը գուցե դեռ հասցնենք նախատեսած ճամփորդությունները կյանքի կոչել։ Ի վերջո, ազգի շատ ներկայացուցիչներ դեռ ձմռանը (հիշո՞ւմ եք՝ եղել է անքովիդ ձմեռ) լոու-քոսթերներից ախորժալի տոմսեր ունեին գնած՝ Միլան, Հռոմ, Բեռլին, թանգարաններ, համերգներ, տեսարժան վայրերի հետ սելֆիներ։ Մյուսներս ավանդական Բաթումի կամ Աթենքն էին վաղուց պլանավորել։ Բայց ինչպես ցույց տվեց 2020-ի (շո՛ւտ վերջացիր) հետագա ընթացքը՝ մեկուսացումը ոչ միայն բնակարանի մասին էր, այլև տան՝ ավելի լայն իմաստով։ Հայաստանը մեր տունն է, ու մենք այս տարի մնում ենք Հայաստանում։

Հաստատ շատերս տխրել ենք՝ չեղարկելով վաղուց պլանավորված ճամփորդությունները։ Բայց եթե մարտ-ապրիլին ճամփորդում էինք հյուրասենյակից խոհանոց, հետո տրանզիտով դեպի պատշգամբ՝ մաքուր օդի, ապա ամռանը վերջապես կարելի է ճամփորդել լայն իմաստով տան մեջ։

Հայաստանի սահմանները փակ են, բայց այդ սահմանները տալիս են հանգստի ու արկածների անսահման հնարավորություններ՝ մեղրի ճանապարհ, գինու ճանապարհ, Արցախի թաքնված գանձեր (ի դեպ՝ ապշեցուցիչ տվյալների համաձայն՝ հայաստանցիների 60%-ն այնտեղ չի եղել ընդհանրապես), Տաթևի թեթև թևերը, Հին Խնձորեսկի ծանր քարերը, մյուսը, մյուսը, մյուսը՝ մեծերի ու փոքրերի համար ինչեր ուզես... Իսկ եթե այդ բոլոր ուղիներին մեզ օգնեն տեղացի զբոսավարները, մենք կգտնենք շատ ավելին, քան պատկերացնում էինք։

Մի խոսքով, որքան էլ զարմանալի թվա, այո՛, գրողի տարած 2020-ը (ե՞րբ ես վերջանալու) մեզ հնարավորություն տվեց ճանաչելու մեր երկիրը։ Եկեք օգտվենք այդ հնարավորությունից, որ տարին անիմաստ անցած չլինի։ Պարզապես չմոռանանք սոցիալական հեռավորության մասին, որպեսզի 2020-ին (կեսից շատն անցնել ենք գոնե) կյանքը հարամ անելու նոր առիթներ չտանք։

Գնացինք, մի խոսքով։

Գլխավոր խմբագիր
Արտավազդ Եղիազարյան

ՔԱՂԱՔԱՄԵՋ

04 Խաղը

13 փաստ Telcell-ի մասին
13 տարի առաջ սկիզբ առավ ինֆինասպասարկման տերմինալների միջոցով վճարումների ընդունման առաջին յանյը:

06 Կինո
Դիմապակին մաքրի, կինո նայենք
Երևանում նորից կարելի է մեծ էկրանով կինո դիտել, բայց մեքենայում նստած:

08 Ճ
SNKH. «Ճարտարապետությունը պիտի բզբզալու ֆունկցիան պահպանի»
Երիտասարդ խարտարապետների ընտանիքը՝ հայաստանյան ու ռուսաստանյան փորձերի առանձնահատկությունների մասին:

ՆԵՐՔԻՆ ՏՈՒՐԻԶՄ

14 Խորհուրդ

Թրևի խորհուրդներ
Հայաստանով խամփորդելուց առաջ պետք է լավ պատրաստվել:

16 Քաղաքային հանգիստ
Դիլիջանյան արկածներ
Մի օր գիշերակայով՝ առաջարկում է «Զբոսաշրջության և խաղաքաշինության» բարեգործական հիմնադրամը:

18 Հոբելյան

«Տաթևեր». 10-ամյակ
Վանքը, խոպանուղին, թանգարանը. այն ամենը, ինչ պետք է իմանալ Տաթև մեկնելիս:

22 Հատուկ ուղիներ

Թեմատիկ տուրեր
Ճամփորդական ուղիների չորս տարբերակ՝ մեղր, բուրդ, մանկական և արկածային:

30 Հատուկ ուղիներ

Թրևագիր Վայոց ձորի գինուղուց
Վեց գինետներ, որտեղ սպասում են զբոսաշրջիկներին:

34 Սնունդ
Համով հոտով Հայաստան
Ինչպես խանաչել հայրենիքը ապգային ուրեստների օգնությամբ:

38 Արհեստներ

Անիվի պես պտտվող հեքիաթը
Դիլիզանցի ժանյակագործ Արմինե Պողոսյանը դարավոր ավանդույթի մասին:

40 Արհեստներ
Էներգիայի անսպառ աղբյուր
Վահագն Համբարձումյանի արհեստանոցը Սիսիանում:

42 Սեփական փորձ

Փորձի փոխանակում
Չորս մասնագետ և նրանց առաջարկած զբոսաշրջային փորձառությունները:

«Վերին» բնապատկերանկարն հիմնադրամ

46 Զբոսավար
Իմ ծննդավայրի զբոսավարը
Ինչու է կարևոր խամփորդել տեղայի զբոսավարի ընկերակցությամբ:

48 Ապագա
Ներքին զբոսաշրջության հետքերով
Ինչ է նշանակում գիտահենք մշակութային զբոսաշրջության և ինչ հեռանկարներ այն ունի Հայաստանում. կարծիքներ:

50 Փառատոն

Փառատոնային ընդմիջում
Ինչպես են համաքարանի պայմաններում անցնում Հայաստանի խոշոր փառատոները:

52 Փառատոն
Իմ ձեռագործ Հայաստան
Ինչպես 21-րդ դարում ավելի լավ ներկայացնել ապգային արվեստն ու արհեստները:

54 Այլընտրանք
Ավտոստոպը Հայաստանում
Մեղական «պապուծիի» առանձնահատկությունները՝ պատմում է փորձառու ավտոստոպահարը:

56 Մի արեք այսպես

Հայերն ու քաղաքիցդուրսը
Ինչու են հայերը հանգիստը պատկերացնում անտառում խորոված ու պլաժ ռաբիտով:

58 Արցախ

Ազատ Արցախը սպասում է ձեզ
Այն ամենը, ինչ կարելի է և պետք է տեսնել Արցախում՝ Դադիվանքից մինչև Հադրութ:

68 Կադրերի բաժին

Տուրիստական պաստառներ, 1950-60-ականներ
Մի դրվագ Հայաստանի ներքին զբոսաշրջության պատմությունից:



Շապիկ՝
Սարգիս Անտոնյան

ԵՐԵՎԱՆ #4(63) | 2020

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Արտ-տնօրեն՝
ՆՈՆՆԱ ԻՍԱՋԱՆՅԱՆ
Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզոյան, Հասմիկ Բարխուդարյան, Նայիրի Խաչատուրեան, Էմմա Հարությունյան, Հայկ Զալիբեկյան, Տիգրան Զաքարյան, Արտյոմ Բաբայան, Կարեն Անտաշյան, Արեգ Դավթյան

Լուսանկարներ և պատկերազարդումներ՝
Արտյոմ Բաբայան, «Իմ Հայաստան» ծրագիր, Հայաստանի ազգային գրադարան, SNKH, Տաստա Կարապետյան, ԱՀ ՌԵՍՁ նախարարության զբոսաշրջության վարչություն

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta, Montserrat Arm հեղինակներ՝ Զուլիետա Ուլանովսկի, Վահան Հովհաննիսյան

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ
Տնօրեն՝
Արտավազդ Եղիազարյան

Հայաստանի Հանրապետություն, 0014, Երևան, Պարույր Սևակ 8
էլ. փոստ՝ evnmag@gmail.com
Առցանց՝ evnmag.com

facebook.com/YerevanCityMagazine

instagram.com/evnmag

© 2011-2020 **«ԵՐԵՎԱՆ»**
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում Արտավազդ Եղիազարյանը:

Համարը տպագրության է հանձնվել՝ 05.08.2020

Տպագրված է Անտարես տպագրատանը, 0009, Երևան, Մաշտոցի 50ա/1

Տպաքանակ՝ 4000 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Զանգվածային լրատվության մասին» և «Գովազդի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:
Ամսագրի նյութերը վերատպվում են միայն իրավատիրոջ գրավոր համաձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին հղում կատարելը պարտադիր է:
«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման գաղափարը պատկանում է «Երևան Փրոդաքշն» ՓԲԸ-ին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Այս հոդվածները ստեղծվել են «Իմ Հայաստան» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) և իրականացվում Սմիթսոնյան ինստիտուտի կողմից: Հոդվածների բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ, Սմիթսոնյան ինստիտուտի կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

մի դրամի
ուժը
by Idram and IDBank

ամեն ինչ սկսվում է մի դրամից

ավելին **idram.am/1dram** կայքում

ՆԵՐԲԵՌՆԻՐ ՀԱՎԵԼՎԱԾԸ

Ընկերությունները վերահսկվում են ԿԲ կողմից:
idram.am, idbank.am | 060 70 07 00, 010 59 33 33

13 փաստ Telcell-ի մասին

2007 թվականի օգոստոսի 4-ին Telcell-ը սկզբնավորեց Հայաստանում նոր բիզնես ուղղություն. ֆևավորեց ինֆնասպասարկման տերմինալների միջոցով վճարումների ընդունման առաջին ցանցը՝ մնալով էլեկտրոնային վճարումների շուկայի առաջատարը մինչև օրս: Ընկերությունը ծառայություններ է մատուցում շուկայի բայառապես բոլոր հատվածներում, ու չենք սխալվի՝ Telcell-ը կոչելով վճարումների ազգային օպերատոր:

1

2007 թվականի օգոստոսի 4-ին գիտական աշխարհը հետևում էր ՆԱՍԱ-ի Phoenix սարքի ճամփորդության սկզբին. մեկ տարի անց սարքը վայրէջք կկատարի Մարսի մակերևույթին: Այդ նույն օրերին Երկիր մոլորակի փոքր, բայց հպարտ մի անկյունում՝ Հայաստանի Հանրապետությունում, ժամը 13:11-ին VivaCell բջջային կապի օպերատորի Alo քարտի երջանիկ բաժանորդն իրականացրեց **Telcell տերմինալով աշխատանքային առաջին** գործարքը: Եվ դա նույնպես յուրովի պատմական իրադարձություն էր:



2

Այսօրվա հեռավար իրականությունում հեշտ է մոռանալ, որ դեռ 2012 թվականին գրեթե ցանկացած գործարքի համար պետք էր սեփական մարմնով գտնվել բանկի տարածքում. հերթեր, նյարդեր, հավելյալ վճարներ... Բայց եթե կա Telcell-ի պես հարմար գործիք, ինչո՞ւ չմիավորել ուժերը: «ՎՏԲ Հայաստան Բանկն» առաջին բանկն էր, որ անցավ հաճախորդների ինքնասպասարկման՝ սեփական հաճախորդներին հնարավորություն տալով **Telcell համակարգին միացված տերմինալների միջոցով ինքնուրույն կատարել** տարբեր գործարքներ:

3

Ընկերությունն այսօր լուրջ խաղացող է ֆինանսական շուկայում և ծառայությունների ամբողջական տեսականի է տրամադրում՝ բանկային համակարգում վճարումների ընդունման ու դրամական փոխանցումների կազմակերպման համար: Telcell համակարգը վճարումներ ու փոխանցումներ է ընդունում **ՀՀ 14 բանկերից**:



4

2016 թվականին գործարկվեց դրամական **արագ փոխանցումների Telcell Transfer համակարգը**, որի միջոցով հաճախորդները կարող են առանց հաշիվ բացելու կատարել դրամական արագ փոխանցումներ թե՛ Հայաստանի տարածքում, թե՛ հանրապետությունից դուրս:

5

2021 թվականին ԵՐԵՎԱՆ ամսագիրը կնշի իր 10-ամյակը: Դեռ չգիտենք՝ հատկապես ինչպես, բայց երևի պետք է մի շրջադարձային բան անել: Ահա վառ օրինակ. 2017-ին 10-րդ հոբելյանը Telcell-ում նշեցին այնպես, որ մինչև հիմա բոլորը երջանիկ են. գործարկվեց Telcell Wallet բջջային հավելվածը: Այժմ **Telcell-ի էլեկտրոնային դրամապանակի 150,000-ից ավելի օգտատերերը** հնարավորություն ունեն վճարել ավելի քան 400 ծառայությունների դիմաց, կարիք չկա նույնիսկ հասնելու տերմինալներին:

TELCELL-Ը ՎՍՏԱՀ ԿԱՐԵԼԻ Է ԿՈՉԵԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ

6

Տեխնոլոգիաները սլանում են անհավանական արագությամբ: Telcell-ն էլ առաջ է գնում նոր զարգացումներին համընթաց: Անցած տարի գործարկեց բարձր տեխնոլոգիական նոր գործիք՝ **անկանխիկ և անհպում վճարման Scan and Pay ծառայությունը,** որը հնարավորություն է տալիս հարյուրավոր խանութներում ու հյուրանոցառեստորանային հատվածում QR կոդի սքանավորմամբ վճարել հենց սմարթֆոնից՝ Telcell Wallet էլեկտրոնային դրամապանակի միջոցով:
Այդ ժամանակ դեռ ոչ մեկս չէր գիտակցում, բայց նոր տեխնոլոգիան անփոխարինելի կդառնա հատկապես 2020-ի համավարակային պայմաններում:
Ավելին՝ իր Telcell Business հավելվածի միջոցով ընկերությունը գործընկերներին հնարավորություն է տալիս իրենց բիզնեսում ևս ինտեգրել 100% անհպում վճարման համակարգ:

7

Առաջադեմ տեխնոլոգիական ընկերությունը պետք է աջակցի ոլորտի զարգացմանը: Հարմար առիթը եղավ Sevan Startup Summit բիզնես ֆորումը. 2019-ին **Telcell-ը դարձավ միջոցառման գործընկեր**, հովանավորեց մրցույթներ միանգամից երկու անվանակարգերում: Տաղանդավոր մարդիկ ստացան պարգևներ և օգտվեցին Սևանի արևոտ ափերին գործնական հաճելի հավաքների մասնակցելու հնարավորությունից:

8

Նույն ամռանը Telcell Wallet էլեկտրոնային դրամապանակը դադարեց ճանաչել բանկային որևէ սահման և ապշեցրեց անհավանական վստահությամբ. **ներդրվեց ցանկացած բանկի քարտին փոխանցման ծառայությունը:**

9

Միշտ մի տեսակ ավելի հաճելի է, երբ հաջողությունները գրանցվում են միջազգային հարթակներում: Այդպիսի մի հարթակ է բրիտանական Similarweb-ը, որ կատարում է համաշխարհային սարդոստայնում տեղի ունեցող գրեթե ամեն բանի վիճակագրություն և ամեն տարի հրապարակում տարատեսակ ցուցակներ: Ահա այս տարի Telcell Wallet-ը դասվեց **«Ֆինանսներ» կատեգորիայի առաջին հորիզոնականում և App Store-ից ու Play Store-ից Հայաստանում ամենաշատ ներբեռնված հավելվածների թոփ տասնյակում:** Ընդորում, այդ կատեգորիայում դրամապանակը զիջեց միայն համաշխարհային հսկաներին՝ Facebook, Instagram, Tiktok, WhatsApp և Viber:

10

Եվ ահա, եկավ Քովիդ-19-ը... Արտակարգ դրություն, ինքնամեկուսացում, ամենուր փակված գրասենյակներ և կանգնած գործեր: Փակվեցին նաև բանկերից շատերը: Տանը նստած մարդկանց համար գումարի արագ փոխանցումը դարձավ խիստ կարևոր հարց: Արդեն ապրիլին Telcell Wallet-ի օգտատերերին հնարավորություն տրվեց **ժամանակի իրական ռեժիմում գումար փոխանցել ՀՀ բոլոր բանկերի ցանկացած հաշվեհամարի** (և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց): Քովիդը կգնա, բայց նոր հարմար գործիքը կմնա դրամապանակի օգտատերերի մշտական ընկերը:

11

Ամենաթարմ տվյալներով Հայաստանի բնակչությունը թիվը 3,046,100 է: Ոչ պակաս թարմ տվյալների համաձայն՝ այդ մարդկանց կեսը՝ **շուրջ 1,500,000-ը,** Հայաստանի ամբողջ տարածքում և Արցախում օգտվում է **Telcell-ի ավելի քան 3500 տերմինալներից՝ ամսական կատարելով ավելի քան 7,000,000 վճարում:**

TELCELL-Ն ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ. ՏԱՐԵԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՆՈՒՄ Է 350 ՄԼՐԴ ԴՐԱՄԸ

12

Մի քիչ էլ հաշվենք 13-ամյակը նշող ընկերության փողերը. Telcell-ն ընդգրկված է ՀՀ խոշոր հարկատուների ցանկում. ընկերության **տարեկան շրջանառությունը գերազանցում է 350 մլրդ դրամը՝** Հայաստանի պետական բյուջեի 1/5 մասից ավելին:

↑ «Թել-Սել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Արամ Ավագյան

13

Այդուհանդերձ ոչինչ այդքան հստակ չի փաստում ընկերության հաջողությունների մասին, որքան թիվը: 2007-ին բառացիորեն մի քանի հոգուց բաղկացած ստարտափն այսօր ունի **ավելի քան 250 աշխատակից** և բնավ չի պատրաստվում կանգ առնել այդ թվի վրա. նոր պրոֆեսիոնալների մուտքով այստեղ միշտ ուրախ են:



Դիմապակին մաքրի, կինո նայենք

Չնայած կինոթատրոնները փակ են մարտից, համաճարակային իրավիճակում էլ կարելի է մեծ էկրանով կինո դիտել. հուլիսի 20-ին Ոսկե ծիրանն ու Riverside drive in կինոթատրոնը յուսադրեցին Սթենլի Կուբրիկի լեգենդար «Փայլատակումը»: Շուտով սեփական մեքենայից և սոցիալական անվտանգ հեռավորության վրա հնարավոր կլինի նայել հին ու նոր ֆիլմեր: Հանդիպել ենք ավտոկինոթատրոնի հիմնադիրների հետ և հարցուփորձ արել:

Վերջերս ունեցածս երկխոսությունների մեծ մասը մոտավորապես այսպիսին էին.
— Գիտե՞ս Երևանում արդեն drive in կինոթատրոն կա՝ Riverside, ավտոյով գալիս ես ու առանց դուրս գալու նայում մեծ էկրանին:
— Հա՞, ինչ լավ ա, որտե՞ղ:
— «Նոյ» գործարանը գիտե՞ս, ըհը, էդտեղից դեպի ձոր տանող բուլիժնիկներով ներքև, հետո ձախ (աջ կողմում նախկինում «Երևանյան գիշերներն» էր, ավագ սերունդը կհիշի), գետի երկայնքով անցնող երկար ու մութ ճանապարհով գնալիս հեռվում կնշմարվեն նեոնային լույսերը: Այ էդտեղ է. մեծ հարթակ «Մերիդիան» էքսպո կենտրոնի մոտ:
Գիտեի, որովհետև առաջիններից էի, որ գնացի ու տեսա, թե էդ ինչ բան է: Կարծես 60-ականների ամերիկյան ֆիլմերից մի դրվագ լինի: Սկսում ես երևակայել, թե ոնց է էկրանի առջև կանգնած մեքենայի մեջ Դենին խորամանկ, բայց անհաջող փորձեր անում համբուրել Սենդիին: Թվում է՝ աղջիկը շուտով դուրս կցատկի մեքենայից, իսկ Դենին, նույն ինքը՝ Ջոն Թրավոլթան, իր բարձր, բրիոլինոտ սանրվածքով, լայն բակենբարդներով և կաշվե բաճկոնով կանցնի մեքենաների արանքով ու կերգի հանրահայտ «Սենդին»: Վերադառնում ես իրականություն, երբ հայերեն խոսակցություններ ես լսում: Իսկ իրականությունն էլ ավելի հետաքրքիր է: Էդ մթնոլորտը հենց Երևանում է:
Նեոնային լույսերին հասնելուն պես ուղեփակոցի մոտ մեքենաներին դիմավորում են Արամն ու Բաբկենը, ստուգում գրանցումն ու ներս հրավիրում: Հովհաննեսն էլ արդեն ներսում է: Երեք ընկեր են, որոնք իրականություն են դարձրել իրենց վաղեմի երազանքը: Նրանց հետ drive in (եթե ուղղակի թարգմանենք՝ «մեքենայով ներս վարել») ֆորմատի զրույց ունեցա հենց մեքենայի մեջ:

Ինչ է Riverside-ը հիմա, ու ինչ է լինելու հետո

Riverside-ն 80 մեքենայի համար նախատեսված drive in ֆորմատի կինոթատրոն է: Անկախ ուղևորների քանակից, մեկ մեքենայի համար տոմսի արժեքը տատանվելու է 5-6 հազար դրամի սահմաններում: Ամեն օր մայրամուտից հետո հնարավոր կլինի երկու կինոսեանսի ներկա գտնվել: Կարևոր առավելություններից է այն, որ հանդիսատեսը կարող է ինքը որոշել ֆիլմը դիտել թարգմանությամբ, թե բնօրինակով:





Riverside-ը կեղակայվել է Հրապարակի կիրառում

Բանն այն է, որ ֆիլմի ձայնը պետք է որսալ սեփական մեքենայի ռադիոընդունիչի միջոցով և, հետևաբար, հնարավոր կլինի ընտրել լեզուն։

Հովհաննեսն ասում է. «Ֆիլմերի ընտրության մասով հիմնականում ես եմ զբաղվում, ունենք ոլորտի մասնագետ ընկերներ, որոնց հետ միշտ կարող ենք խորհրդակցել»։

«Կգան բոլորը, ովքեր կարոտել են մեծ կինոն, ովքեր սիրում են այն, ինչ մենք, ովքեր կարող են զգալ այս մթնոլորտն ու տրամադրությունը, այդպիսիք քիչ չեն։ Չենք բացառում, որ շուտով նման այլ կինոթատրոններ էլի կբացվեն Երևանում։ Դա մեզ միայն ուրախացնում է»,– ավելացնում է Բաբկենը։

Տղաները լիահույս են, որ շատ շուտով Riverside-ը կվերածվի այլընտրանքային ժամանցի հարթակի, որտեղ ներկայացված կլինեն տարբեր հաստատություններ։ Այս պահին Riverside-ին է միացել Simona կոկտեյլ բարը, տարածքում առկա է նաև Riverburg ապրանքանիշը, սպասվում են բազմաթիվ այլ նոր համագործակցություններ։ Ապագայում նախատեսվում է առանձնացնել հատված երեխաների համար և այդպիսով ծնողների կինոդիտումն էլ ավելի հանգիստ դարձնել։ Մոտ ապագայում կլինի նաև առանձին հատված առանց մեքենայի այցելուների համար, որտեղ ձայնի կարգավորումները կարվեն այլ տեխնիկական միջոցներով։ Տղաները չեն բացառում, որ ապագայում Riverside-եր կլինեն նաև Հայաստանի այլ քաղաքներում։

Սրճարաններից ու բարերից հոգնած

Կինոթատրոնը Երևանում բացելու ոգեշնչման մասին խոսելիս Արամն ասում է. «Փնտրում էինք ինչ-որ բիզնես ոլորտ, որը ֆինանսապես կապահովի մեզ ու նաև այլընտրանք կլինի Երևանի համար։ Համ գաղափարն էր հասունացել, համ էլ երկրի իրավիճակն էր թելադրում։ Բոլոր մոլորակները դասավորվեցին այնպես, որ սա կայանա»։

Հովհաննեսը պատմում է, թե ինչպես էր ինքը վերցնում նոթբուքը, մեքենան հարմար կայանում, օրինակ Ծիծեռնակաբերդի բարձունք տանող ճանապարհին ու հարմար տեղավորվում սիրելի ֆիլմերը դիտելու համար։ Ասում է. «Inception-ը տենց եմ նայել, դրսում էլ անձրև էր։ Ոչ մի կինոթատրոն ինձ նույն էմոցիաները չէր փոխանցի։ Միշտ էլ մտածել ենք Երևանում որևէ ալտերնատիվ ժամանցի հարթակ ստեղծելու մասին, տարբեր գաղափարներ կային, բայց, քանի որ երեքս էլ կինոման ենք, ես մի քիչ ավելի շատ,– ավելացնում է ծիծաղելով,– որոշեցինք, որ drive in կինոթատրոնն այն է, ինչ պետք է։ Սա թե՛ կոմերցիոն քայլ է և թե՛ գաղափարական։ Միտքը ծնվեց այն ժամանակ, երբ երկրում ու աշխարհում դեռ մի շարք փոփոխությունների սկիզբն էր, այլ իրավիճակ էր, պետք էր համահունչ քայլել, աղապտացվել և հանրության համար ժամանցի նոր տարբերակներ ստեղծել, ոչ ոք չգիտի, թե դա որքան կտևի։ Կարծում եմ, սա մեր կոմպետենտության շրջանակում է, մենք կարող ենք լավ ֆիլմ և լավ ժամանց առաջարկել հանդիսատեսին։ Բոլորս էլ հոգնել ենք բարերից, սրճարաններից ու ակումբներից»։

Սեր, խմի, կինո նայի

Drive in ֆորմատի հարմարավետությունն ընդգծելով՝ Բաբկենն ասում է. «Այստեղ դու քո հարմարավետության սահմաններում ես, քո մեքենան, քո ռադիոընդունիչը, ձայնի կարգավորումն ըստ քո ցանկության, կարող ես շարժվել ու նստել ինչպես որ ուզես, մինչև անգամ բարձրանալ մեքենայի վրա։ Չկա կողմնակի աղմուկ, փոխարենն ինքդ կարող ես ազատ զրուցել, քննարկել ֆիլմը ու չխանգարել մյուսներին։

Ընդ որում, այս ֆորմատն աշխատում է կլոր տարի, անկախ սեզոնից. անձրևին կամ ձյանը միշտ կարելի է միացնել դիմապակու խոզանակները, իսկ ամռանը բացել պատուհանը»։

Հովհաննեսն էլ գտնում է, որ պակաս կարևոր չէ, թե ինչ կարող ես ուտել կամ խմել կինոդիտման ընթացքում։ Դա էլ ժամանցի կարևոր մաս է համարում։ Հատուկ չատբոտի միջոցով պատվիրված սնունդն ու խմիչքը շատ արագ մոտեցվում է մեքենային։ Ընդ որում, ի տարբերություն այլ կինոթատրոնների՝ այստեղ թույլատրվում է նաև ալկոհոլը։ Եթե, իհարկե, չեք վարելու մեքենան։ Թեպետ մոտ ապագայում նախատեսվում է «սթափ վարորդ» ծառայություն ավելացնել, որ ղեկին նստածն էլ կարողանա խմել։ Այս ամենը տղաները համարում են փոքր, բայց կարևոր նախապայմաններ լավ ժամանցի ու հանգստի համար։

Մի խոսքով, գազ տվեք, կինոն շարունակվում է։

Համլիկ Բարխուդարյան
Riverside Drive-in Cinema

Ճ՛

Խորագրի գործընկերներ

KOOR IDBank idram

Հայկ Զալիբեկյան

Արմինե Մնիչյան

Աշոտ Մնիչյան

SNKH.

«Ճարտարապետությունը պիտի բզբզալու ֆունկցիան պահպանի»

TL Bureau արվեստանոցի հիմնադիր Հայկ Զալիբեկյանը շարունակում է զրուցել Երևանի լավագույն ճարտարապետների հետ: Հերթական հյուրը SNKH-ի հիմնադիրներ Աշոտ և Արմինե Մնիչյաններն են:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍՏՈՒԴԻԱ

Հիմա ո՞նց է ճիշտ՝ Էս-Էն-Քեյ-Է՞յչ, թե՞ Մնիչ:

Աշոտ. Արդեն սովորել ենք, որ բոլորն ասում են Մնիչ, մենք էլ ենք էդպես ներկայանում:

Երևանի ամենաերիտասարդ ճարտարապետական թիմերից եք: Ո՞ւմ միտքն էր: Ո՞նց ստացվեց, որ գնացիք էդ ռիսկին:

Աշոտ. Միտքն ընդհանուր էր: Մենք նույն կուրսից ենք եղել ու ուսանողական տարիներից միշտ ինչ-որ ընդհանուր գաղափարներ ունեինք ու էդ միտքը եփվում էր: Բացել ենք պաշտոնապես 2015-ին, բայց մի քիչ էլ որ հետ գնանք, 2014 թվի գարնանը ես աշխատանքից դուրս եկա...

Արմինե. ...Իսկ եթե մի քիչ էլ հետ գնանք, կլինի 2012-ը, երբ առաջին նախագիծն իրար հետ արեցինք:

Մի քիչ էլ ու կհասնենք ծննդյան տարեթվին...

Աշոտ. Համարենք 2015-ը, բայց:

24 տարեկանում բավական դժվար պիտի լինի, քանի որ ճարտարապետությունն իրոք մեծերի գործ ա, առնվազն փորձի առումով: Բայց ո՞ր պահն էր ամենադժվարը:

Աշոտ. Երևի բոլորի պես՝ առաջին երկու տարին, որովհետև հասկանում ենք, որ հետ ճանապարհ չկա, բայց սկզբունքներից էլ հետ չենք կանգնում ու ամեն պատվեր չենք վերցնում: Արդյունքում՝ հաճախ զրոյի վրա էինք մնում...

Արմինե. Լավագույն դեպքում զրոյի:

Ո՞ր պահն էր, որ ասեցիք՝ լավ, ստացվել ա:

Աշոտ. Դեռ չի եկել էդ պահը, ինձ թվում ա: Որովհետև երկար պրոցես ա, արագ չի լինում:

Բայց ուրեմն հետ գնալու ճանապարհ միշտ կա...

Աշոտ. Չէ, էդ ճանապարհը մտքում ա լինում կամ չի լինում: Մեր համար չկա, ինչքան էլ դժվար լինի, պիտի գնաս առաջ պատեր քանդելով:

Ի՞նչ պիտի լինի, որ ասեք՝ կայացած ենք:

Աշոտ. Երբ որ մենք ուսանող էինք, ամբիոնի վարիչ պարոն Գարի Ռաշիդյանը մեր նախագծերը տեսավ, ասեց՝ էս ի՞նչ եք արել, կարող ա՞ գլխիս Ռայթ (ամերիկացի ճարտարապետ Ֆրենք Լլոյ Ռայթ – խմբ.) եք դարձել, ես էլ մտա-

← Ապարտհոթել Դիլիզանում

ծեցի՝ բայց ինչի՞ չէ: Էդ օրվանից իմ գլխում նստած ա, որ միշտ պետք ա համեմատվել ամենաթոփերի հետ:
Արմինե. Դրա համար էլ մեր տեսանկյունից դեռ չենք կայացել:
Լավ, ուրեմն ովքե՞ր են ձեզ համար թոփերը:
Արմինե. Իմ սիրած ամենաօրինակելի ճարտարապետը... Պիանոյին (իտալացի ճարտարապետ Ռենցո Պիանո – խմբ.) շատ-շատ եմ սիրում, էնքան, որ կուզեի իմ քեռին լիներ: Ինքն իմ համար բարձրակետն ա: Ու էդ սերն ուսանողական տարիներից ա:
Աշոտ. Պիանոն մեծություն ա, իսկ ես կնշեմ ավելի քիչ հայտնի, բայց հրաշալի ստուդիա՝ իսպանական Selgas Cano-ն: Օրինակելի են իրանց մոտեցմամբ, կեցվածքով, խոսքով: Էն որ ամեն աշխատանքը նայելուց մտածում եմ՝ երանի մենք արած լինեինք: Ու ի դեպ, իրանք էլ են ամուսիններ:
Ֆինանսապես գոհ ե՞ք:
Արմինե. Նախ, մենք էդքան էլ որպես բիզնես չենք վերաբերվում, դա առաջնայինը չի եղել երբեք: Պրոդուկտ անելը, նոր բան ասելը, միտքն առաջ տանելը շատ ավելի կարևոր ա:

↑ Գրասենյակային շենք Երևանում

→ Բնակարան Երևանում

↙ Codix (նախկին Bibgek) ընկերության գրասենյակ

Անալիզ արեցինք, հասկացանք, թե ով ա մեր պոտենցիալ պատվիրատուն, ըստ դրա գնային սահման որոշեցինք ու էդ սահմանից դուրս համարյա դուրս չենք գալիս:

ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԸ

Լինում ա՞, որ բացում ենք մի տարի առաջվա նախագիծ ու մտածում՝ հիմա սենց չէի անի:
Արմինե. Ես աշխատում եմ անցողիկ գործերը չհիշել, իսկ էն նախագծերը, որ մեր համար եղել են շրջադարձային, այ դրանք հիմա էլ կարծում եմ կթողնեի նույնությամբ:
Էդ որո՞նք են:
Աշոտ. Համարյա վեց տարվա մեջ արել ենք մոտ 100 նախագիծ՝ շատ տարբեր չափի: Դրանց մեծ մասը, իհարկե, չի իրականացվել, բայց էդքանի մեջ ամենաառաջինները, որ իրականացվել են, մեզ շատ օգնել են ներկայանալ, ճանաչվել: Առաջինը փոքր ինտերիերներն էին՝ 23քմ մակերեսով բնակարան Պուշկինում, որն արել էինք համարյա անվճար, որովհետև չունեինք պորտֆոլիո:
Ինձ թվում ա՝ ես ձեր հետ ծանոթացել եմ Պուշկինի էդ բնակարանի շնորհիվ: Հիշում եմ, ես Մոսկվայում էի, երբ բոլորը շեյր էին անում, ես էլ տեսա, հետաքրքրվեցի ու արդեն Հայաստան գալուց հետո ծանոթացանք: Էնպես որ ապրեք, լավն էր:
Աշոտ. Մյուսը Codix-ի օֆիսն էր...
Արմինե. Առաջին նախագիծն էր, որի համար հատուկ եկել էին մեզ մոտ: Եկան, ասեցին՝ ուզում ենք, որ մեր դիզայնը դուք անեք: Մինչև էդ անում էինք անվճար պրոյեկտներ պորտֆոլիոյի համար, իսկ իրանք առաջինն էին, որ իրանք եկան:

ՓՈՂ

Շատերի մոտ կարծիք կա, որ Մխչյանները թանկ են վերցնում: Որտեղի՞ց էդ միտքը:
Աշոտ. Մենք էլ ենք լսել ու չենք հասկանում, թե որտեղից: Եթե համեմատենք ամենասկզբի հետ, մեր աշխատանքի արժեքի փոփոխությունը շատ մեծ չի, որովհետև մենք սկզբից հասկացանք, որ մի նիշա պիտի գտնենք ոլորտում ու տեղավորվենք մեջը: Դա հաստատ ոչ ամենաէժանն էր, ոչ էլ ամենաթոփը, որովհետև հասկանում էինք, որ էդ պահին էդ որակը չէինք էլ կարող տալ: Հետո արդեն մի քանի տարի աշխատելուց հետո անալիզ արեցինք, հասկացանք, թե ով ա մեր պոտենցիալ պատվիրատուն, ըստ դրա գնային սահման որոշեցինք ու էդ սահմանից դուրս համարյա դուրս չենք գալիս: Բայց եթե շատ ես ուզում թվեր, վերջին երկու տարին մենք չենք վերցնում պատվեր, որի արժեքը մի միլիոնից պակաս ա: Լինում են նաև փոքր ու անփող նախագծեր, բայց որոնք էնքան են գրավում, որ ուզում ես ուղղակի էնտուզիազմից ելնելով անես:

SNKH
Ճարտարապետական ստուդիան 2015 թվականին հիմնել են Աշոտ և Արմինե Մխչյանները: Այս ընթացքում հեղինակել են մոտ հարյուր նախագիծ: Նախնական շրջանում հիմնականում կատարել են ինտերիերային նախագծեր (վերջին խոշոր նախագծերից է «Զանգակ» գրատան Աբովյան փողոցի մասնաճյուղը), հետագայում կենտրոնացել հանրային տարածքների (Հրազդանի քաղաքային այգի, Էրեբունի զբոսայգի) և կառույցների վրա: 2019 թվականին արվեստանոցը հաղթել է Մոսկվայի «Գարաժ» ժամանակակից արվեստի թանգարանի ամառային կինոթատրոնի նախագծի մրցույթում: Կինոթատրոնի բացումը տեղի է ունեցել 2020 թվականի օգոստոսի 1-ին:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ՈՒ ԲՋԲՋՈՑՆԵՐ

Պետական կառույցների հետ աշխատելու փորձ ունե՞ք:

Աշոտ. Մի անգամ եղել ա շատ փոքր նախագծերի հետ կապված, ու վերջ:

Բայց պատրաստ ե՞ք:

Աշոտ. Ես չէ:

Արմինե. Նայած նպատակը, նախագիծը, ձևակերպումը: Եթե մոտեցումը լինի՝ արագարագ մի բան անենք, ցույց տալու համար, ապա՝ չէ: Ու դա ոչ միայն պետական կառույցներին ա վերաբերվում: Իսկ եթե իսկականից լավ բան ա ուզում պետությունը, կամ պատվիրատուն, մենք միշտ պատրաստ ենք: Չէ՞:

Իսկ ինչի՞ ա էսքան տխուր պետական նախագծերի իրավիճակը, ձեր կարծիքով:

Աշոտ. Պատվերների մեխանիզմից, կարծում եմ: Ինչքան ես տեղյակ եմ, հիմանականում ճարտարապետական տենդերներում հաղթում են ուղղակի ցածր գին առաջարկած մարդիկ: Եթե լիներ մրցույթ ու հաղթեր լավ ճարտարապետը՝ հարմար գնային առաջարկով, ինչ-որ բան կփոխվեր: Բայց չի կարելի ընտրել միայն ցածր գնով:

Մասնակցում ե՞ք նոր մրցույթներին՝ Ֆիրդուսի հայեցակարգի համար, օրինակ, որը պետական չի:

Աշոտ. Ֆիրդուսի դեպքում կարծում եմ կապ չունի, թե էս մրցույթի արդյունքում ինչ-որ բան կկառուցվի, թե չէ, որովհետև պատմության մեջ կան դեպքեր, երբ թղթային ճարտարապետությունը մեծ ազդեցություն ա թողել ճարտարապետական դիսկուրսի վրա, այսինքն կարելի ա անել նախագիծ՝ ի սկզբանե իմանալով, որ չի կառուցվելու, բայց դրանով ներկայացնել ինչ-որ հայեցակարգ, դրանով հրահրել երկխոսություն, քննարկումներ, կռիվներ և այլն: Ես կարծում եմ, որ ճարտարապետությունը պիտի բզբզալու ֆունկցիան պահպանի:

Ինչքան բզբզում ես, օգուտ չկա, ախր...

Արմինե. Չէ, չի կարելի էդպես՝ ոչ մի բան չանենք, մեկ ա ոչինչ չի փոխվելու:

Աշոտ. Տասը անգամ օգուտ չտա, կարող ա 11-րդ անգամ տա, փորձել միշտ պետք ա:

ԱՄՈՒՍԻՆՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Ո՞նց եք երկուսով աշխատում: Ասենք, բաժանում եք իրար մեջ՝ աթոռը ես, սեղանը՝ դո՞ւ...

Արմինե. Ուղղակի սկսում ենք խոսալ, ու սովորաբար սաղ թիմով ենք քննարկում, ոչ թե երկուսով: Հստակ բաժանումներ չունենք:

Աշոտ. Սովորաբար ինքնըստինքյան նախագծերի կուրացիան հավասար բաժանվում ա երկուսիս միջև: Այսինքն, վերջնական խոսքը նրանն ա, ով տանում ա կոնկրետ պատվերը, բայց քննարկումներն անում ենք միասին:

Այսինքն՝ չի եղե՞լ երբեք, որ մեկնումեկդ ընդհանրապես տեղյակ չլինի մյուսի նախագծից:

Աշոտ. Չէ, ոչ մի դեպքում: Եղել ա եզակի նախագիծ, երբ մեր աղջիկը նոր էր ծնվել ու Արմինեն գործի մեջ չէր: Բայց մնացած բոլոր դեպքում նախագծերը ընդհանուր են:

ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

Ի՞նչ կանեիք, եթե ձեզանից մեկը, կամ երկուսով, դառնար Երևանի գլխավոր ճարտարապետ:

Աշոտ. Կվերացնեի էդ պաշտոնը:

Ոնց հասկանում եմ, բոլորը էս հարցին նույն ձևի են պատասխանելու...

Աշոտ. Որովհետև էդ ամենաճիշտ պատասխանն ա, չպիտի տենց պաշտոն լինի:

Բա ինչ պիտի լինի:

Աշոտ. Պետք ա լինի ճիշտ քաղաքային ռեգլամենտ: Եթե լինի, էդ անձնավորված չինովնիկի պաշտոնը ինքնըստինքյան կվերանա: Ինչ հարց ա լուծելու գլխավոր ճարտարապետը, եթե քաղաքը հստակ պլանավորված ա:

Garage Screen

Մոսկվայի «Գարաժ» ժամանակակից արվեստի թանգարանն ամեն տարի հայտարարում է ժամանակավոր ամառային կինոթատրոնի բաց մրցույթ: 2019-ին Garage Screen-ի հաղթող ճանաչվեց SNKH-ի գաղափարը, որն ընտրվեց Ռուսաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից ու Հայաստանից ուղարկած 136 հայտից: Ճարտարապետներն առաջարկել են պատրաստել թեթև կարկաս, որը ներսից կպատվի կտորով: Հեղինակների խոսքերով, նախագծում արտացոլված են տարատեսակ ճարտարապետական ավանդույթներ, անուններ և ուղղություններ՝ բեդվինների թեթև կառույցներից մինչև Իվան Լեոնիդովի և Շիգերու Բանի աշխատանքները:

ՄՈՍԿՎԱ

Երևի թե ձեր ստուդիայի ամենամեծ ձեռքբերումներից մեկը անցյալ տարի Մոսկվայի Garage Screen մրցույթում հաղթելն էր: Ո՞նց որոշեցիք մասնակցել, ո՞նց տոնեցիք հաղթանակը:

Աշոտ. Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Մոսկվայից մեր ընկերներից մեկը մեսենջերով լինք ուղարկեց, ասեց՝ սենց մրցույթ կա, չեք ուզո՞ւմ մասնակցել, մենք էլ նայեցինք, ասեցինք՝ գոնե կարելի ա դիմել: Մեր համար շատ նոր ձև էր մրցույթի դիմելու: Պետք էր հավաքել պորտֆոլիո, հինգ րոպեանոց վիդեո նկարել արվեստանոցի մասին ու պատմել, թե ոնց ենք տեսնում նախագիծը, ինչի հիման վրա բոլոր մասնակիցներից ընտրվում էր վեց թիմ ու նոր էդ ֆինալիստները ստանում էին առաջադրանք ու ներկայացնում էին էսքիզային տարբերակը:

Մենք դիմումը տալուց մտածում էինք՝ դե եթե հանկարծ վեցի մեջ անցնենք, արդեն հաղթած ենք, կարելի ա ոչինչ չանել: Առանց դրա էլ «Գարաժը» հայտնի թանգարանը, նախագիծը Ռեմ Կուլխասն ա արել, էդ արդեն մեծ հաղթանակ էր: Դիմեցինք: Մի օր մեզ եկավ մեյլ, որ անցել ենք վեցի մեջ: Ասամ, հիստերիկ վազվզում ու թռվռում էինք:

Արմինե. Իսկ հենց անցանք վեցի մեջ, արդեն սկսեցինք մտածել, որ պետք ա փորձել հաղթել: Ու ստացվեց:

Հաղթանակի մասին իմացաք արդեն Մոսկվայում:

Աշոտ. Հրավիրել էին ֆինալիստներին Մոսկվա՝ նախագիծը ներկայացնելու, ոնց որ քննություն լիներ: Մտանք ներկայացնելու, նախորդ թիմը դուրս եկավ մեզ ընդառաջ: Տեսանք, որ շատ լարված են, ջղայն: Մենք էլ մտածեցինք՝ քաշվեցինք: Բայց ներսում նկատեցինք, որ բոլորի դեմքերը պայծառացան: Դիալոգ սկսվեց՝ սամ ինչի եք սենց արել, իսկ է՞ս: Ու էնքան երկար տևեց էս ջերմ քննարկումը, որ մեզ մենեջերը ստիպված խնդրեց ավարտել, որովհետև մյուս թիմն էր սպասում: Դե, ասեցին, շնորհակալություն, ցտեսություն:

Արմինե. Մենք համոզվեցինք, որ շատ լավ նախագիծ ենք արել: Որովհետև միշտ կա էդ կոմպելքսը, որ՝ դե չենք կարողանա Մոսկվայի նման որակով բան անել, բայց հերիք չի



← *Garage Screen ամառային կինոթատրոնը, Մոսկվա*

↑ Հայկ Զալիբեկյան, Արմինե Սնիչյան, Աշոտ Սնիչյան

լավն էր իրոք, համ էլ լավ ներկայացրեցինք: Շատ լավ տրամադրությամբ դուրս եկանք, ասեցինք՝ դե ապրենք մենք: Կարելի ա գնալ գինի խմել: Նստած խոսում ենք, քննարկում ենք, իսկ մյուս մասնակիցները բոլորը տխուր ու ջղայն են: Մեզ էլ տեսնում են ու զարմանում են, թե ինչի ենք մենք էդքան ուրախ: Արդեն մտածում ենք՝ գնանք մի քիչ ման գանք, որ երեկոյան թռնենք Հայաստան: Գնում ենք Բիայնային (Մխիչյանների դստեր – խմբ.) խաղալիք առնելու «Մանկական աշխարհից», մեկ էլ գալիս ա զանգ «Ստրելկայից» ու շատ շփոթված, ասում են հանկարծ չթռնեք, հետ եկեք «Ստրելկա», ղեկավարությունը ուզում ա ձեզ տեսնի: Աշոտը անջատում ա, աչքերը փայլում են: Տաքսի ենք բռնում, ճռցնում ենք հետ: Սկսեցին հավելյալ հարցեր տալ, արդեն դետալների մեջ խորանալ: Մենք շատ վստահ պատասխանում ենք, իրանք էլ էլի ասում են շնորհակալություն, ուրիշ ոչինչ չեն ասում ու մենք թռնում ենք:

Աշոտ. Մի շաբաթից արդեն զանգում են, ասում են՝ շնորհավոր, դուք հաղթել եք:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՈՒ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հիմա արդեն փորձ ունեք աշխատելու Մոսկվայում ու էստեղ: Շատ մ՞ տարբերվում աշխատանքի կուլտուրան:

Աշոտ. Ահռելի տարբերություն կա: Պատվիրատուի, շինարարի ու ճարտարապետի շփման կուլտուրան ա ռադիկալ տարբերվում: Իհարկե, ես հասկանում եմ, որ էնտեղ ամբողջ ոլորտի մասին չի կարելի ասել, ամեն դեպքում մենք աշխատում էինք ժամանակակից արվեստի թանգարանի հետ, համապատասխան շինարարների հետ: Երեկ խոսում էինք՝ գործը ավարտվում ա, ու արդեն սկսում ես էդ մարդկանց կարոտել:

Արմինե. Ամենակարևոր տարբերությունը էն ա, որ ճարտարապետի խոսքը էնտեղ շատ ավելի ա կարևորվում, քան մեզ մոտ՝ նույնիսկ հաշվի առնելով, որ էս նախագծի համար մենք բացարձակ անփորձ երիտասարդ ճարտարապետներ էինք: Համ պատվիրատուն, համ շինարարը շատ լավ հասկանում էին, որ գուցե ռեալ ոչ էլ պատկերացնում ենք, թե դա ոնց ա իրականացվելու: Թեև տրամաբանությունն ու փորձը մեզ օգնում էր, բայց նույնիսկ իրանք հաշվի առնելով մեր անփորձությունը՝ մեր ամեն խոսքը հաշվի են առել, ամեն լուծում մեր հետ քննարկելով ա արվել:

Նույնիսկ կարանտինի ժամանակ, երբ չէինք կարող թռնել Ռուսաստան, անընդհատ զանգում էին, ամեն գծի համար մեզ հարցնում էին, տեղեկացնում էին: Շատ հաճելի զգացողություն էր:

Ոչ ոք չի հետաքրքրվում ճարտարապետությամբ: Բայց եթե մենք Մոսկվայում սարքեինք հայկական եկեղեցի, դրա մասին կիմանար ամբողջ Հայաստանը:

ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՀԵՏՈ

Իսկ էդ հաղթանակից հետո զգում ե՞ք ինչ-որ փոփոխություն էստեղի պատվիրատուների կողմից:

Աշոտ. Դեռ շուտ ա, դեռ չենք զգում իրական արդյունքները էդ մրցույթի: Բայց քանի որ մենք ամենասկզբից շատ սկզբունքային մաղում էինք մեր պատվիրատուներին, վերջին առնվազն երեք տարին շանս չունենք բողոքելու ոչ մեկից, որովհետև բոլորը հրաշալի մարդիկ են: Եզակի դեպքեր են լինում, իհարկե...

Արմինե. Իրականում, գործերի երեսուն տոկոսից հրաժարվում ենք առաջին փուլից հետո:

Ինձ թվում ա էս տեսակի հաղթանակները պիտի շատ ավելի շատ քննարկվեն, քան էն, ինչ եղավ Հայաստանում, ուղղակի անցավ գնաց: Ձեզ գոնե որևէ մեդիա խոսացրե՞ց օրինակ:

Աշոտ. Կարծեմ մի հարցազրույց տվեցինք, ավելի լավ էր չտայինք:

Արմինե. Էստեղ ուղղակի դա ոչ ոքի չի հետաքրքրում:

Աշոտ. Դա մեզ ի՞նչ էր տալու:

Էն, որ մի երեխա տեսներ հեռուստացույցով, տեսներ, որ կարելի ա Հայաստանից էնպիսի բան անել, որ միջազգային մասշտաբի հաջողություն ունենաս: Ինձ ցավալի ա, որ էսպիսի բաները չեն արժևորվում:

Աշոտ. Դե դա արդեն խորքային խնդիր ա: Ոչ ոք չի հետաքրքրվում ճարտարապետությամբ:

Արմինե. Բայց եթե մենք Մոսկվայում սարքեինք հայկական եկեղեցի, դրա մասին կիմանար ամբողջ Հայաստանը:

Ըհը, ուրեմն ե՞րբ եք արտագաղթում:

Արմինե. Երբե՞ք:

Աշոտ. Եթե լուրջ, ապա եթե մենք ունենք սիրած աշխատանք ու էդ սիրած աշխատանքը արդյունքներ ա բերում, էս մրցույթի հաղթանակն էլ ամրապնդեց դիրքերը, ու մեզ մեր կյանքը բավարարում ա, էլ ինչի՞ համար արտագաղթենք, եթե էստեղ ունենք ինչ ուզում ենք:

Արմինե. Պատկերացնում ենք, որ կարելի ա դրսում աշխատել ու գալ, բայց չտեղափոխվել:

Աշոտ. Պարզ ա, որ ավելի դժվար ա էստեղից, բայց հնարավոր ա:

Հայկ Զալիբեկյան
Մնասյա Նարապետյան, ՏՆԿՀ



Մենք մերոնցով

Ինչպես համավարակի պատճառով փակվեցին սահմանները և մենք վերջապես սկսեցինք ազգովի ճամփորդել սեփական երկրով: Մնացինք մենք մերոնցով:

Թրևի խորհուրդներ

ԵՐԵՎԱՆի անձնակազմը սեփական փորձի հիման վրա հավաքել է մի քանի խորհուրդներ՝ Հայաստանով ճամփորդություն սկսելու համար:

ՉՈՐՍ ԱՆԻՎ

Հնարավորության դեպքում ճանապարհ ընկեք սեփական անիվներով: Միշտ էլ կարող եք փորձարկել գնացքի կամ ավտոստոպի տարբերակը, բայց մենք էլ, դուք էլ գիտենք, որ սկսնակ ճանապարհորդը դեռ վերջնական ընտրություն չի կատարել հարմարավետության և արկածախնդրության միջև: Ընտրեք բարձր ավտոմեքենա, որ տակը չքսեք, մեր ճանապարհներն ամենուր չէ, որ լավ վիճակում են (մահացու չի, բայց փորձեցինք՝ պետք չի):

ԿԱՆԽԻԿ ԳՈՒՄԱՐ

Եթե քաղաքային պայմաններում անցել եք քարտային վճարումներին ու թղթադրամին վերադառնալու ցանկություն չունեք, ուրեմն կարող եք մնալ և բացահայտել Երևանը: Մարզերում քարտ հազվադեպ են ընդունում, կանխիկացման տարբերակներն էլ շատ չեն: Նախապես հաշվարկեք ծախսերը և համապատասխան գումարը դրեք ձեր գրպանը՝ շոշափելի տարբերակով:

ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԼԱՐԵՐ

Վերցրեք ձեր հետ հեռախոսի լիցքավորիչը, փաուեր բենքը (եթե նախապես չեք լիցքավորել, հաշիվ չի): Հաստատ չեք ուզի, որ ամենակարևոր պահին ձեր հեռախոսն անջատվի, չկարողանաք նկարել կամ օրինակ՝ կորեք:

ԲՐԴՈՒՃ ՈՒ ՍՈՒՐՃ

Վերցրեք ձեզ հետ մինիմալ ուտելիք, բայց ոչ թե խանութից գնված «Մնիկերս» ու «Բաունտի», այլ մարդավարի բրդուճներ: Բնականաբար ճանապարհին կարող եք կանգնել, մտնել նույն «Գնթունիք», բայց, ի վերջո, հաղթում է նա, ով պատրաստված է: Եթե հանկարծ եղանակն արևից անցնի կատաղի անձրևի՝ հետո հաճելի կարկուտի, դուք ժամանակ չեք ունենալու փնտրել մի վայր, որտեղ կարելի է թաքնվել ու մի կտոր բան ուտել:
Օրինակ մենք, մնալով մեքենայի ներսում, կարկուտի դխդխկոցների տակ, ձվով ու կանաչեղենով բրդուճ էինք խեղդում ու թերմոսից տաք սուրճ խմում: Հա՛, ու չմոռանաք դանակը:

ՊԱՇՏՊԱՆՎԱԾ

Նախորդ կետի դեպքում կուշտ փորն ու հագեցված ծարավը միակ կարևոր կետերը չեն: Դուք առանց ցուցանակների կարող եք զգալ, որ մտել եք մեկ այլ մարզ՝ պարզապես հետևելով եղանակային փոփոխություններին: Ամեն վայրկյան մի մարզում կարող է անձրև գալ, մինչդեռ հարևանում՝ արևոտ ամառ է: Պարտադիր վերցրեք ձեզ հետ արևապաշտպան քսուկ ու անջրանցիկ վերարկու, նույն ինքը «դոժձևիկը»: Որոշ մարզերում նույնիսկ հնարավոր է այս երկուսի համադրության կարիքն ունենաք:

ՏԵՂԱԿԱՆ ԿՈԼՈՐԻՏ

Շփվեք տեղացիների հետ, երևի ճանապարհորդության ամենահիշվող ու արժեքավոր պահերն այդ մարդկանց հետ կապված կլինեն: Հատկապես երեխաները շատ անմիջականորեն ձեզ կբացահայտեն տվյալ գյուղի կամ համայնքի գաղտնիքները: Մինչև տեղական կաթն ու մածունը չուտեք, հետ չվերադառնաք, միշտ էլ կհասցնեք ուտել մեքենայի խցիկում հալած շոկոլադն ու աղի ձողիկները:

ԳԻՇԵՐԱԿԱՑ

Եթե գնում եք մարզեր մի նոր բան գտնելու, ապա հյուրանոցներում մնալն ամենալավ որոշումը չէ: Մնացեք տեղացիների BnB-ներում կամ լոկալ հյուրատներում: Եթե, միևնույն է, ընտրեք հյուրանոցային տարբերակը, գոնե մնացեք մի առանձնահատուկ վայրում: Գյումրիում դա կարող է լինել «Հայ Ասպետ» հյուրատունը կամ «Բեռլին Արտ» հյուրանոցը: Լոռիում կարող եք ընտրել COAF կենտրոնի «Կոնցեպտ» հյուրանոցը և մեծ զարմանք ապրել: Այստեղ անպայման կփորձեք շեֆ-խորհարար Ռուբենի ֆիրմային չրերից պատրաստված թանձրուկով հավը:

ՃԻՇՏ ՕՐ

Այս իրավիճակում էական չէ, թե շաբաթվա որ օրն եք ճանապարհ ընկնել, բայց առաջարկում ենք անել դա, օրինակ՝ երեքշաբթի: Այստեղ հոգեբանական պահ կա: Երբ շաբաթ-կիրակին ես տրամադրում ճանապարհորդելուն, անկախ քեզնից շտապում ես, քանի որ գիտես, որ այս հաճույքը կարճ կտևի, իսկ երբ շաբաթվա մեջ ես շարժվում, ճանապարհորդությունը հավակնում է դառնալ ամենօրյա կյանքի մի մասը ու միգուցե, երբ այս ամենը վերջանա, դուք ճանապարհորդելուն ավելի շատ ժամանակ տրամադրեք:

ԱՄԵՆԱԳՆԱՑ

«Դոժձևիկի» մասին արդեն ասացինք, բայց կարևոր են նաև հարմար կոշիկները: Կան հատուկ արշավային կոշիկներ, որոնք կհամապատասխանեն ցանկացած տեսակի ճանապարհորդությանը: Երբեմն թանկ արժեն, բայց ինձ հուշեցին, որ Սասունցի Դավիթ կայարանի գետնանցումում կարելի է միջին գնի ու որակի բավական լավ տարբերակներ գտնել:

ԱՌԱՆՑ ԳԱՌՆԻ-ԳԵՂԱՐԴԻ

Ճանապարհորդելու կոնտեքստում ձեր ժամանակի և բենզինի ծախսն արդարացված կլինի միայն այն դեպքում, եթե դուք մոռանաք զբոսաշրջային կատալոգում նշված հիմնական ուղղություններն ու գնաք դեպի քիչ բացահայտված վայրեր՝ ավելի տեղական փորձառությունների հետևից: Գառնի-Գեղարդ և Ամբերդ ուղղությունների փոխարեն գնացեք Աշտարակի «Այրուձիում» ձի քշելու, Սիսիանում Ուղտասարի ժայռապատկերները տեսնելու, կամ Լոռվա Դեբետ գյուղի «Դեբետ Լայֆում» մի երկու օր մնալու: Մենք գնացել ենք՝ չենք փոշմանել:

ՃԻՇՏ ՃԱՄՓԸՆԿԵՐ

Գնացեք լավ հետաքրքիր ու արկածախնդիր կերպարների հետ, հակառակ դեպքում ճանապարհի կեսը լարված եք լինելու, մյուս կեսն ականջակալներով քնելու եք: Իսկ եթե կարողանաք գտնել մի տեղացի բնակչի, որը ձեզ հետ կլինի ճանապարհորդության ընթացքում և ուղն ու ծուծով կբացահայտի տեղանքը, հաշվեք՝ նպատակին հասել եք:

ՆԿԱՏԵՔ

Հաճախ լինում է, որ լավ պահերից մեր հիշողության մեջ մնում է միայն այդ վայրկյանին ունեցած զգացողությունն ու ապրումները, ինչը լավ է, բայց հաճախ ուզում ես հիշել հստակ դեպքեր, մարդկանց ու ճիշտ պահին ճիշտ վայրում արված արտահայտություններ: Ձեզ հետ տետր ու գրիչ վերցրեք, ժամանակ գտեք այդ ընթացքում գրանցել կարևորը: Նույն տրամաբանությամբ հեռախոսի կամ ֆոտոխցիկի առկայությունը ևս լավ առավելություն է, բայց շատ չտարվեք, նայեք ձեր շուրջը:

Դիլիջանյան արկածներ

Ակտիվ տուրիզմ, էքսպրեսիվ զգայողություններ, աննկարագրելի բնության տեսարաններ, համեղ դիլիզանյան խոհանոց և անմոռանալի արկածներ: Ինչպես փոխվեց խորոված-բիսեդկա-կուկուռուզ դիլիզանյան եռամիասնությունը:

Քաղաքի հետ առաջին ձեռքսեղմումն արժե ունենալ Սրճարան #2-ում: Դիլիջանի #Կոֆեկենտրոնը դիմավորում է քաղաք մտնողներին ավտոկայանի մոտ: Դրական և ներդաշնակ միջավայր ունենալուց բացի Սրճարան #2-ը սոցիալական ձեռներեցության նախագիծ է, որն ուղղված է Դիլիջանի զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը, ինչպես նաև երիտասարդության սոցիալական գործունեության խթանմանը: Այստեղ բոլոր աշխատողները 14 և ավելի տարիքի երիտասարդներ են, և իրենց աշխատանքի շնորհիվ ձեռք են բերում նոր գիտելիքներ ու գործնական հմտություններ, որոնք հետագայում կարող են ծառայեցնել իրենց և իրենց իսկ տարածաշրջանի զարգացման համար:

Երբեմն Երևանից գալիս են Դիլիջան պարզապես այստեղ մեկ բաժակ սուրճ կամ թեյ խմելու համար (և փորձելու համեղագույն շոկոլադե թխվածքը), բայց մենք, իհարկե, առաջարկում ենք կանգ չառնել այստեղ և շարունակել ծանոթությունը Դիլիջանի հետ:

Սրճարանի խաղաքարտերից մեկը քաղաքային լճի ֆանտաստիկ տեսարանն է: Այնպես որ այստեղից հետո կարելի է շրջել ափով, լիարժեք զգալ բնությունը, վայելել դիլիջանյան մաքուր օդը (որը հետո դեռ երկար կկարոտեք տոթ Երևանում): Եթե սիրում եք կենդանիներ, կարող եք լճում ապրող ձկներին էլ կերակրել: Նրանք շատ շնորհակալ կլինեն:

Այնուհետև եկեք շարունակենք ճանապարհը դեպի Դիլիջանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն: Այստեղ կարելի է ստանալ զբոսաշրջային ընդհանուր տեղեկություններ, ամրագրումներ կատարել, ստանալ զբոսավարի ծառայություններ, հուշանվերներ գնել, վարձակալել հեծանիվ, վրաններ ու արշավային այլ պարագաներ, ինչպես նաև պատվիրել հատուկ տուրեր: Օրինակ՝ շատ հարմար է Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնից վարձակալել հեծանիվներ և Քաղաքային զբոսայգով մոտ 4-5 րոպեում հասնել «Վերև» պարանայգի՝ վայելելու ծառից ծառ արկածները:

← Սրճարան #2 լճի տեսարանով

↓ Դիլիզանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն

«Վերև» պարանայգի

«Վերևը» կատարյալ վայր է թե՛ մեծերի, թե՛ փոքրերի համար, ինչպես նաև ակտիվ սպորտի, էկոտուրիզմի և արկածասերների համար. մի խոսքով բոլոր նրանց համար, ովքեր փնտրում են աղրենալին, անմոռանալի արկածներ և վառ տպավորություններ: Հայաստանի և տարածաշրջանի ամենաերկար պարանայգին (ընդհանուր 445 մ երկարություն)՝ 4 տարբեր բարդության ուղիով և յուրաքանչյուրը 10-ական առաջադրանքով, ստիպում է մասնակցին զգալ իրեն ինչպես Լարա Քրոֆթը կամ Ինդիանա Ջոնսը կամ էլ Սարդ-մարդը (կախված սեռից և կինոնախասիրություններից): Ուղիները նախատեսված

են տարբեր տարիքի մասնակիցների համար (սկսած 6 տարեկանից և 120 սմ հասակից)։ Կա նաև ժայռամագլցման պատ՝ նախատեսված 4 տարեկանից բարձր այցելուների համար։
Իսկ «Ներքև»-ում, որը պարանայգու կից սրճարանն է, քեզ են սպասում ընկերներդ, 1 գավաթ սառը սուրճը, զովությունն ու լավ տրամադրությունը։ Այգին, ի դեպ, միայն այս հնարավորություններով չի սահմանափակվում։ Այն վերջերս ամբողջությամբ արդիականացվել է, բարեկարգվել, համալրվել նոր ժամանակակից կարուսելներով, զինվել բասկետբոլի խաղադաշտով, բացօթյա ամֆիթատրոնով և թենիսի սեղաններով։ Այգու ամբողջ տարածքը դարձել է հեծանվորդների լավագույն մարզվելու տեղը քաղաքում։ Այլ կերպ ասած, Դիլիջանի քաղաքային զբոսայգում կարելի է անցկացնել ժամեր, եթե ոչ մի ամբողջ օր։

→ Թոմի տներ

«Տուն Արմենի» հյուրատուն և ռեստորան

← MADE-ի աշխատանքներից

Կարևոր հավելում. պարանայգուց և կարուսելներից ստացված հասույթը հատկացվելու է Քաղաքային զբոսայգու հետագա բարեկարգմանը և քաղաքում այլ զարգացման ծրագրերի իրականացմանը։
Իսկ այսքան ակտիվությունից հետո արդեն կարելի է մտածել գիշերակացի մասին և ուղևորվել «Տուն Արմենի» հյուրատուն և առանձնատներ (Թոմի տները), որոնք, գտնվելով Դիլիջան քաղաքի հենց սրտում, չեն խանգարում կտրված լինել քաղաքի աղմուկից։ Իմիջիայլոց, «Տուն Արմենի» հյուրատունն արդեն մեկ տարի է համալրվել է ավանդական/տեղական ուտեստների ռեստորանով։ Ռեստորանի ճաշացանկի գլխավոր զարդերը, ասում են, տապակած կարտոֆիլն է ուրցով և գաթան։ «Տուն Արմենի» հյուրատուն-ռեստորանից բացվում է այնպիսի մի տեսարան, որը թույլ է տալիս ծանոթանալ քաղաքի տեսարժան վայրերին, հանգստանալ ծառերի գրկում կամ ուղղակի վայելել Դիլիջանի անկրկնելի բնությունը։
Իսկ հաջորդ օրը՝ Երևան վերադառնալուց առաջ, չմոռանաք մտնել MADE։ Դա արվեստների և արհեստների կենտրոն է, որտեղ տեղացի տաղանդավոր արվեստագետներն ու արհեստագործները, միմյանց օգնելով, ստեղծագործում և միջազգային շուկա են հանում իրենց ձեռագործ աշխատանքները։ Զբոսաշրջիկները կարող են իրենց աչքով հետևել այն ամենին, ինչ ստեղծվում է MADE-ում, նույնիսկ մասնակցել պրակտիկ աշխատանքներին։ Այստեղ հաճախ են կազմակերպվում վարպետության դասեր, որոնք էլ ավելի հետաքրքիր են դարձնում այցը Դիլիջան։

Էլ ինչ է պետք, սրի՛ Դիլիջան – եղանվ, Ջան

Այս ամենն առաջարկվում է Դիլիջանի զարգացման ծրագրի կողմից։ Ծրագիրն իրականացվում է «Զբոսաշրջության և քաղաքաշինության» բարեգործական հիմնադրամի (TUF) կողմից, որը 2020 թ.-ի հուլիսից ստանձնել և իրականացնում է «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի զբոսաշրջության և քաղաքաշինության զարգացմանը միտված բոլոր ծրագրերը։ Այս ծրագրերի փաթեթը ներառում է նաև Տաթևի, Գյումրիի, Արցախի և Երևանի զարգացման նախաձեռնությունները։ Հիմնադրամը մշակում է զբոսաշրջային և քաղաքաշինական նորարար ծրագրեր, խթանում է տարածքային կայուն զարգացմանն ու դիրքավորում Հայաստանը համաշխարհային քարտեզի վրա՝ որպես մրցունակ զբոսաշրջային երկիր։

Արեգ Դավթյան
ՍՈՐՖ

«Տաթևեր». 10-ամյակ

Հայաստան այցելող յուրաքանչյուր 5-րդ զբոսաշրջիկ այցելում է միջնադարյան Հայաստանի ամենահայտնի հոգևոր, մշակութային և լուսավորչական կենտրոններից մեկը՝ 9-րդ դարում կառուցված Տաթևի վանական համալիր: Այցելությունը Տաթև անմոռանալի ուղևորություն է յուրաքանչյուր զբոսաշրջիկի համար և այս տարի սպասվում է միլիոնեորոդ հյուրի այցելությունը «Տաթևեր» ճոպանուղի. ներկայացնում ենք վերջին տարիների խոշորագույն զբոսաշրջային նախագծի գլխավոր բաղադրիչները:

ԴՈՆՈՐՆԵՐ

«Տաթևի վերածնունդ» ծրագրի համահիմնադիրներն են Ռուբեն Վարդանյանն ու Վերոնիկա Զոնաբենդը: Տասը տարվա ընթացքում ծրագրին աջակցություն է ցուցաբերել շուրջ 160 դոնոր, որոնց թվում են Նուբար և Աննա Աֆեյանները, Դանիել Խաչատուրովը, Գոռ Նահապետյանը, Միխայիլ Կուսնիրովիչը և այլոք: Ընդհանուր առմամբ՝ 10 տարվա ընթացքում «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակում կատարվել է 37 միլիոն դոլարի ներդրում:

← Ս. Գրիգոր Նարեկացի, Մեկնություններ սաղմոսների, առակների, Երգ երգոցի, 1449 թ.

Հայաստանում շատ են գեղեցիկ վանքերը, բայց Տաթևի ընտրությունը պատահական չէ: Նախկինում Սյունիքի մարզի զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող այս հատվածն ամենավատ վիճակում գտնվողներից էր՝ գործազրկության ամենամեծ ցուցանիշով և հաջողության հասնելու նվազագույն հնարավորությամբ: Ինձ համար սա անձնական և ամբիցիոզ մարտահրավեր էր: Հանկարծ ես հասկացա, որ եթե հաջողության հասնեմ այս տարածաշրջանում, ես կկարողանամ բազմապատկել այն այլուր:

Ռուբեն Վարդանյան
«Տաթևի վերածնունդ» ծրագրի համահիմնադիր

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ

Հայաստանի ամենահայտնի և խորհրդավոր վանական համալիրներից մեկը կառուցվել է 9-10-րդ դարերում, թեև համալիրի տարածքում դեռ 4-րդ դարից գործել է եկեղեցի: Մինչև 19-րդ դարը վանքը հանդիսացել է խոշորագույն հոգևոր, մշակութային և լուսավորչական կենտրոն: 1722-30 թվականներին Տաթևը եղել է Սյունիքի ազատագրական պայքարի, իսկ 1919-21 թվականներին՝ Զանգեզուրի ինքնապաշտպանության կարևոր օջախներից մեկը (Տաթևի վանական համալիրից դուք կարող եք տեսնել այն տեղանքը, որտեղ Գարեգին Նժդեհը պարտության է մատնել բոլշևիկներին):
1931 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով վանական համալիրի կառույցների զգալի մասը հիմնովին ավերվել է: Մեզ այժմ հայտնի տեսքով Տաթևը վերականգվել է 1970-ականներին մեկնարկած վերականգման աշխատանքների շնորհիվ: Վանական համալիրի վերջնական վերականգնումը «Տաթևի վերածնունդ» ծրագրի առանցքային կետերից մեկն է:
Ձիթհանը վանական համալիրի առաջին ճարտարապետական հուշարձաններից է, որը վերականգնվել է 2010 թ.-ին և մինչ օրս բաց է այցելուների համար: Այնուհետև վերակագնվել են համալիրի հյուսիսային մուտքն ու աղբյուրը, իսկ 2018 թ.-ին տեղի է ունեցել վերականգնված Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաբացումը (համալիրի եկեղեցիներից ամենափոքրը):
Վերականգման հաջորդ փուլերում կընդգրկվեն համալիրի մյուս կառույցները:
Հոգևոր-մշակութային կյանքի վերածնունդը վանական համալիրում ևս մեկ կարևոր բաղադրիչ է: Այս 10 տարվա ընթացքում Տաթևի վանական համալիրում կազմակերպվել են տարատեսակ համերգներ, կրթական և մշակութային միջոցառումներ, որոնց թվում են Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի, «Հովեր» երգչախմբի, Կոմիտասի անվան պետական լարային քառյակի, Մարսելի Musicatreize անսամբլի և Ֆրանսիայի ռադիոյի (Radio France) համերգները և այլն:

ԹԱՆԳԱՐԱՆ

2019 թվականի հոկտեմբերին Տաթևի վանական համալիրում թանգարանի է վերածվել 3 սրահ: Թանգարանի մուտքի դիմաց 1304 թվականին վանքի հոգևոր առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոս Օրբելյանին նվիրաբերած զանգն է: Սրահի ներսում ներկայացված են վանական համալիրի պատմական ցուցանմուշները, որոնց մի մասը հայտնաբերվել է «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակում կատարվող վերականգման աշխատանքների ընթացքում, իսկ մի մասը տրամադրել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:
Դրանց թվում են մի շարք խաչքարեր, ափսեներ, մոմակալներ, ծիսական զարդեր, բուխարու մասեր, 18-րդ դարի պնակներ՝ վրան արձանագրություններով, վանքի դռան հին բանալին, 1087 թ.-ին կառուցված Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի մետաղյա խաչը և Մատենադարանի 4 պատմական ձեռագրերի կրկնօրինակներ:

«Տաթևի վերածնունդ» ծրագիրն իրականացվում է «Զբոսաշրջության և քաղաքաշինության» բարեգործական հիմնադրամի (TUF) կողմից, որը 2020 թվականի հուլիսից սրանցնել և իրականացնում է «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի զբոսաշրջության և քաղաքաշինության զարգացմանը միտված բոլոր ծրագրերը: Այս ծրագրերի փաթեթը ներառում է նաև Դիլիջանի, Գյումրիի, Արցախի և Երևանի զարգացման նախաձեռնությունները: Հիմնադրամը մշակում է զբոսաշրջային և քաղաքաշինական նորարար ծրագրեր, խթանում է կարածքային կայուն զարգացմանն ու դիրքավորում Հայաստանը համաշխարհային քարտեզի վրա՝ որպես միջուկակ զբոսաշրջային երկիր:

ՃՈՊԱՆՈՒՂԻՆ

«Տաթևեր» ճոպանուղին ոչ միայն աշխարհի ամենաերկար հետադարձելի ճոպանուղին է, այլև Հայաստանի այցեքարտերից մեկը: 2010 թվականից ի վեր գործող «Տաթևեր» ճոպանուղին գրանցված է Գինեսի ռեկորդների գրքում ոչ միայն որպես աշխարհի ամենաերկար (5752 մ) հետադարձելի ճոպանուղի, այլև որպես ամենակարճ ժամանակահատվածում (10 ամիս) կառուցված ճոպանուղի: Նախագիծն իրականացրել է ճոպանուղիների կառուցման ոլորտի համաշխարհային առաջատար ավստրո-շվեյցարական «Doppelmayr/Garaventa» ընկերությունը:
Ճոպանուղով կարելի է «Հալիձոր» կայանից 12 րոպեում հասնել Տաթևի վանական համալիրի տարածք, ինչը շատ ավելի արագ է, քան Որոտանի կիրճով անցնող ճանապարհը:
Ճախրելով կիրճի վրայով՝ օդախցիկը հասնում է իր առավելագույն բարձրությանը՝ 320 մետրի: Երբ առաջին օդախցիկը հասնում է «Տաթև» կայան, երկրորդը ժամանում է «Հալիձոր» կայան: Երբ «Թևերը» վերբեռնվում են, սկսվում է հետադարձ ճանապարհը: Ամեն օդախցիկում տեղավորվում է 30 ուղևոր և մեկ ուղեկցորդ, իսկ ճոպանուղու թողունակությունը ժամում 240 ուղևոր է (թեպետ կորոնավիրուսային համաճարակի պատճառով այժմ մեկ օդախցիկից կարող է օգտվել միաժամանակ 10 ուղևոր):
Արդյունքում «Տաթևեր» ճոպանուղին խթանեց Հայաստանի և տարածաշրջանի զբոսաշրջային գրավչությունը՝ հեշտացնելով այցելուների մուտքը դեպի պատմական վանք և ինքնին դառնալով զբոսաշրջային տեսարժան օբյեկտ: Մյուս կողմից՝ այն խթանեց լոկալ աշխատատեղերի ստեղծումն ու դարձավ հարմարավետ, մատչելի տրանսպորտային միջոց նաև Տաթևի շրջակա համայնքների բնակիչների համար (մի քանի անգամ ավելի էժան՝ 500 դրամ, քան հյուրերի համար):

ՌԵՍՏՈՐԱՆ, ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆ, ՏՈՒՐԵՐ

Ճոպանուղուց և վանական համալիրից ստացած անմոռանալի տպավորությունները թերի կլինեին, եթե տեղում չստեղծվեին հանգստի և ժամանցի գոտիներ: Նույնիսկ մեկօրյա այցի ժամանակ ոչ մի զբոսաշրջիկի չէր խանգարի Տաթևի ավանդական խոհանոցը ներկայացնող ճաշն ու անուշաբույր սուրճը Տաթևի չքնաղ բնության, դեպի վանքը սավառնող ճոպանուղու և Որոտանի կիրճի համայնապատկերի մեջ:
«Տաթևատուն» ռեստորանը գտնվում է «Հալիձոր» կայանի հարևանությամբ, և այստեղից այցելուների առջև բացվում է Որոտանի կիրճի հրաշալի տեսարանը: Ռեստորանն առաջարկում է ինքնատիպ տեսականի և համառորեն պահպանում է հայկական խոհանոցի յուրօրինակ բաղադրատոմսերը:
«Տաթևեր» առանձնատունը գտնվում է Որոտանի գեղատեսիլ կիրճի եզրին՝ Հալիձոր գյուղի սրտում, որտեղից 30 րոպե զբոսնելով կարելի է հասնել «Տաթևեր» ճոպանուղու «Հալիձոր» կայան: Այս հարմարավետ առանձնատունը, որը նախկինում եղել է գյուղական բնակելի տուն, իր չորս սենյակներում՝ երկու մեկտեղանոց և երկու երկտեղանոց, կարող է ընդունել մինչև 6 հյուր: Առանձնատունն ունի բացօթյա հանգստի գոտի, լողավազան, խոհանոցային պարագաներ, հաղորդակցության միջոցներ և աննկարագրելի գեղեցիկ տեսարան: Ի լրումն՝ հնարավոր է կազմակերպել նախաճաշի առաքում «Տաթևատուն» ռեստորանից:
Չմոռանաք այցելել նաև կայանի կողքի հուշանվերների խանութը: Այստեղ կարող եք ձեռք բերել «Տաթևերի» բրենդավորված և տարատեսակ ձեռագործ հուշանվերներ, որոնք դեռ երկար կհիշեցնեն «Տաթևեր» ճոպանուղու թռիչքի և միջնադարյան Տաթևի մասին:
Տարածքում ձեզ նաև «Wheels of Tatev» Տաթևի ջիպ-տուրերն են սպասում: Ցատկեք Տաթևի ջիպն ու միասին բացահայտենք Հին Հալիձոր, Հին Շինուհայր ու Հին Խոտ գյուղերը: Անմոռանալի արկածները երաշխավորված են:

«Ժամանակին թվում էր, թե ճոպանուղու գաղափարը և այս գյուղերի զարգացման գաղափարը չափազանց հանդուգն են, բայց այսօր հենց այսպիսի նախագծեր են անհրաժեշտ Հայաստանին աշխարհում իսկապես մրցունակ լինելու համար: Պետք է սկսել խոշոր մի նախաձեռնությունից իրական հաջողության հասնելու համար»:

Նուբար Աֆեյան
«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիր

↓ Մոսթկի մանկական երգչախումբն ամեն տարի հանդես է գալիս համերգներով Մոսթկում, Երևանում և այլ մարզերում

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Տաթևերի» կարևորագույն նպատակներից մեկն էր նաև համայնքի ակտիվացումը: Զբոսաշրջային հոսքը թույլ տվեց տեղացիներին մասնակցություն ունենալ գործընթացների մեջ: Նախ, «Տաթևի Վերածնունդ» ծրագրի և պետական-մասնավոր սեկտոր համագործակցության շրջանակում կառուցվեց Տաթև տանող ճանապարհը: Այնուհետև աշխատանք տարվեց ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ՝ Սվարանց գյուղում բարեկարգվեց 500 մետրից ավելի երկարությամբ վնասված խողովակաշարը և վերականգնվեց մշտական ջրամատակարարումը, Տաթև գյուղում տեղադրվեցին աղբամաններ, իսկ Տանձատափի փողոցներում՝ լուսադիոդային էներգախնայող լամպեր:

Ստեղծվեց Տաթևի մանկական երգչախումբը, որն ամեն տարի հանդես է գալիս համերգներով Տաթևում, Երևանում և այլ մարզերում: Նույնիսկ 2018-ին ունեցան համատեղ համերգ Ֆրանսիական Musicatreize և Ֆրանսիայի ռադիոյի պատանեկան երգչախմբերի հետ:

Զարկ տրվեց B&B տեսակի հյուրատների զարգացմանը. իրականացվեց հյուրատների սեփականատերերի վերապատրաստում՝ ցուցաբերելով նրանց համակողմանի աջակցություն: Արդյունքում ստեղծվեց 20-ից ավելի հյուրատուն, որոնց մասին տեղեկությունները կարելի է գտնել հատուկ մշակված tatevbnb.am կայքում:

Տեղացիներից շատերն էլ ներգրավվեցին դպրոց-արհեստանոցների նախագծում, որի շնորհիվ զբոսաշրջիկներն այժմ կարող են գնել հուշանվերներ տասնյակ վարպետներից:

Այս 10 տարվա ընթացքում, շնորհիվ զբոսաշրջային հոսքի ակտիվացման, Տաթևի շրջանում և Գորիսում բացվեցին 100-ից ավելի հյուրանոցներ և B&B տեսակի հյուրատներ:

Արեգ Դալիթյան
«Զբոսաշրջության և խաղաղաշինության» բարեգործական հիմնադրամ

Թեմատիկ տուրեր

Եթե ամենուր եղել եք և ամեն ինչ փորձել, նշանակում է պետք են նոր, անսպասելի ճամփաներ: «Իմ Հայաստան» ծրագրի հետ համատեղ պատրաստել ենք չորս թեմատիկ տուր, որոնք կօգնեն նորովի բացահայտել հայտնի տեղերը:

ՄԵՂՐ

Քաղցրահամ ճանապարհ:



ՏԵՍՆԵԼ ՄԵՂՎԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Եղեգնաձորի թանգարանն ունի շուրջ 9000 նմուշ՝ նախնադարից մինչև 20-րդ հարյուրամյակ: Դրանց մեծ մասն այս կամ այն կերպ ներկայացնում են տարածաշրջանի պատմությունը՝ բրոնզե և քարե դարի գործիքները, զարդեր, խեցեղեն, գորգեր և այլն: Թանգարանի գլխավոր աստղը, թերևս, հռչակավոր Մոմիկի՝ 14-րդ դարի խաչքարն է: Բայց ոչ պակաս ցնցող է նաև 19-րդ դարից պահպանված մեղվի փեթակը (տեղի բարբառով՝ մոլոգ): Ուռենու դալար ճյուղերից հյուսված այս փեթակը հայտնաբերվել է Շատին գյուղում: Այստեղից էլ արժե սկսել մեղրային ճամփորդությունը:

ՍԵՓԱԿԱՆ ՁԵՌՔԵՐՈՎ ՀՅՈՒՍԵԼ ՓԵԹԱԿ «ԵՂԵԳՈՒՄ»

Վայոց ձորի Արփա գետի ափերին աճող ուռենու ճյուղերը վարպետ Արթուրի ձեռքերում փափկում և ճկվում են՝ դառնալով հյուսված զամբյուղներ: Այս բնական հումքով պատրաստված զամբյուղները կարող են օգտագործվել ինչպես տան զարդարանքի համար, այնպես էլ կենցաղում՝ որպես կարասների և գինու շշերի կաղապարներ, հացամաններ կամ պահեստավորման դարակներ:
Արթուրը նաև հետաքրքրվում է, թե ինչպես է իր արհեստն օգտագործվել հին ժամանակներում: Եղեգնաձորի թանգարանում նա տեսել և վերարտադրել է ճյուղագործ մեղվի փեթակները: Եվ այժմ օգնում է բոլոր հյուրերին նույնպես յուրացնել այդ արհեստը: Սեփական ձեռքերով հյուսված զամբյուղները, իհարկե, կարելի է տանել տուն:

ՄԵՂՐՈՎ ՓԱԽԼԱՎԱ ՎԱՅԵԼԵԼ «ՄԻՐՀԱՎՈՒՄ»

Փախլավայի հայրենիքի կոչման համար արդեն դարեր շարունակ կռիվ են տալիս տարածաշրջանի շատ երկրներ: Մեր կարծիքով կարևոր չէ, թե որտեղ են հորինել, այլ որտեղ են համեղ պատրաստում: Եվ Գորիսն այս դեպքում հաստատ կլինի առաջատար դիրքերում: «Միրհավ» հյուրանոց-ռեստորանի գլխավոր մենեջեր Գայանեն հյուրասիրում է գյուղում ապրող իր մորաքրոջից ստացած բաղադրատոմսով պատրաստվող փախլավան: Հաջողությունն այնքան մեծ է, որ «Միրհավը» շատերը ճանաչում են հենց այս ֆիրմային քաղցրավենիքով: Կարելի է ենթադրել, որ շռնդալից հաջողության գրավականներից մեկը Գորիսի սարերում արտադրվող բնական մեղրն է:
Եվ որ ամենակարևորն է, այս փախլավան կարելի է ոչ միայն պատվիրել, այլև պատրաստել սեփական ձեռքերով (հետո անպայման ուտել):

↓ 19-րդ դարի մեղվաբույնը՝ Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում

ՄԵՂՐԱՄՈՄՈՎ ՁԵՌՔԻ ՔՍՈՒԿ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԵՂԵՎՆՈՒՏՈՒՄ

Մեղվապահության հետ կապվող ժողովրդական ավանդույթների մի մեծ փունջ կապվում է մեղրամոմի օգտագործման առողջապահական հատկանիշների հետ: Դարեր շարունակ այն օգտագործել են ամենատարբեր առողջական խնդիրների դեմ պայքարելիս: Դրանք շատ լավ հիշում է 50 տարվա փորձ ունեցող մեղվապահ Գրիշա պապը: Իսկ նրա հարս Անուշը, հենվելով վերքերի ու մաշկի ճաքերի բուժման համար մեղրամոմի գործածման ժողովրդական ավանդույթի վրա, ստեղծել է մի քսուկ, որը զգալի արդյունավետությամբ գործածվում է ոտքի թաթի տարբեր հատվածների բուժման համար: Ժամանակին մեղրամոմը հալեցրել են ու կաթեցրել մաշկի վրա բացված ճաքերի վրա, ինչը բավական ցավոտ է եղել: Իսկ Անուշը կատարելագործել է այդ եղանակը: Նա հալեցրած մեղմամոմին ավելացնում է արևածաղկի և ձիթապտղի ձեթեր, չիչխանի կամ այլ եթերայուղեր: Դրանք օգնում են, որ մեղրամոմը փափկի ու ձեռք բերի մածուցիկ հատկություն: Այս քսուկը շատ ավելի հարմար է գործածելը: Նախ, չի ցավեցնում բուժվող վերքը և ավելի արդյունավետ է բուժական առումով: Քսուկը կարելի է օգտագործել նաև մաշկի խմանքի նպատակով: Այն մաքրում է մաշկը և տալիս դրան թավշյա փափկություն:

↑ Եղևնուտի մեղրամոմով քսուկը

ՄԵՂՐԱՄՈՄԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼ «ՍԻՍԻԱՆ ԿԵՐԱՄԻՔՍՈՒՄ»

«Սիսիան Կերամիքսը» հիմնադրել են կավագործ վարպետ Վահագն Համբարձումյանը և նրա կինը՝ նկարչուհի Զարա Գասպարյանը: Այսօր նրանք աշխատում են միասին Հայաստանի հարավում՝ զարգացնելով և պահպանելով կավագործության հայկական մշակութային ժառանգությունը: «Սիսիան Կերամիքսն» ուսումնասիրում է հայ խեցեգործության արմատները, հնագույն տեխնոլոգիաները և դեկորատիվ արվեստի տեսակները: Արհեստանոցի այցելուները կարող են տեսնել, թե ինչպես է Վահագնը կավե իրը տաքացնում 100-120 աստիճան, նույն ջերմաստիճանում հալեցնում նաև մեղրամոմը, բարակ շերտով քսում է վրան, իսկ ներսից լցնում ու արագ դատարկում է: Նպատակն առարկան ջրադիմացկուն դարձնելն է ու ոչ միայն. մեղրամոմը կանխում է կավի ներծծող հատկությունը և ավելի գեղեցիկ դարձնում իրը: Բացի այդ, մեղրամոմով ծածկված իրն ավելի հեշտ է լվացվում:

← Վարպետ Արթուր Պետրոսյանը

↓ Վարազդատ Ասատրյանի զարդերը

ՄԵՂՎԱՆՄԱՆ ԶԱՐԴԵՂԵՆ ԳՆԵԼ

Եվ վերջում կարելի է տուն վերադառնալ՝ այցելելով Ռինդ գյուղ և գնելով Վարազդատ Ասատրյանի՝ մեղվաբների կառուցվածքից ոգեշնչված զարդերը: Պատահական չէ, որ նրա ստեղծած բրենդի անվանումը կարելի է թարգմանել որպես «Մեղվարվեստ»: Bee Art Exclusive-ի հավաքածուների մեջ զուգորդվում են այնպիսի բնական նյութեր, ինչպիսիք են փայտը, թանկարժեք քարերն ու մետաղները: Արդյունքը՝ համահունչ համադրված յուրօրինակ մատանիները, օղերն ու կախազարդերն են:

ԲՈՒՐԴ

Ոչխարի բրդից մինչև նրբագեղ գորգեր

↓ Գորիսի երկրագիտական թանգարանի գորգերից մեկը, Սյունիք-Արցախ, 20-րդ դար

ՀԻԱՆԱԼ ԳՈՐԻՍԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՈՐԳԵՐՈՎ

Սյունիքի մարզի առաջին թանգարանը, որ բացվել է 1948-ին (այն ժամանակ՝ լքված եկեղեցու շենքում), այժմ գտնվում է Գորիսի կենտրոնում՝ գլխավոր հրապարակին հարակից տարածքում: Գողտրիկ շենքը կարող է չնկատվել առաջին փորձից, բայց թանգարանի հավաքածուն միանշանակ արժե տեսնել: Ֆոնդերի զարդերն են խորհրդային կենցաղի հավաքածուն և վաղ բրոնզե դարից մի քանի տպավորիչ նմուշ՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի հնգադեմ կուռքը և մ.թ.ա. 7-րդ դարի բրոնզե առյուծը:
Բայց բրդուղու կոնտեքստում մեզ առաջին հերթին հետաքրքրում են գորգերը: Թանգարանում կա շուրջ երեք տասնյակ նմուշ՝ 18-20-րդ դարերից: Հատկանշական է, որ Սյունիքը մինչ օրս հայաստանյան գորգագործության կենտրոններից է: Ի դեպ, համավարակի օրերին թանգարանի գորգերից մի քանիսը դուրս էին բերվել փողոց, որպեսզի արտակարգ դրության պատճառով փակված դռները չխանգարեն դրանք տեսնելուն:

ՏԵՄՆԵԼ ԲՐԴԻՑ ԿԱՐՊԵՏ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒՄԸ ՇԻՆՈՒՀԱՅՐՈՒՄ

«Բրդից կարպետ»-ը Կանանց զարգացման Ռեսուրս Կենտրոն հիմնադրամի սոցիալական նախաձեռնություններից մեկն է, որն իրականացվում է Սյունիքի մարզի Շինուհայր համայնքում: Տեղի 43 կանայք ներգրավված են բրդի և թելի մշակման, կարպետագործության, և բրդյա աքսեսուարների ու տան պարագաների ստեղծման աշխատանքներում: Օգտագործելով բրդի բնական երանգները՝ կանանց խումբը վերականգնում է հին հայկական նախշերն ու նմուշները: Հյուրերը, բնականաբար, ոչ միայն կարող են հետևել ընթացքին, այլև ինքնուրույն մասնակցել կարպետագործությանը: Դա նաև ընդգրկում է բուրդ չփխելու մոգական գործողությունը:

↓ Բուրդ գվելու ժամանակակից կարբերակը

ՈՉԽԱՐՆԵՐ ԽՈՒԶԵԼ ՀՈՉԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Երբ մի քանի տարի առաջ Հայաստանի մարզերում մեկը մյուսի հետևից սկսեցին անցկացվել տարատեսակական փառատոներ, այս մեկը չէր կարող չառանձնանալ արդեն իսկ իր գաղափարով. անհավանական էր թվում, որ կարելի է տոնի վերածել ոչխարների սովորական խուզումը: Բարեբախտաբար, շատ չանցած հենց ոչխարների խուզման փառատոնը դարձավ Հայաստանի փառատոնային տարվա զարդերից մեկը: Այստեղ՝ Խոտ գյուղում՝ տոնական միջավայրում, կարելի է տեսնել, թե որտեղից է ստացվում այն բուրդը, որ հետագայում վերածվում է գորգի կամ կենցաղային այլ նշանակություն ստանում: Ամենադիտարժանը, թերևս, խուզման մրցույթն է, որն ուղեկցվում է կենդանի երաժշտությամբ և հյուրասիրությամբ՝ տեղացի արտադրողներից:

↑↓ *Ոչխարների խուզման փառատոն*

↓ *«Բրդից կարպետի» թելերը*

↓ *Սոնա Մակարյանն իր գործը*

ՄԱՆԱԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐԵԼ ԽԱՉԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ

Սոնա Մակարյանը կարպետագործ և գորգագործ վարպետ է Խաչիկ գյուղից: Նա այն քչերից է, ով տիրապետում է մանածագործության և գորգագործության բոլոր փուլերին: Սոնան այս հմտությունները սովորել է իր տատիկից և մայրիկից, ինչը ձեռագործ հմտությունների՝ սերնդեսերունդ փոխանցման ավանդական ձևն է եղել: Այսօր Սոնան ջանում է պահպանել այս ավանդական արհեստը՝ դասավանդելով տեղի և հարևան համայնքների կանանց ու երեխաներին: Սոնան նաև հմտացել է բնական նյութերից ստացված ներկերով թելերի ներկման գործում: Երբ դպրոցում էր դասավանդում երեխաներին սովորեցնում էր այս հմտությունը, որն արդեն իսկ դարձել էր իր հոբբին: Ներկերը ստանում է արմատներից, կեղևներից, ծաղիկներից:

ԱՐԿԱ-ԾԱՅԻՆ

Ինչպես լիարժեք միաձուլվել բնության հետ:

ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ԶԲՈՍԱՆՔ ՄԱՄԻԿՈՆԻ ՀԵՏ ՇԻՐԱԿՈՒՄ

Մի բան է եղած լինել Շիրակի մարզում, այլ բան՝ շրջել այնտեղ հեծանիվով: Տրանսպորտային միջոցը փոխում է նաև ընկալումը: Գյումրեցի Մամիկոն Վարդերեսյանն առաջարկում է երկու հեծանվային ուղի, որոնց ընթացքում զբոսաշրջիկները հնարավորություն ունեն ծանոթանալու Շիրակի անվանի մարդկանց և տեսարժան վայրերին:

Առաջին ուղին ներառում է պատմական շրջանը՝ Տիրաշեն հնագիտական տեղանքը, Մարմաշեն վանքը, և այլն, մյուսը՝ լքված խորհրդային բունկերները, պատմական երկաթուղային կայարանն ու մի քանի բնակավայր, այդ թվում Հացիկ գյուղը, որտեղ այցելուները կարող են մասնակցել նկարչության վարպետաց դասի նորահայտ արվեստագետ Գոհար Պետրոսյանի արվեստանոցում:

ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ԵՎ ՁԻԼՈՎ ԶԲՈՍԱՆՔ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ

Հովհաննես Թումանյանի ծննդավայր Դսեղ գյուղն ինքնին հիասքանչ վայր է: Բացի այդ, այստեղ է տեղակայված ՏՈՒԿ վրանային ճամբարը (ստեղծվել է վանաձորյան ՀԿ կենտրոնի կողմից), որտեղ առաջարկում են Լոռվա ուսումնասիրության երկու տարբերակ՝ հեծանվային և «զիլինգ»:

«Զիլինգ» եզրույթը, որը հնարել են ՏՈՒԿ-ի անդամները, նշանակում է «զիլով արշավել դեպի Դսեղի ծովեր»: Հատկապես գյուղական շրջաններում, «զիլը» ամենատարածված մեքենաներից է: Բեռնատարի թափքը ծածկ չունի և հաճախ օգտագործվում է բերքը տեղափոխելու համար: Փորձառությունը շատ զվարճալի է. այն հիշեցնում է երկհարկանի բացօթյա տանիքով ավտոբուսների էքսկուրսիա՝ ուղղակի գյուղական կոլորիտով: Ճանապարհի վերջում հյուրերը ժամանակ կունենան բնությունը վայելելու, պիկնիկի, տեղական ավանդական խաղեր խաղալու, անգամ լճակում թիավարության համար:

ԲԱՑԱՀԱՅՏԻՐ ՎԱՆԱՁՈՐԸ՝ ԵՐԿՈՒ ԱՆԻՎՆԵՐՈՎ

Վանաձորը դրախտ է լքված կառույցների սիրահարների համար: Այստեղ շատ են կիսավեր գործարաններն ու շինությունները, և որոնցում դեռ հստակ զգացվում է անցած խորհրդային դարաշրջանի շունչը: «Վանաձորը երկու անիվների վրա» նախաձեռնության հեղինակներ Էմման և Վաղինակը հեծանվային էնտուզիաստներ են: Նրանք Երևանից տեղափոխվել են Վանաձոր, հիմնել «Բու» լեռնահեծանվային պարկը, որի միջոցով էլ այցելուներին ծանոթացնում են Վանաձորի խորհրդային հարուստ ժառանգությանը: Երթուղին սկսվում է նախկին Քիմիական գործարանի տարածքից, որտեղից հեծանվարշավը կշարունակվի մինչև խորհրդային ժամանակների լեգենդ, ներկայումս կործանված պիոներական «Արտեկ» ճամբար: Այս ընթացքում երիտասարդները կներկայացնեն քաղաքի խորհրդային անցյալի մասին պատումները, շենքերի պատմությունը, խորհրդային ու ներկայիս Վանաձորի կենցաղն ու առօրյան:

ԱՐՇԱՎ ԴԵՊԻ ՆՈՐԱՎԱՆՔ ԱՐՓԱ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՏ

Նորավանքում հավաբանար եղած կլինեք, բայց սա նույնը չէ, ինչ սովորական զբոսաշրջային այցն ավտոբուսով: Արփա հիմնադրամն առաջարկում է օգտվել ժամանակակից ՈՒԱՋ ջիպերից և վայելել Վայոց ձորի վայրի բնությունը: Ճանապարհին պրոֆեսիոնալ զբոսավարները կպատմեն այն ամենը, ինչ պետք է իմանալ տեղի հարուստ ֆլորայի ու ֆաունայի մասին (885 բուսատեսակ, 39 կաթնասուն, 190 թռչնատեսակ՝ նայելու բան կա): Իսկ պատմամշակութային հատվածը ներառում է Սմբատաբերդ ամրոցը, Նորավանքը և Սպիտակավոր եկեղեցին: Մեկ այլ տարբերակ էլ կա՝ արշավանք Նորավանքի կիրճում, այնտեղ, ուր հնարավոր չէ հասնել մեքենաներով: Կարելի է ընտրել երեք ուղիներից, որոնցից մեկը, օրինակ, թույլ կտա մոտիկից ծանոթանալ բեզոարյան այծերի առօրյային:

«Արփա» բնապատկերային զբոսաշրջություն

ԱՐՇԱՎԵԼ ՍԻՍԻԱՆԻՑ ՏԱԹԵՎ

Երիտասարդ, խանդավառ զբոսավար Կատյա Բաբայանի կողմից առաջարկվող Սիսիան-Լծեն-Տաթև երկօրյա արշավը մշակութային արժեքներին ծանոթանալու և բնության հրաշքներով հիանալու լավ հնարավորություն է: Զբոսաշրջիկներն այդ շրջայցի ժամանակ կբացահայտեն Որոտնավանքի զարմանահրաշ լանդշաֆտները, կիանգստանան հանքային աղբյուրներով հարուստ Որոտանի կիրճում, կուսումնասիրեն տեղաբնակների ապրելակերպն ու սովորույթները՝ համտեսելով տարածաշրջանին բնորոշ ուտեստներ: Հաջորդ օրը՝ Տաթևի վանք այցելելուց առաջ, արշավախումբը վրանային գիշերակաց կունենա Լծեն գյուղում: Ճանապարհին Կատյան նաև սովորեցնում է խմբին տեղական խոտաբույսերի մասին և ցանկության դեպքում հավաքում թեյ պատրաստելու համար:

ՔԱՅԼԵԼ ՀԻՆ ԽՆՁՈՐԵՍԿԻ ՔԱՐԱՆՁԱՎՆԵՐՈՒՄ

Խնձորեսկի վերածնունդի հիմնադրամն առաջարկում է քայլարշավներ հին բնակավայրում: Արշավի գլխավոր նպատակը, անշուշտ, քարանձավային ավանի ուսումնասիրությունն է: Այստեղ մարդիկ ապրել են ընդհուպ մինչև 1960-ական թվականները, երբ խորհրդային իշխանությունները ստիպել են լքել բնակավայրը և տեղափոխվել նոր կառուցվող գյուղը: Քարանձավների բնակչությունն իր բարձրակետում հասել է 15 հազար հոգու: Այսօր սա բացառիկ պատմական տեսարժան վայր է, որի մոտակայքում մի քանի տարի առաջ կառուցվել է կախովի կամուրջ, թանգարան և սրճարան՝ տեղակայված քարանձավային բնակարաններում:

ՔԱՅԼԱՐՇԱՎ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՆՏԱՌՈՒՄ, ՏԱՆՁԱՎԵՐ, ՍՅՈՒՆԻՔ

Լինում է, որ Հայաստանից են արտագաղթում, պատահում է՝ դեպի Հայաստան են գաղթում: Այդպես, Իսպանիայից տեղափոխված Միքայելն ու Պալոման Տանձավեր գյուղում գյուղապետի աջակցությամբ զբաղվում են տուրիզմի զարգացմամբ: Բարեբախտաբար, Սյունիքն անփոխարինելի է քայլարշավների ու հեծանվային արշավների համար: Փորձառություններից մեկն առաջարկում է 5.5 կիլոմետրանոց քայլարշավ Կախարդական անտառով, որը land art-ի դեռևս միակ բացօթյա թանգարանն է Հայաստանում և որտեղ այցելուներն իրենք կարող են ստեղծել իրենց land art-ը: Մյուս արահետը տանում է դեպի Վանանդաբերդ ամրոց և Դավիթ բեկի ջրամբար կամ Չայզամի լիճը: Ճանապարհին քայլարշավը կարող է ուղեկցվել թռչնադիտումներով, քանի որ տարածքն ունի հարուստ թռչնաշխարհ: Արահետը հարմար է նաև հեծանվային արշավի համար, ուստի ցանկացողները կարող են այն անցնել նաև հեծանիվներով:

ՄԱՆ-ԿԱԿԱՆ

Ինչով զբաղեցնել երեխաներին ճամփորդության ժամանակ:

ՖՌՌԻԿԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿ

Ժամանակին ֆռռիկը (նույն ինքը՝ հոլը) բոլոր երեխաներին ծանոթ երևույթ էր, այսօր արդեն՝ պատմության խորքերից եկող փորձառություն: 2017 թվականին գյումրեցի ընկերներ Արսեն Վարդանյանը և Գագիկ Մխիթարյանը միավորվեցին իրենց քաղաքի մոռացված խաղերի և ավանդույթների վերականգնման գաղափարի շուրջ: Ֆռռիկը, բնականաբար, դրանցից մեկն է: Արսենն ու Գագիկը ջանք չեն խնայում երեխաներին ավանդական խաղերով լի մանկություն պարգևելու, և նաև հայկական ապրանքանիշերն աշխարհին ճանաչելի դարձնելու համար: Արսենը միշտ ուրախությամբ է դիմավորում երեխաներին և կարող է ոչ միայն օգնել ընտրել հոլը, այսինքն՝ ֆռռիկը, նաև սովորեցնել, թե ինչպես պետք է այն քցել (իսկ դա այդքան հեշտ չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից):

ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՆԻ, ՎԱՅՈՑ ՁՈՐ

Մեծերն Արենիում մոտիկից կարող են շփվել գինու հետ, իսկ փոքրո՞ւրը: Փոքրերի համար կա «Արհեստանոց» ստուդիան: Ընդ որում, շենքն ինքնին հետաքրքրաշարժ է. 17-րդ դարում եղել է եկեղեցի, խորհրդային տարիներին վերածվել մշակույթի կենտրոնի, ապա պահեստի, 90-ականներին ծառայել է որպես սրճարան, իսկ 2019-ի ամռանն Արփինեն այն վերածեց արհեստանոցի: Այժմ այստեղ 5-13 տարեկան հինգ տասնյակ երեխաներին սովորեցնում է կավագործություն, նկարչություն և հելուկագործություն: Հենց նրանց կարող են միանալ այս կողմերում հանգստացող երեխաները:
Բոլոր փորձառությունները կապված են կավի հետ՝ կավի կտորներով զարդերի պատրաստում, կավե մոմակալի նկարազարդում, կավագործության վարպետաց դաս: Արփինեն պատմում է կավի մասին, որն օգտագործում է իր աշխատանքում. որտեղից է ձեռք բերում կավը և որոնք են Արենիի կավի և Հայաստանի այլ կավերի հիմնական տարբերությունները:

ՏԻԿՆԻԿԱ-ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՎԱՅՈՑ ՁՈՐ

«Մոշ» ստուդիան համատեղում է հիմնադիր Արմինե Աղաջանյանի սերը դեպի Վայոց ձորի գեղեցիկ լանդշաֆտը, ճարտարապետությունն ու նորաձևությունը: Ստուդիայի այցելուները կարող են մասնակցել տիկնիկագործության վարպետաց դասի: Տիկնիկների պատրաստումը բավական պարզ է և նորաձև, իսկ նշանակությունը երազանքների կատարումն է:

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, ԴՍԵՂ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

Թումանյանի հեքիաթները բոլոր երեխաներին էլ ծանոթ կլինեն, այդ պատճառով նրա տուն-թանգարանն առավել հետաքրքիր կլինի նրանց: Տեսնել, թե որտեղ է ապրել սիրված գրողը, ինչպիսի տանն է մեծացել և ինչպիսի բնությամբ և ապրելակերպով է ոգեշնչվել:

ԿԱՎԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՀԱՑԻԿ ԳՅՈՒՂ, ՇԻՐԱԿ

Մի բան է կավով կուժ պատրաստելը, մեկ այլ՝ այդ կուժը նկարազարդելը: Եվ ոչ պակաս գրավիչ: Հացիկ գյուղում կարելի է մասնակցել նկարիչ Գոհար Պետրոսյանի դասընթացին (իր մոտ մշտապես ուսանում են գյուղի և Գյումրիից եկած երեխաներ): Գոհարի հետ երեխաները կարող են սովորել կավի վրա նկարել կամ պարզապես նկարել՝ ոգեշնչվելով գյուղական տեսարաններով: Կարելի է նաև ուսումնասիրել Գոհարի ստեղծած յուրահատուկ նկարները և հայկական զարդանախշերով արձանիկները:

ԹԵԼԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՏԱՎՈՒՇ

Մի քիչ էլ ստեղծագործական փորձառությունների մասին: 2017 թվականին Տավուշի թեմի և «Արևիկ» սոցիալ-կրթական կենտրոնի աջակցությամբ կանանց մի խումբ միավորվեց օգտագործելու իրենց ասեղնագործական, կարի, հելունագործության և այլ հմտություններն Իջևանում եկամտի նոր աղբյուր ստեղծելու համար: Ահա, թե ինչ է առաջարկում «Թելիկ» կենտրոնը պատանիների համար. ասեղնագործություն, կարպետագործություն, մանրանկարչություն՝ ըստ ցանկության:

ՏԱՐԱԶՈՎ ՖՈՏՈՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿ

Կերպարանափոխումները միշտ զվարճալի են, իսկ «Զանան Տարազ» ստուդիայում երեխաների հետ կարելի է կերպարանափոխվել հին ժամանակներին համահունչ: Ֆոտոստուդիայում կարելի է ոչ միայն լուսանկարվել տարբեր ժամանակների ու շրջանների հայկական տարազներով, այլև սովորել տարազների մշակույթի, Գյումրիի դերձակության ու լուսանկարչության ավանդույթների մասին:

ՄԻ ՈՒՐԻՇ ՔԱՐՏԱՇՈՒԹՅՈՒՆ, ՎԱՆԱՁՈՐ

Իսկ ահա Բոգդան Հովհաննիսյանն աշխատում է Վանաձորում: Իր վանաձորյան արհեստանոցում նա աշակերտների հետ միասին շարունակում է խաչքարագործության դարավոր ավանդույթը: Վարպետ Բոգդանը նաև ստեղծում է գրակազմեր և դեկորատիվ մանրանկարներ, որոնք ոգեշնչված են Մատենադարանի մանրանկարչական հավաքածուից: Արհեստանոցում կարելի է հետևել նրա մոգական աշխատանքին, փորձել սեփական ուժերը քարի փորագրության բարդ գործում, ինչպես նաև գնումներ կատարել:



ՔԱՐԵ ՓԱՌԼ

Առաջին հայացքից «մեծական» թվացող այս փորձառությունը երեխաներին մեծ հաճույք կպատճառի: Հովհաննես Մարգարյանի հյուրատունը, որի բոլոր անկյուններն այսպես թե այնպես նվիրված են քարին, ցույց կտա, թե որքան հարուստ, բազմազան ու գեղեցիկ է տուֆը:

Փորձառության համար երեխաների հետ հյուրերը կարող են ընտրել Արարատի տեսքով խճանկարի պատրաստումը՝ տարատեսակ տուֆի կտորներով: Վարպետը ցույց կտա խճապատկերի ավելի մեծ օրինակը, որը կհեշտացնի հյուրերի աշխատանքը: Նա յուրաքանչյուրին կտրամադրի հարթ քարի կտոր, որը կդառնա խճապատկերի հիմքը:

Հավելյալ տեղեկությունների համար՝
www.myarmenia.si.edu

Արեգ Դավթյան
«Իմ Հայաստան» ծրագիր

Թրևագիր Վայոց ձորի գինուղուց

ԵՐԵՎԱՆի խնդրանքով պատմաբան և գինու մեծ գիտակ Սիգրան Զաքարյանը մի ամբողջ օր նվիրել է Վայոց ձորի գինու ուղուն և այցելել վեց գինեկուն:

Ա երձավոր Արևելքի և Եվրոպայի հին քաղաքակրթությունների անբաժանելի ուղեկիցն է եղել գինին դեռ նախապատմական ժամանակներից: Հայաստանը, որտեղ գինու արտադրության մեզ հայտնի հնագույն հետքը 6100 տարեկան է, իրավամբ հավակնում է գինու բնօրրանի տիտղոսին: Հայաստանը գինու օրրան է ըստ մեկ այլ՝ ոչ այնքան գիտական տեսության, համաձայն որի մարդկության նահապետ Նոյը, ով Աստվածաշնչյան տվյալներով ամենաբազմազան և յուրօրինակ կենդանիների հետ միասին տապանի վրա ապաստանեց Արարատի գագաթին և փրկվելով ջրհեղեղից՝ որոշեց Արարատի ստորոտին հիմնել խաղողի այգի և որից նա ստեղծեց առաջին գինին և մինչև իսկ արբեց դրանից: Երկար դարեր մարդկությունը համարել է, որ Նոյը ջրհեղեղից հետո բնակվել է և մահացել ու թաղվել Նախճավանում:
Դե քանի դեռ Աստվածաշունչն ու գիտությունը գինու ծննդավայրի հարցում համաձայնության են եկել, ինչն է մեզ խանգարում մի փոքր թրևել Վայոց ձորի գինեգործական ձեռնարկություններով՝ Նոյի այգիներին մոտ և գինու առաջին մառանին ընդառաջ: Իսկապես՝ հայոց գինուն մոտիկից ծանոթանալու համար պետք է այն սկսել իր օրրանից՝ Վայոց ձորից: Դե գնացինք:

Ուղու սկիզբը

Մինչ ճանապարհն անցնում է Արարատյան արևաշող դաշտով, հիշենք, որ Հայաստանը հնի և նորի անհավանական խաչաձևումների երկիր է, մի տեղ, որտեղ հպարտանում են երեկ չէ առաջին օրով, նեղվում այսօրից, հույսեր կապում վաղվա հետ և... մոռանում երեկը: Գինու դեպքում էլ այդպես է: Մենք փաստորեն բավական աղքատիկ տեղեկություններ ունենք Հայաստանում գինու մշակույթի մասին միջին դարերում, իսկ խորհրդային տարիներին այդ մշակույթը հիմնահատակ խարխլվեց՝ փոխարինվելով օտարամուտ ցածրօրակ օղի խմելու սովորությամբ: Այսօր արդեն աստիճանաբար Հայաստանը վերականգնում է երբեմնի գինու մշակույթը, ոչ միայն և ոչ այնքան խորհրդային ժամանակ գոյություն ունեցած գործարանների, որքան նորաստեղծ բազմաթիվ մանր ու միջին, հաճախ ընտանեկան ձեռնարկությունների շնորհիվ: Դրանցից առավել աչքի ընկնողներն էլ կկազմեն մեր այսօրվա «գինուղու» հանգրվանները: Ահա Արարատյան դաշտից դեպի Վայոց ձոր շարժվելիս նկատելի է դառնում, թե ինչպես հարթ տեղանքին գալիս են փոխարինելու սկզբում ցածր բլուրները, ապա ավելի ու ավելի բարձր սարերը՝ շիկակարմրավուն հողով ու տեղ-տեղ հողից վեր ցցվող ժայռերով: Շուտով արդեն հասնում ենք մեր առաջին կանգառին, որ գտնվում է Արենի գյուղի հարավային եզրին,

← Աշխարհի ամենահին գինեգործարանն Արենի-1 քարանձավում

→ «Սոլինիպի կանյոն այգիներ», խաղողով կարասները հողից հանելիս

← «Սոմիկի» գինին և այգիները

↓ Բերքահավաքը «Հին կամուրջում»

ԴԵ ՔԱՆԻ ԴԵՌ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՆՈՒ ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ՀԱՐՅՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԵԿԵԼ, ԻՆՉՆ Է ՄԵԶ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՄԻ ՓՈՔՐ ԹՐԵՎԵԼ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

ծովի մակերևույթից մոտ 1000 մետր բարձրության վրա: Այստեղ մեզ սպասում են երկու գինեգործական ձեռնարկություններ՝ կողք կողքի տեղադրված «Արենի» գործարանն ու «Հին Արենին»:

Հինն ու նորը

«Արենի» գործարանը գյուղի ամենահին գինեգործական ձեռնարկությունն է՝ հիմնադրվել է 1994-ին իբրև Սիմոնյան ընտանիքի ընտանեկան ձեռնարկություն: Ներկայումս գործարանի արտադրանքի ծավալը տպավորիչ է՝ տարեկան մինչև 200,000 շիշ՝ լայն ընտրանիով, որում կան ինչպես սպիտակ և կարմիր խաղողի, այնպես էլ մրգային բազմատեսակ գինիներ: 2013-ից գոյություն ունեցող գինու սրահին լրացնելու է գալիս ընդարձակ ռեստորանը, ուր կարելի կլինի ճաշակել ավանդական և ժամանակակից խորտիկները գործարանի գինու ուղեկցությամբ:

Գործարանում արտադրվող Արենի տեսակի գինու հումքը, որից ստացվում է կարմիր չոր, կիսաչոր և կիսաքաղցր գինիներ, հիմնականում գալիս է հարևան Աղավնաձորից: Մրգային գինիներից «Արենի» գործարանն առաջարկում է նռան, բալի, սերկևիլի, մոշի, մորու և այլ մրգերից: Նուռը գալիս է Արցախից՝ Մարտակերտից, միրգը հիմնականում շրջակա գյուղերից է, իսկ հատապտուղները Լոռիից են: Դրանցում իբրև բաղադրիչ այս կամ այն չափով օգտագործվում է նաև Արենի կիսաքաղցր գինենյութը, որը հավելում են խմորման ընթացքում:

Հաջորդը մեր ցուցակում «Հին Արենին» է՝ տպավորիչ մի վայր, ուր գինեգործական ավանդույթները համադրված են ժամանակակից սարքավորումների հետ՝ նախագծված հայտնի արգենտինացի մասնագետ Մարիո Խապասի կողմից: «Հին Արենի» գինիներին հատուկ տոկուն կառուցվածք և արտահայտիչ բուրային փունջն արդյունք է ապարանստվածքային հարուստ հրաբխային հողի, վառ արևի և ավելի քան 1200 բարձրության վրա գտնվող այգիների միկրոկլիմայի: Գործարանը բավական մեծ ծավալի արտադրանք է տալիս՝ մշակելով տարեկան մոտ 250 տոննա խաղող: Տեսականին մեծ չէ, բայց այդ գինիները՝ Ռոզեն (վարդագույն), Ոսկեհատը և Արենին, ունեն անկրկնելի բնորոշ հատկանիշներ, որոնք Հայաստանում և արտերկրում գտել են և շարունակում են գտնել նորանոր երկրպագուներ:

Գեղաւիի կունը

Բայց մեզ սպասում են այլ գինեմառաններ էլ հարևան տարածքներում, այնպես որ շարունակենք մեր գինուղին ու մի քիչ թրևենք Եղեգնաձորում: Ճանապարհը հազիվ 20 րոպե է, սակայն շատ դիտարժան՝ նախ Արենիի նշանավոր քարանձավն արժի դիտել, ապա վայելել Արփայի կանաչ կիրճը, որն այնքան տարբերվում է ամառային բարկ արևից, ոսկեգույն երանգ ստացած լեռնալանջերից ու լերկ ժայռերից:

Քիչ անց, դեպի Սիսիան և հարավ տանող ճանապարհի ձախ կողմում արդեն տեսնում ենք «Գետնատուն» գինեգործարանը: Նախկինում ծխախոտի գործարան ծառայող տարածքը 1999-ից դարձել է գինեգործարան և տարեցտարի ընդլայնվել (չենք կարող չհիանալ գործարանի այսչափ դրական կերպարանափոխմամբ): Շնորհիվ մոտ նախալեռնային տարածության և՛ 1400-1600 մետր բարձրության, և՛ ավազակավճային հողի վրա գտնվող խաղողի այգիների,

և՛ արևային կլիմայի, և՛ ցերեկ-գիշեր ջերմաստիճանային մեծ տարբերության մրգի մեջ Վերնաշենում գտնող մոտ 8 հա այգիների բերքում բարձր է լինում քաղցրության և թթվության պարունակությունը՝ հանգամանք, որը շատ կարևոր է բալանսավորված գինի ստեղծելու համար:
Անզուգական է Գետնատան նռան կիսաքաղցր գինին իր յուրօրինակ բույրով և բալանսավորված համով, ուր կա և՛ թթվություն, և՛ որոշակի քաղցրություն՝ հագեցած չափավոր տտիպությամբ: Գերհասունացած, հաճախ ճաքած նուռը՝ բացառապես կարմիր գույնի, գալիս է Մեղրիից կամ Արցախից:
Իսկ սեփական մրգերից «Գետնատունը» պատրաստում է նաև խնձորի, ծիրանի և սալորի բարձրակարգ մրգօղիներ՝ բրենդիներ, որոնք հնեցվում են 7 և ավելի տարի: «Գետնատունն» ունի նաև ռեզերվ՝ հնեցված գինիներ, որոնք նախքան վաճառքի հանելն առնվազն 4 տարի պահվում են սկզբում կաղնե տակառներում, ապա՝ շշի մեջ:

Մեսրոպի խանապարհի հին կամուրջը

Բոնենք տունդարձի ճանապարհը, բայց ոչ այդքան արագ: Եղեգնաձորից հենց եզրին՝ դեպի Երևան ճանապարհի աջ կողմում, մեզ է դիմավորում հյուրընկալ մի օջախ, ուր կա ամեն ինչ՝ և՛ գինու մառան, և՛ խոհանոցով համտեսի սրահ, և՛ հանգստանալու տարածք, և՛ վերջապես հյուրատուն:
«Հին կամուրջն» է դա՝ անվանակոչված հավանաբար 13-րդ դարի սկզբին կառուցված և բազմիցս վերանորոգված միակ սրածայր կամարով կամրջի անունով, որը ժամանակին գտնվել է հին Մետաքսի ճանապարհի վրա:

Հիմա «Հին կամուրջը» միացնում է արևմտյան և հայկական գինեգործական ավանդույթները՝ լայնորեն ներկայացնելով Հայաստանը և մասնավորապես Վայոց ձորն աշխարհին:
1998-ին հիմնված Խալաթյանների ընտանեկան ձեռնարկությունը գինիների շատ մեծ ընտրանի չունի՝ կա միայն Արենի խաղողից պատրաստված ռեզերվ և Ոսկեհատից սպիտակ գինի, սակայն որակի պահպանման և բարձրացման ջանքերն անդադար են:
Ռեզերվ կարմիրը հնեցվում է Արցախի կաղնու փայտից տակառներում, ուր այն մնում է 18-24 ամիս՝ պատմում է Մուշեղը, ով Շվեդիայից վերադարձել է հայրենիք՝ օգնելու ծնողներին առաջ տանելու ընտանեկան ձեռնարկությունը: «Արենին ամեն տեսակ կաղնե տակառում լավ արդյունք չի տա. այն բարդ բնավորությամբ գինի է, հեշտ չէ ընտելացնել, բայց հեշտ է փչացնել»,– ասում է նա: Կաղնե տակառից գինին շշալցվում է և մի քանի շաբաթ «հանգստանում» շշալցման «ստրեսից», որպեսզի խմելիս այն արտահայտի իր ամբողջ բույրային ու համային հատկանիշները:
«Հին կամուրջը» խաղողի մնացորդներից թունդ օղի՝ գրապպա է պատրաստում՝ կրկնակի թորմամբ, որի ֆիլտրացիայում օգտագործվում է կաթ: Այդ խմիչքը նույնպես հնեցնում են կաղնե տակառներում չորս տարի շարունակ: Սակայն «Հին կամուրջը» միայն գինի և մրգօղիով չի, որ կարող է զարմացնել հյուրին: Շատ հաճելի անակնկալ էր տեղական պանիրների տեսականին՝ մասնավորապես այծի կաթից պատրաստված և գինու հետ մատուցվող այլ ակրատները: Ամենատպավորիչը երեք տեսակի հայկական ձիթապտուղն էր և ձիթայուղը, որն ապշեցրեց իր համի ու բույրի հարստությամբ՝ այն ոչնչով չի զիջում ձիթապտղի հայտնի վայրերից Հայաստան ներմուծած ձիթապտղին կամ ձիթայուղին:

→ Վայոց ձորի գինու ուղու քարտեզը

Զապն ու գինին

Գինուղու վերջին հանգրվանը «Տրինիտի կանյոն այգիներն» է, որը գտնվում է դեպի Երևան ճանապարհին՝ Աղավնաձորում: Մայրուղուց փոքր-ինչ ներս ենք գնում և դարպասից մեր առաջ է բացվում խորհրդավոր և զարմանահրաշ մի այգի՝ փոքրիկ սրահով, ուր կարելի է փորձել ընկերության զանազան գինիները և տեղական արտադրության ակրատները՝ պանրեղենը, չրեղենը և այլն:
«Տրինիտին» համեմատաբար նորաստեղծ է՝ գործում է 2009 թվականից՝ հիմնադրվելով գինու երեք սիրահարների կողմից: Երբեմնի ամերիկաբնակ և ծննդավայր վերադարձած Հովակիմ Սաղաթելյանը, ով նրանցից մեկն է, պատմում է, որ «Տրինիտիի» հիմքում օրգանական գինու գաղափարն է՝ կարևորելով ոչ թե քանակը, այլ որակը՝ չկիրառելով ժամանակակից մասսայական արտադրությանը բնորոշ տեխնոլոգիաներ:
«Տրինիտի Կանյոնը» գինու իր փիլիսոփայությունն ունի՝ այն ավելին է, քան պարզապես խմիչքը, այն կենսակերպ է, խորհրդավոր մի ըմպելիք, որը կապում է մարդուն և տիեզերքը: «Ամեն ինչ մենք անում ենք սիրով»,– ասում է Հովակիմը:

Ոչ սովորական մոտեցման ևս մի ցուցանիշ է այն, որ «Տրինիտին» իր գինեգործներին փորձարկումների լայն դաշտ է տրամադրում. այդ նպատակով հատուկ մի էքսպերիմենտալ արտադրական գիծ կա «Զազ» անունով:
Ընդհանրապես, «Տրինիտին» մի վայր է, ուր կարելի է տեղեկանալ, ծանոթանալ ու սիրահարվել գինուն: Սա մի վայր է, ուր ոչ միայն խմում են գինին, այլև տեսնում են խաղողն այգիներում, ականատես լինում խաղողը ճզմելուն և երբեմն էլ մասնակցում գինի պատրաստելու որոշ փուլերին, շփվում գինեգործների հետ:

Ճարտարապետի հիշատակին

«Մոմիկն» ընտանեկան ձեռնարկություն է: Գյուղամիջում մեզ դիմավորում է Նվերը, ով մեզ ուղեկցում է դեպի այգիները: Դեպի այգիներ ճանապարհի ձախ՝ բարձրադիր կողմում վեր է հառնում Արենի գյուղի հպարտությունը՝ անզուգական մանրանկարիչ և ճարտարապետ

Արենի գինու փառատոն

ՔԱՐՔԱՐՈՏ ԵՎ ԿԱՎԱՅԻՆ, ԴԵՂՆԱՎՈՒՆ ՀՈՂԸ, ՈՐԻ ՎՐԱ ԹՎՈՒՄ Է՝ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ՈՉԻՆՉ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՃԵԼ, ՏԱԼԻՍ Է ԴՐԱԽՏԱՅԻՆ ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՈՏՈՏԵԼԻՍ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՈՒՄՊԻՑ

Մոմիկի 1321թ. կառուցած սբ. Աստվածածին եկեղեցին: Այստեղից էլ ձեռնարկության անունն է:
Եթե Մոմիկը հայտնի է արդեն յոթ դար, ապա շշալցված «Մոմիկի» տարիքը շատ ավելի համեստ է, գոյություն ունի 2017-ից: Նվերը պատմում է, որ մեծացել է խաղողագործի ընտանիքում և իր կյանքում առաջին խաղողը տնկել է հոր օգնությամբ՝ երեք տարեկանում: Հիմա արդեն 45-ամյա վազը կարող է տալ մինչև 650 կիլոգրամ խաղող:
Վերջապես հողածածկ ճանապարհով հասնում ենք «Մոմիկի»՝ առայժմ ընդամենը երկու հեկտար տարածությամբ այգին, որ գտնվում է կանաչապատ հովտում, որը երկարում է մինչև հեռվում ցածր թվացող դեղնավուն լեռները, իսկ մյուս կողմը դեպի սահման նայող բարձր լեռներն են՝ լերկ ժայռերով: Այգում կա նոր կառուցված և ամեն հարմարություններով փոքրիկ տաղավարը՝ համտեսի սրահը, ուր ինչպես ներսում, այնպես էլ դուրսը՝ ամպհովանու ստվերում նստած, կարելի է վայելել զարմանահրաշ գինիները և դիտողի աչքերն իր վրա գամող տեսարանը:
Մենք միշտ սիրում ենք ասել, որ հայը քարից հաց քամող ժողովուրդ է, սակայն պարզվում է քարից ոչ միայն հաց է քամվում: Քարքարոտ և կավային, դեղնավուն հողը, որի վրա թվում է՝ առանձնապես կարևոր ոչինչ չի կարող աճել, գումարված Վայոց ձորի կենսատու արևին՝ տալիս է դրախտային զգացողություններ առաջին իսկ հոտոտելիս և առաջին իսկ ումպից:
Հիմնականում Արենի և սպիտակ Խարջի խաղողատեսակներով այգիները մինչև 45 տարեկան են և իրենց բերքով ապահովում են տարեկան մոտ ավելի քան 4000 շիշ գինու արտադրությունը: Մեր այս ճանապարհորդությունն էլ գինուղիով իր ավարտին հասավ այս անգամվա ավարտին: Կլինի նոր բերք, կլինի նոր գինուղի և նորից կթրևենք դրա երկայնքով:

«Արենի»
areniwines@gmail.com
+374 94 424402,
+374 94 424427
Գյուղ Արենի, Վայոց ձորի մարզ, Հայաստան

«Գեղնատուն»
info@getnatoun.am,
getnatoun@mail.ru
+374 93 417544,
+374 91 417544
getnatoun.am

«Հին Արենի»
info@hinareniwine.am;
visit@hinareniwine.am
+37441234111
hinareniwine.am
Գյուղ Արենի, Վայոց ձորի մարզ, Հայաստան

«Հին Կամուրջ»
info@oldbridgewinery.com
+374 91 800240,
+374 93 219756
oldbridgewinery.com
Երևանյան մայրուղի 1, քաղաք Եղեգնաձոր, Վայոց ձորի մարզ, Հայաստան

«Սրինգիկի կանյոն այգիներ»
info@trinitycv.com
+374 55 227337
trinitycv.com
Գյուղ Աղավնաձոր, 1-ին փողոց, 115 շենք, Վայոց ձորի մարզ, Հայաստան

«Մոմիկ»
+374 95 480450,
+374 93 480450
facebook.com/MomikWines
Արենի համայնք, Վայոց ձորի մարզ, Հայաստան

Հավելյալ տեղեկությունների համար՝
www.vayotsdzorwineroute.com

Սիգրան Զաքարյան
«Իմ Հայաստան» ծրագիր

Համով-հոտով Հայաստան

Գաղտնիք չէ, որ սնունդը միզակգային կբոսաշրջության շարժիչ ուժերից մեկն է: Հայաստանն էլ ունի շատ բան առաջարկելու այս դաշտում, ընդ որում մեր ակգային խաշայանկը հեղաբեքիր կարող է լինել ոչ միայն արտասահմանցի, այլև ներքին կբոսաշրջիկներին: ԵՐԵՎԱՆը կրուցել է ակգագրագետ Ռուզաննա Ծատուրյանի և «ԻՄ Հայաստան» ծրագրի մասնագետ Նարինե Աբգարյանի հետ, ովքեր այժմ աշխատում են գաստրոտուրիզմի զարգացման ու վերահմատավորման ուղղությամբ:

Պատմության համը

Չուգունե թավան դնում եմ կրակի վրա: Մի քանի րոպե անց, երբ թավան արդեն տաքացել է, մի կտոր կարագ եմ գցում վրան: Դանակով զգուշորեն անցնում եմ հյութալի լոլիկի վրայով, որպեսզի այն փափկի, հետո մաքրում ու կտրատում: Կարագն արդեն ճտճտում է թավայում, վրան գցում եմ կտրատած լոլիկը ու թեթև խառնելով՝ տապակում այն: Մինչ լոլիկը կհասնի իմ ուզած տեսքին, երկու ձու եմ կոտրում, հարում դրանք՝ ավելացնելով աղ ու սև բիբար: Պատառաքաղի կտկտոցներն ու տապակվող լոլիկի բույրը տարածվում է ողջ տնով՝ ստեղծելով տիպիկ առավոտյան տրամադրություն: Երբ լոլիկն արդեն մգացել է, ավելացնում եմ ձուն ու մի պտղունց շաքար (չչարաշահե՛լ): Ողջ ընթացքում խառնելով ձվածեղը՝ հասցնում եմ այն միջին պնդության, կրկին ավելացնում եմ մի-մի պտղունց աղ ու բիբար և անջատում կրակը: Դնում եմ թավան փայտյա տախտակի վրա և հենց այդ տեսքով տեղափոխվում պատշգամբ: Կողքից թարմ մատնաքաշ, մի քիչ էլ այծի պանիր... Ցանկացած ուտեստ, որ դուք երբևէ փորձել եք՝ նույնիսկ ամենապարզ լոլիկով ձվածեղը կամ ավելուկով ապուրը, մեծ ճանապարհ է անցել, մինչ ձևավորվել և դարձել է այն, ինչ մենք այսօր դնում ենք մեր ճաշի սեղանին: Շատերի համար էական է սննդի միայն համը, հոտն ու, միգուցե, նաև վիզուալ գրավչությունը: Կան մարդիկ, ովքեր պարզապես սիրում են համեղ ուտել, իսկ ոմանք հետաքրքրվում են, թե ինչ փոփոխություններով է անցել թեկուզ հասարակ հաց ու պանրի մշակույթը կամ իմ ամեն առավոտվա ձվածեղը: Գիտական մակարդակում նմանատիպ ուսումնասիրություններով զբաղվում են ազգագրագետները: Նրանք փորձում են բացահայտել ամեն մի ուտեստի հետևում կանգնած պատմությունն ու կերպարները:

Ռուզաննա Ծատուրյանը վստահ է, որ ուտեստի միջոցով կարելի է խոսել ցանկացած ոլորտից՝ քաղաքականություն, գենդերային հիմնախնդիրներ, պատմություն, հասարակական փոփոխություններ, հեղափոխություն, նույնիսկ նորաձևություն: Սնունդն այն կապող օղակն է, որը կարող է, օրինակ, համախմբել իրարից տարբեր մարդկանց, կամ օտարերկրացուն հավերժ կապել մեկ այլ մշակույթի: «Հատկապես այսօր, երբ աշխարհում տարածում է գտել ոչ թե զբոսաշրջություն, այլ ճամփորդել եզրույթը՝ ոչ թե պարզապես տեսնել անցնելը, այլ մշակույթների փոխշփումը, շատ կարևոր է շոշափել այդ մշակույթների զարկերակը,– ասում է Ռուզաննան,– սնունդը լավագույն մեդիատորն է դրա համար, որը թույլ է տալիս մուտք գործել մեկ այլ իրողություն և հասկանալ այն մարդկանց, այն հասարակությունն ու համայնքը, որտեղ գտնվում ես»:

→ «Ընկուզենու կտակ»-ի գաթան

Հայկական, ավանդական

Հայաստանյան մշակույթն ինքն իրենով բավական «սննդակենտրոն» է: Ցանկացած առիթ՝ թե՛ վատ, թե՛ լավ, վերջի-վերջո կապվում է սննդի հետ: Չնայած նրան, որ հայկական ավանդական խոհանոցի բազմազանությունը պահպանել է իր գրավչությունը մինչ այսօր, և աշխարհին առաջարկելու շատ բան ունենք, միևնույն է, մենք բավարար ճանաչված չենք որպես գաստրո ուղղություն: «Իմ Հայաստան» ծրագիրը, որը վերջին տարիներին ակտիվորեն աշխատում է Հայաստանում գիտահենք մշակութային տուրիզմի զարգացման ուղղությամբ, ներկայումս կենտրոնացել է նաև

↓ Վարպետության դասեր Դիլիզանի «Սեռուն» ռեստորանում

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ԻՆՔՆ ԻՐԵՆՈՎ ԲԱՎԱԿԱՆ «ՍՆՆԴԱԿԵՆՏՐՈՆ» Է: ՑԱՆԿԱՑԱԾ ԱՌԻԹ՝ ԹԵ՛ ՎԱՏ, ԹԵ՛ ԼԱՎ, ՎԵՐՋԻՎԵՐՋՈ ԿԱՊՎՈՒՄ Է ՍՆՆԴԻ ՀԵՏ:

գաստրո ուղղվածության վրա՝ փորձելով դիրքավորել հայկական խոհանոցը որպես զբոսաշրջային գրավչություն: Ծրագրի կողմից ներկայացվող փորձառությունները հատուկ են իրենց միջավայրին, կրում են տեղանքին բնորոշ պատմամշակութային ժառանգությունը, իսկ փորձառությունն առաջարկողն այդ ուտեստի պատրաստման ավանդույթների կրողն է: Այսինքն՝ եթե նույնիսկ ներառվում են փորձառություններ, որոնք վերաբերում են հայկական ավանդական տոլմայի, լավաշի կամ խորովածի պատրաստմանը, ապա դրանք պետք է պարտադիր ունենան առանձնահատուկ տեղական նրբերանգներ: Օրինակ, Գորիսում կա մի ընտանիք, որը պատրաստում է տոլմա, բայց այն ունի մի յուրահատկություն՝ պատրաստվում է Գորիսի լոբու տերևով: Այսինքն՝ զբոսաշրջիկը, գալով նրանց ռեստորան (որն այդպես էլ կոչվում է՝ Լոբի Գորիս), ստանում է շատ ավելի մեծ փորձառություն, քան հասարակ տոլմայի պատրաստումն է ու համտեսը՝ մի ողջ կոնցեպցիա, որը կառուցված է լոբու շուրջ: Կամ մեկ այլ օրինակ՝ Սիսիանում գործում է Սիսիան Կերամիքս անունով մի հացատուն, որտեղ ամեն ինչ պատրաստվում և մատուցվում է հենց իրենց արհեստանոցում ստեղծված կավե ամանների մեջ: Սյունիքում հայտնի անչափ համեղ հաճարով և ղավուրմայով փլավը կոկիկ շերտերով դասավորում են կավե ամանի մեջ և ուղարկում վառարան՝ Սիսիանի համեղ կարտոֆիլի և լոլիկի հետ մեկտեղ: Ի դեպ, սա հենց այն վառարանն է, որտեղ թրծվում են իրենց իսկ պատրաստած կավե ամանները:

Առանց ավելորդ արհեստականության մարդիկ անում են այն, ինչով զբաղված են ամեն օր, պարզապես նրանց միանում են զբոսաշրջիկները: «Հայերը դարերով համով սնունդ են պատրաստում, բայց այդ ամենօրյա սովորությունը դեռևս հայտնի գաստրո զբոսաշրջային ուղղություն չի դարձել: Նրանք հաճախ չեն գիտակցում, որ իրենց ամենօրյա կերակուրը կարող է զբոսաշրջիկի համար հետաքրքիր լինել, մինչդեռ այն խորը պատմամշակութային հիմքեր ունի»,– ասում է Նարինեն:

Գիրուահենք

«Իմ Հայաստան» ծրագրի նպատակն է ապահովել յուրաքանչյուր փորձառության գիտական հիմքը՝ նույն ուտեստին ու փորձառությանը նայելով և՛ զբոսաշրջային, և՛ ազգագրական տեսանկյուններից: Ավա՛ղ, հայկական պատմական աղբյուրները շատ քիչ բանով կարող են օգտակար լինել: Միայն 19-րդ դարում, երբ սկսվեցին հրապարակվել տարատեսակ թերթեր և ամսագրեր, հայտնվեցին բավական լայնածավալ նյութեր ազգագրության բնագավառում: Այսօր, շարունակելով պատմագրությունը, հետազոտություններ կատարելիս ազգագրագետներն օգտագործում են նախկինից եկած ամբողջ տեղեկատվությունը՝ համադրելով այն ազգագրական հարցազրույցների հետ՝ բանավոր և կենսագրական պատմությունների և խորացված հարցազրույցների տեսքով: Միացնելով զբոսաշրջային և ազգագրական հայացքները՝ ստացվում է վերջնական պատկերը: Ավելի գործնական մակարդակի վրա շփվելով ամեն մի շահառուի հետ և համադրելով իրենց գիտելիքները՝ ազգագրագետներն ուսումնասիրում են և վերհանում կոնկրետ փորձառության հետազոտական կարիքներն ու, ի վերջո, մշակում են այդ փորձառության ազգագրական հիմքը: Ստացված նյութը «Իմ Հայաստան» ծրագրի շահառուներն օգտագործում են իրենց փորձառությունը զբոսաշրջիկներին ավելի ամբողջական և հարուստ ներկայացնելու համար: «Մենք ձգտում ենք նոր մոտեցում ձևավորել հայաստանյան զբոսաշրջության մեջ,– ասում է Նարինեն,– հիմք ընդունելով մշակութային ժառանգությունը»: Հետազոտողները զծում են ուտեստի անցած ճանապարհը մի շարք տեսանկյուններից: Սկզբում՝ համահայկական մակարդակով, այնուհետև ռեգիոնալ, տեղանքային ու ամենավերջում՝ նեղանձնական (պատրաստող մարդու և ուտեստի պատմությունները՝ մեկ հարթության վրա): Բնականաբար պարտադիր չէ, որ բաղադրատոմսը պահպանված լինի նույն ճշգրտությամբ, ինչպես այն պատրաստում էին մեր նախնիները, ծրագիրը նաև գնահատում է ստեղծարար մոտեցումները, երբ ուտեստը հնի ու նորի խաչմերուկին է: Օրինակ՝ Աշնակ գյուղ են տեղափոխվել երկու երիտասարդ աղջիկներ, ովքեր պատրաստում են տիպիկ սասունցիական (և ոչ միայն) կերակուրներ, բայց օգտագործելով նուշ՝ դա էլ իրենց ներդրումն է այդ դարավոր պատմություն ունեցող սննդի պատրաստման մեջ:

Ուշադրություն դարձրեք այս տարվա գաստրո նորություններին.

- *Շալե Գյումրի (Գյումրվա չանախ)*
- *Աղավնատուն (Ավանավանքի հայ և խորոված՝ տավուշյան թոնրում)*
- *Օրդ Մարդիրոս հյուրատուն (կարշամով ապուր և հորած պանիր)*
- *Լորի Գորիս (Գորիսի գողմա՝ ըրու տեղևներով)*
- *Հայատուն Սիսիան Սերամիքսից (Սիսիանի ֆյալազոշ և հաճարով փլավ)*
- *Իրիս հյուրատուն (ղափամա և տեղական հայ ավանդական փոռում)*
- *Վայրի Գաստրո (ծնեբեկ և ֆրուկ վայրի բնության գրկում)*
- *Նուշ հյուրատուն (Սասունի ավանդական կրուկիկ և հեղինավային նուշելը)*
- *Օրդ Աշտարակ (Սիրիահայ խոհանոց. իշլի ֆյուֆթա և շերտավոր խմորեղեններ)*
- *Թաթոնեայ Քոթուկ (ֆաղոր սուզուխ և հայկական թթու)*
- *Առաֆելյան Գարդեն (ավանդական ղավաշ և թրթնուր՝ թոնրում)*
- *Սոնա հյուրատուն (բույսերի, սնկի և հապասպրտուղների հավաքչություն և պապրասպրում)*
- *Մթնաֆոր ռեստորան (ֆկան կապամա)*
- *Այրարատ հյուրատուն (թոնրի ղավաշ և գաթա)*
- *Ար Արենի (խաղողի կենսապիկը՝ այգուց մինչև խոհանոց և գինու մասան)*

← Վարպետուհի դաս «Հաղարծնի Գաթայում»

ԳԱՍՏՐՈ ՏՈՒՐԻԶՄԻ ՄԻ ՔԱՆԻ ՎԱՅՐ

Սյունիքի մարզ
Միրհավ հյուրանոց | կողմա, փախլավա
Այստեղ կարող եք մասնակցել 4 կեսական փորձառության, որոնք ներկայացնում են տեղական՝ մասնավորապես Գորիսի խոհանոցային ավանդույթները, օրինակ՝ տեղական կողմայի և փախլավայի պատրաստման վարպետության դասերը: Կարելի է նաև հետևել օղու թորման գործընթացին, իսկ գինու համտեսին ներկայացված կլինեն «Մորինիորիի այգիներից» հայտնի գինիներ՝ սպանի, հայի և խաղողահամ մրգերի հետ մատուցված:

Եղևնուտ հյուրանոց | խաշիլ, թան
Սյունիքի խոհանոցի երկու գոհարները՝ խաշիլն ու թանը, կարելի է ոչ միայն փորձել, այլև պատրաստել ինքնուրույն: Վարպետության դասերը ղեկավարվում են կատակներով ու զրույցներով:

Վայոց Ձորի մարզ
Ընկուզենու տակ | գաթա, մեղր
Եղեգնաձոր խաղաքաղաքում կարող եք հյուրընկալվել Լիլիթի մոտ, մասնակցել ավանդական գաթայի պատրաստման վարպետության դասին, որի համային առանձնահատկությունը պայմանավորվում է թոնրում թխվելով: Այստեղ կարող եք մասնակցել նաև մեղրաքաղմանն և հետևել օղու թորման գործընթացին, ինչպես նաև համտեսել տնական օղիներ:

Շիրակի մարզ
Գեղագիտության ապգային կենտրոն, Գյումրի | թութար բորակի, փոխինջ
Պատրաստվեք սեփական ձեռքերով Գյումրու թե՛ հայտնի խաչատեսակները, թե՛ աղանդերները. սպանդիսաշ, ալերվոով ապուր և թութար բորակի, խաղողերից՝ փոխինջ, հալվա և բիշի:

Ստափուշի մարզ
Հաղարծին գաթա | գաթա
Այցելուները հնարավորություն կունենան մասնակցել գաթայի պատրաստման վարպետության դասի և թխել այն ավանդական փոռում: Այստեղ կան և՛ ավանդական, և՛ նոր, սրեղծագործական գաթաներ: Երբ գաթան պատրաստ լինի, հյուրերն այն կհամտեսեն թեյի, սուրճի և մուրաբաների հետ:

Սևանա լիճ | կողմա
Հյուրերին կներկայացվի ավանդական աղյուսե վառարանի և կեռուների օգտագործման պատմությունն ու ավանդույթները, որոնք բնորոշ են գարեաձաշոզանին: Սևանի խոհարարը կցուցադրի ինչպես պատրաստել ուրեսար կեռուում, այնուհետև այցելուները հնարավորություն կունենան պատրաստելու իրենց նախընտրած խաչատեսակը:

ՄԵՆՔ ՉԳՏՈՒՄ ԵՆՔ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ ՁԵՎԱՎՈՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԵՋ,– ԱՍՈՒՄ Է ՆԱՐԻՆԵՆ,– ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ:



Մեկ թիշտ հարց

Ռուզաննա Ծատուրյանը վստահ է, որ տալով ընդամենը մեկ ճիշտ հարց այս կամ այն ուտեստի վերաբերյալ՝ հնարավոր է լույս սփռել երկրի պատմության և անցած փոխակերպումների վրա: Նույնիսկ կարելի է պարզել, թե ինչպիսին էր մեր խոհանոցն ավանդական շրջանում և ինչպես այն փոփոխվեց, երբ եկավ Սովետական Միությունն իր պլանային տնտեսությամբ: Ինչպես դա բերեց նրան, որ այն խոհանոցից, որը մենք այսօր անվանում ենք հայկական ավանդական, առանձնացան երկու տարբեր ուղղություններ՝ արևմտահայկական և արևելահայկական: Պատմական դեպքերի արդյունքում, մասնավորապես Հայոց ցեղասպանության, բազմաթիվ հայեր իրենց մշակութային տեղանքից ստիպված եղան հեռանալ ու սփռվել ողջ աշխարհով: Ավանդական խոհանոցն այն տարրերից մեկն էր, որ թույլ տվեց նրանց պահպանել իրենց ինքնությունը: Իսկ Արևելյան Հայաստանը, որը դարձավ ԽՍՀՄ միասնական տնտեսության մի մասը, գնաց բոլորովին այլ ճանապարհով, և այստեղ ինքնության պահպանման ձգտումներն այդքան ուժեղ չեղան, ավելացան նոր, ունիվերսալ ուտեստներ:
Հայկական խոհանոցի բոլոր ուղղություններն իրենց հերթին ունեն ներքին բաժանումներ, ըստ երկրների, ռեգիոնների և մարզերի, դրա համար, վստահաբար, Հայաստանը թե՛ տեղացի, թե՛ օտարերկրյա ճամփորդներին առաջարկելու շատ բան ունի:

Հավելյալ տեղեկությունների համար՝
www.myarmenia.si.edu

Մարգարիտ Միրզոյան
«ԻՄ Հայաստան» ծրագիր

Անիվի պես պտտվող հեքիաթը

Դիլիջանն ունի ոչ միայն փառահեղ բնություն, թումո և միջազգային դպրոց: Քաղաքի այցելաբարդերիից մեկն արդեն մեկ դարից ավելի ժանեկագործությունն է: Համադրող Նայիրի Ռաչայուրեանը զրուցել է այդ արվեստի նրբությունների մասին ժանեկագործ Արմինե Պողոսյանի հետ:



Ասեղն է ձեզ մոտ եկել, թե՞ դուք եք գնացել ասեղին ընդառաջ:

— Ինձ համար ասեղնագործությունը գեղեցիկի չափանիշ է, սեփական հմտությամբ ու վարպետությամբ մշակույթի արտահայտություն: Հայ կանայք մեծ տեղ են տվել ձեռարվեստին ու աղջկան դաստիարակել այդ հոգով: Ես աչքերս բացել եմ ու տեսել մորս աշխատող ու արարող ձեռքերը: Մանկությունս անցել է այնպիսի միջավայրում, որտեղ իշխում էր ստեղծագործական միտքը, սերը: Նա շատ լավ գործում էր կեռասեղ՝ հելունով, հարթակար ասեղնագործություն էր անում: Փոքր էի, բայց արագ ընկալեցի այդ նուրբ գործիքի «լեզուն»: Սկսեցի ասեղի օգնությամբ իրար միացնել փոքրիկ կտորի դետալները: Աստիճանաբար վարժվեցի ասեղի հետ աշխատելու նրբություններին: Ասեղով արված յուրաքանչյուր աշխատանքի արդյունքն ինձ մեծ բավականություն էր պատճառում:

Ասեղը նուրբ գործիք է, սակայն միաժամանակ այն կարող է վնասել...

— Այո՛: Ասեղը շատ նուրբ է, բայց վտանգավոր գործիք է: Մանկուց սովորել եմ ուշադիր լինել և պահպանել ասեղի հետ աշխատելու անվտանգ գործընթացը: Այդ գիտակցությունն ավելի ամրապնդվեց, երբ Դիլիջանում հաճախում էի Հովհաննես Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոցը, որտեղ էլ ծանոթացա ժանեկագործության հիմունքներին շնորհիվ ուսուցչուհուս՝ Նուշիկ Մալխասյանի: Աշխատելու ընթացքում կարևոր էր հետևել ասեղից օգտվելու կանոններին՝ ճիշտ բռնել ասեղը ձեռքում, մաքուր պահել ձեռքերը, չմոռանալ ձեռքում սուր գործիքի առկայության մասին և աշխատելու ընթացքում միմյանցից որոշակի հեռավորություն պահպանել:

Ձեզ համար ինչ նշանակություն ունի ժանեկագործության ավանդույթը:

— Ասեղնագործությունը ժողովրդի հանճարի, արարող ձեռքի վկայությունն է: Այս բնագավառում դրսևորվում է մեր ժողովրդի գեղարվեստական ճաշակը, երևակայությունը, մարդուն շրջապատող արտաքին աշխարհի գեղեցկության գեղագիտական ընկալման կարողությունը: Վաստակաշատ արվեստաբան, ազգագրագետ Սերիկ Դավթյանը մեզ է փոխանցել ավանդական ժանեկագործության ուսումնասիրություններ: Նրա մասին Սարյանն ասել է. «Դա ոչ միայն կորստյան վտանգի տակ գտնվող մի արվեստ է, այլև մեր ժողովրդի պատմական ճակատագիրը ներկայացնող դիմագիծ»: Նրա աշխատանքն

← Արմինե Պողոսյանի ժանյակը, անֆեռական հավաքածու

Որտեղ տեսնել Դիլիջանի ժանյակները

Դիլիջանյան լավագույն ժանյակները ցուցադրված են Երկրագիտության (հիմնված է 1950 թվականին) և Ժողովրդական արվեստի (1979) թանգարաններում: Սերիկ Դավթյանի աշխատանքները կարելի է տեսնել երկու թանգարաններում:

1920-ականներին կառուցված շենքը լրաղեկնող թանգարանում պահվում և ցուցադրվում են հնագիտական իրեր՝ 1017 հատ, ազգագրական իրեր՝ 628 հատ, 391 կիրառական արվեստի իր, 353 գրաֆիկական աշխատանքներ, 409 գեղանկարներ, ֆոտոներ, 47 արծաթյա իր, որից 36-ը՝ մեդալադրամ, հնատիպ գրականություն՝ 39 կտոր:

Ժողովրդական արվեստի թանգարանը, որը հիմնադրվել է նկարիչ Հովհաննես Շարամբեյանի նախաձեռնությամբ, գտնվում է 19-րդ դարավերջում կառուցված շենքում: Թանգարանում ներկայացված են հայ ժամանակակից ժողովրդական վարպետների և ինքնուս ստեղծագործողների աշխատանքներ, ազգագրական արժեք ներկայացնող ցուցանմուշներ, կենցաղային իրեր՝ գորգեր, կարպետներ՝ ընդհանուր առմամբ 847 նմուշ:

← Սերիկ Դավթյանի ժանյակները Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահում

→ Արմինեն աշակերտների հետ Դիլիջանի Գեղարվեստի մանկական դպրոցում

այսօր էլ շարունակվում է նոր սերնդի միջոցով, որն էլ կրում, պահպանում և փոխանցում է ժանյակի ավանդույթը:

Նշեցիք Սերիկ Դավթյանի անունը. նա առաջին գիտնականն է, ով ուսումնասիրել է հայկական ժանեկագործության արվեստը և պատմությունը, հրատարակել գիտական հոդվածներ, կատալոգներ և ձեռնարկներ: Նրա աշխատանքներն ինչ նշանակություն ունեն Ձեզ համար:

— Սերիկ Դավթյանի մասին միշտ մայրս էր պատմում, թե որքան բազմաշնորհ, լայն մտահորիզոնի տեր անհատականություն է եղել: Դեռևս փոքր հասակից եմ նրա ստեղծագործություններին ծանոթ եղել: Դրանք զարմացնում են իրենց անթերի ու կատարյալ ձևով: Նրա լիցք-հարթակար աշխատանքները զարմացնում են իրենց գունային ճաշակով ու հեռանկարի ճիշտ զգացողությամբ: Պատկերացնում եք, նա չի օգտվել էսքիզից, այլ աշխատել է ինչպես պրոֆեսիոնալ գեղանկարիչը և տեսածն անմիջապես հանձնել կտորին: Երկրագիտական թանգարանում ցուցադրվում են նրա մի քանի ժանեկագործ աշխատանքներ, որոնք մեծ նշանակություն ունեն ինձ համար: Նրանք իրենց ձևով, գործվածքի հորինվածքով, հարուստ զարդաձևերով, ոճով ու բովանդակությամբ հոգեհարազատ են իմ աշխատանքային ոճին:

Ինչպե՞ս եք այն սերնդեսերունդ փոխանցում Դիլիջանի դպրոցի սաների միջոցով:

— Աշխատելու ընթացքում կարևորվում է պատմությունը՝ժանյակի հիմքից հասարակ թելից հյուսվող ու զարդանախշերի օգնությամբ հավերժության անիվի պես պտտվող հեքիաթը: Ես իմ սաների հետ փորձում եմ նորամուծություններ անել այդ ոլորտում:

Քսաներորդ դարի առաջին կեսին Դիլիջանում տարածված էին ասեղնագործության հետևյալ նախշերը՝ «խաչկար», «թելքաշ», «հարթակար», «կտրտովի», «լցնովի», «կանվա»: Նախշերի վերոնշյալ տեսակներն իրենց անվանումները ստացել են ըստ դրանցից յուրաքանչյուրի հիմքում ընկած կատարման տեխնիկայի: Ո՞ր նախշն եք Դուք ամենից հաճախ օգտագործում:

— Ասեղնակարերի տեսակներից ու նախշերից փորձել եմ բոլորը: Շատ զբաղվել եմ թելքաշ, հարթակար, լիցք տեսակներով, բայց ավելի հոգեհարազատ է ասեղնագործ ժանյակը: Շնորհիվ ասեղ-թելի ասեղնակարերի գործվածքը դառնում է զարդարանք: Տարածված են վարդյակի տարբեր տեսակները նռան, խաղողի, աստղաձաղիկների, բողբոջների պատկերներով: Որքան էլ տարատեսակներով արված լինեն ժանյակները, նրանք ունեն հորինվածքի ներդաշնակություն, պահպանում են զուգակշիռը, նախշերի կուռ միասնականությունը: Նրանք ինձ հիացնում են իրենց քնքշությամբ: Ժանյակի հիմքում ընկած ցանցը կազմում է բոլոր նախշերի սկիզբը: Նախշազարդ շերտերը կարվում են ավելի խիտ, սեղմ կարով ու միմյանցից տարբերվում և բաժանվում են թափանցիկ շերտով, տարբեր տիպերի նոսր ցանցով՝ ժանյակը դարձնելով օդային, թափանցիկ ու եթերային:

Ինչպե՞ս են անցնում զբոսաշրջիկների հետ ժանեկագործության ձեր դաս-աշխատանոցները: Հետաքրքրությունը մեծ է:

— Շատ մեծ հետաքրքրասիրություն կա զբոսաշրջիկների շրջանում: Երբ մարդիկ հետաքրքրված են ու լի էնտուզիազմով, աշխատանքը հեշտ է լինում: Մեր դասերին եկողները, որպես կանոն, միջին և բարձր տարիքի մարդիկ են, հիմնականում՝ կանայք: Աշխատանքի գործընթացն անպայման ուղեկցվում էր հայկական ժանյակի պատմությամբ:

Նայիրի Ռաչայուրեան
«ԻՄ Հայաստան» ծրագիր

Էներգիայի անսպառ աղբյուր

Սյունիքում հեղափոխիր վայրերի ու երևույթների պակաս, իհարկե, չկա, բայց դա չի նշանակում, որ պետք չէ բացահայտել նորը: Մարաճաշրջանը պարբմականորեն ունի կավագործության հարուստ ավանդույթներ: Դրանց շարունակողներից է վարպետ Վահագն Համբարձումյանը, որի արվեստանոցը Սիսիանում կարող են այցելել զբոսաշրջիկները: Համադրող Նայիրի Ռաչայուրեանը խոսել է վարպետի հետ իր արհեստի անցյալի, ներկայի ու ապագայի մասին:

Դուք զբաղվում եք աշխարհի և մարդկության պատմության հնագույն արհեստներից մեկով: Այս գործի շարունակող լինելը որոշակի պատասխանատվություն ենթադրո՞ւմ է:

— Իհարկե, և ոչ միայն շարունակելու, նաև հնարավորինս զարգացնելու և վերականգնելու այն, ինչը չի պահպանվել: Մենք շատ ունենք խեցեգործական բարձրարվեստ և ֆունկցիոնալության բարձր մակարդակի խեցեղեն, որոնք հիմա դուրս են մնացել ուշադրությունից: Իմ խնդիրը դրանց թե՛ գեղարվեստական, թե՛ ֆունկցիոնալության, թե՛ տեխնոլոգիական առումով վերադարձնելն է մեր ժամանակներ:

Հնագույն խեցեգործական աշխատանքները կավե առարկաներ էին (կժեր կամ անոթներ) կամ կավից պատրաստված արձանիկներ: Իսկ դուք բացառապես կիրառական առարկաներ եք ստեղծում: Ինչո՞ւ:

— Ինձ մոտ լավ էր ստացվում նաև քանդակի տեխնիկայով աշխատելը, բայց խեցեգործական հնագույն տեխնիկան ու տեխնոլոգիաները կլանեցին ինձ, ոչ մի տեղ չէի գտնում իրենց մասին մասնագիտական մանրամասն ուսումնասիրություններ, մանավանդ տեխնոլոգիաների ու զարդերի մեկնաբանման տեսանկյունից: Բայց չէ՞ որ հին ժամանակների խեցեգործները՝ Հայկի սերունդները, դեռևս չորս-հինգ-վեց հազար տարի առաջ արդեն անում էին մի բան, որ մեր ժամանակներում միայն 20-րդ դարի սկզբներին սկսեցին անել՝ համադրել ֆունկցիոնալն ու գեղեցիկը: Երբ նայում եմ հին ժամանակների աշխատանքները, մարմնովս հաճելի դող է անցնում. նյութի այնպիսի զգացողություն կա, այնքան բարձր ճաշակի մասին են վկայում, այնքան սեր, ակնածանք, վարպետություն կա... Դրանք են պատճառները, որ կլանեցին ինձ ու տարան մի աշխարհ, որի մուտքը հազարամյակների խորքերում է:

Հիշո՞ւմ եք՝ առաջին անգամ ե՞րբ եք փորձել ձեր ուժերը բրուտագործական անիվի վրա:

— Առաջին անգամ թաքուն եմ փորձել, չգիտեմ ինչու, այնտեղ, որտեղ սովորելու նպատակով աշխատում էի, ինձ թվում էր, որ դեմ կլինեն, եթե աշխատեմ դուրգի վրա, փոքրիկ բաժականման բան ստացվեց, հրաշք կատարվեց, հասկացա, որ դա հետաքրքրության ու սիրո սահմանագիծն էր, մարմնովս սարսուռ անցավ: Հաճույքն ու վախը խառնվել էին իրար՝ այն վախի նման, երբ սիրահարված պատանին ուզում է խոստովանել սիրած աղջկան իր սերը, բայց վախենում է, որ ոչինչ չի ստացվի: Հետո հասկացա, որ ինձ ոչինչ չի կարող կանգնեցնել ու հենց այդ օրվանից նախաձեռնեցի իմ առաջին դուրգի պատրաստման աշխատանքները: Անիվն ինձ համար էներգիայի անսպառ աղբյուր է, բայց սիրում եմ նաև ձեռքով ծեփել: Դուրգի վրա աշխատելն ինձ համար նման է կյանքի շրջապտույտի, անիվը պտտվում է և աշխատանքը ծնվում է, հետո, արդեն ձեռքով, սկսվում են մշակման աշխատանքները, սկզբում մշակվում է թաց վիճակում մի քիչ պնդելուց հետո, ապա երկրորդ անգամ՝ ավելի պնդելուց հետո, երրորդ անգամ՝ չորանալուց հետո, որից հետո մտնում է վառարան: Կախված աշխատանքի հաստությունից՝ թրծվում է իրեն համապատասխան ջերմային ռեժիմով, վառարանից դուրս գալուց հետո, աշխատանքի տեսակին համապատասխան, նորից անցնում է մշակման

↓ Վահագն Համբարձումյանը





մեկ կամ մի քանի փուլ, կամ ջնարակվում է ու նորից մտնում վառարան և այլն։

Դուք նաև ուսումնասիրություններ եք կատարում անցյալի կավագործական ավանդույթների մասին...

— Ասել իմ աշխատանքները կապված են հնագույն ավանդույթների հետ, կնշանակի շատ քիչ բան ասել՝ ոչ միայն կապված են, այլ հնագույն կավագործության ավանդույթները կազմում են իմ աշխատանքների հիմքը, ու հենց այդ հիմքի վրա էլ փորձում եմ կառուցել իմ ստեղծագործական, նաև տեխնիկական ու տեխնոլոգիական մասը։ Այո՛, շատ եմ ուսումնասիրել և շարունակ ուսումնասիրում եմ։ Համարում եմ, որ հայկական հնագույն ավանդույթները ներկայիս իմ աշխատանքների հետ կապված են այնքան, որքանով ես իմ ծնողների, կամ երեխաներս ինձ հետ կամ իրենց տատիկ-պապիկների։ Պատկերացնենք ծառ առանց արմատ, կամ թույլ արմատներով, կամ հզոր արմատային համակարգով. մենք ունենք այդ հզոր արմատային համակարգը ու հենց դրա համար էլ անհրաժեշտ է աճել այդ համակարգի վրա ու էլ ավելի հզորացնել այդ համակարգը, քանի որ ամեն նոր ճյուղ աճելիս ծառի վրա իր հետ նաև այդ ճյուղին համարժեք արմատ է ավելանում, որ սնվի այդ ճյուղը։ Ճիշտ եմ համարում սնվել մեր արմատային համակարգից՝ միևնույն ժամանակ հզորացնելով այն։

Ինչպե՞ս է զարգացել ձեր գործունեությունն այն բանից հետո, ինչ ձեր կավագործական աշխատանոցները սկսեցիք անցկացնել որպես զբոսաշրջային փորձառություն։

— Երբ որոշեցինք զբոսաշրջիկներ ընդունել մեր մոտ, դա որոշ չափով փոխեց մեր արհեստանոցի մթնոլորտը, մի ժամանակ աշխատում էինք մեր և պատվիրատուի համար, բայց հիմա նոր որակներ ձեռք բերելու անհրաժեշտություն առաջացավ, քանի որ արդեն անհրաժեշտ էր արտասահմանցուն ներկայացնել մեր մշակույթի մի կտոր, ու շատ հնարավոր է բավականաչափ տեղեկացված մարդկանց։ Նորից անհրաժեշտություն առաջացավ վերախմբագրել գիտելիքները, թերթել գրականություն՝ զբոսաշրջիկներին լավագույնս ներկայացնելու մեր մշակույթը։ Նաև տարածքի վերանորոգման խնդիր դրվեց։ Պահանջարկից ելնելով՝ նաև հայկական խոհանոց ունենալու հարց առաջացավ ու սկսվե՛ց...

Այստեղ ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել մեր գործընկերներին, որոնք ջանք ու եռանդ չխնայեցին վերը նշվածները կյանքի կոչելու մեր հետ միասին՝ ամենատարբեր տեսակի աջակցություններ տրամադրելով։ Մեր գործընկեր կազմակերպությունները՝ «Իմ Հայաստան» ծրագիրը, որի հետ փորձառությունը փորձառություն սարքեցինք, «Ինտեգրված գյուղական զբոսաշրջություն» ծրագիրը, որի հետ արվեստանոցն արվեստանոց սարքեցինք, ՓՄՁ ԶԱԿ և Եվրոմիության համատեղ ծրագիր, որի հետ խոհանոցը սարքեցինք, «Հայրենիք Միություն», որի հետ սանհանգույցը սարքեցինք։

Ինչ նշանակություն ունի այս արհեստագործական ավանդույթի ներկայացումը տեղացի և արտասահմանցի զբոսաշրջիկներին։ Սովորաբար ինչպիսի՞ արձագանքներ եք ստանում մարդկանցից։

— Արհեստագործությունը հրաշալի ավանդույթներ ունի և արտասահմանցի զբոսաշրջիկներին ներկայացնելն առավել քան կարևոր է։ Մենք համարում ենք զբոսաշրջությունը մշակութային երկխոսության նման մի բան և առիթը պետք է օգտագործել մեր մշակութային խոսքն ասելու և լավագույնս մշակույթը ներկայացնելու։ Մենք դրանով մեր նպաստն ենք բերում մշակույթի միջոցով Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը, հետևաբար նաև հզորացմանը։ Իսկ արձագանքները շատ տարբեր են, ու բոլորը դրական։ Տեղացի զբոսաշրջիկների մասով ուզում եմ ասել, որ իրենց հետ հետաքրքիր է, հատկապես երբ ուզում են սովորել ու ծանոթանալ իրենց պատմության հնագույն ժամանակների խորհրդանիշներին։

Որտե՞ղ խորհուրդ կտաք ուսումնասիրել կավագործության կարևոր նմուշներ։

— Սիսիանի Թանգարանում հսկայական թվով հրաշալի աշխատանքներ կան՝ տարբեր ժամանակների։ Հատկապես հավանում եմ մի ծիսական անոթ, որի վրա կա խոյի եղջյուրանման զարդանախշ։ Ծիսանոթը հայտնաբերվել է Զորաց քարերից։ Կան նաև հրաշք աղամաններ ու էլի ամենատարբեր ծիսական ու կենցաղային անոթներ, որոնց ուսումնասիրությունից մեր մշակույթի մասին կարողանում ենք պատկերացում կազմել։

↑ Արհեստանոցում կարելի է գնել պապրասպի իրեր

Նիկողայոս Արոնցի անվան Սիսիանի պատկերասրահ

Սիսիանի պատկերասրահը հիմնադրվել է 1989 թվականին, որպես Հայապատկերի պատկերասրահի մասնաճյուղ, իսկ 1993 թվականին սկսել է ինքնուրույն թանգարանի կարգավիճակ։ Թանգարանը գտնվում է 1937 թվականին կառուցված շենքում։ Թանգարանի ֆոնդերում պահվում են միայն Սիսիանի գարաճաշոցանը ներկայացնող մշակութային արժեքներ։ Թանգարանի ֆոնդը բաղկացած է հնագիտական և ազգագրական նյութերից։ Այստեղ կարելի է դիտել Զորաց Քարերի կայանատեղիից, Աղիտու, Լոր գյուղերից, Սիսիան քաղաքի գարբեր թաղամասերից պեղածներ։ Իսկ ազգագրական բաժինը ներառում է գարաճաշոցանի գորգարվեստը, ջեռագործը, արհեստները, գարակը։

Թանգարանը նաև հարուստ է գարբեր ժամանակների կավագործական նմուշների հավաքածուով։

← Վահագն ընտանիքի հետ

Նայիրի Ռաչպուրեան
«Իմ Հայաստան» ծրագիր

Փորձի փոխանակում

ԵՐԵՎԱՆՆ շփվել է Հայաստանի տարբեր մարզերում զբոսաշրջային փորձառություն առաջարկող մարդկանց ու կազմակերպությունների հետ, որոնք իրենց հմտությունները կարգապրել են «ԻՄ Հայաստան» ծրագրի ազակությամբ: Ուշադրություն դարձրեք, երբ կորոշեք Երևանից դուրս հանգիստ կազմակերպել:

Հեծյալ արշավներ Թումանյանի շրջանում, Լոռի

Զբոսավար Սարո Օհանյան

Մեզ կարող եք գտնել Լոռվա մարզի Թումանյանի շրջանում, այստեղ էլ 2016 թվականից անցկացնում ենք հեծյալ արշավներ: Ես մեծացել եմ այս կողմերում ու բոլոր սարերն ու ձորերը գիտեմ հինգ մատներիս պես: Շատ հաճելի է, երբ գործդ հյուրերին քո տունը ցույց տալն է, ներկայացնելն այն, ինչ գիտես ու սիրում ես: Կարծում եմ՝ վերջում մեր հյուրերն էլ այդ սիրով լցված են գնում մեզ մոտից:

Արշավները տարբեր տևողություն ունեն՝ մեկից մինչև հինգ օր: Ունենում ենք նաև քայլարշավներ, բայց հիմնականում հեծյալ շրջայցեր ենք իրականացնում: Ամենապահանջվածը կարճ երթուղիներից դեպի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից համաշխարհային ժառանգության օբյեկտ ճանաչված Հաղպատ-Սանահին վանական համալիրներ ուղղությունն է: Երկար երթուղիները ներառում են ամբողջ Թումանյանի շրջանը: Վերջինի դեպքում նաև այցելում ենք Օձուն, Հնեվանք, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան և Ծովեր լիճը Դսեղում:

Շրջայցերն անցկացնում ենք հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Լինում են դեպքեր, երբ ըստ պահանջարկի հատուկ տուրեր ենք մշակում: Օրինակ՝ անցյալ տարի մի հետաքրքիր շրջայց անցկացրինք: Անցնելով երեք մարզերով՝ հասանք Սևանա լիճ: Երկար տուրերի դեպքում, որտեղ հնարավոր է, հյուրանոցներում ենք մնում, իսկ լինում են դեպքեր, երբ վրաններում ենք գիշերում, դա էլ մի ուրիշ փորձառություն է: Բնականաբար երկարատև արշավների դեպքում պետք է նախապես ձիավարության գիտելիք ունենալ, իսկ մի քանի ժամանոց տուրերից առաջ մենք կես ժամանոց դասընթաց ենք անցկացնում այցելուի հետ:

Ընդհանուր առաջխաղացման հարցում մեզ աջակցել է «ԻՄ Հայաստան» ծրագիրը: Մասնակցել ենք նրանց կազմակերպած զբոսավարների վերապատրաստման դասընթացներին: Ծրագրի շնորհիվ ձեռք ենք բերել կամ էլ թարմացրել ենք մեր գիտելիքները՝ սկսած ճարտարապետությունից, հայոց պատմությունից, ավարտած մեզ ճիշտ ներկայացնելու և գովազդելու վերաբերյալ:

Գեղարվեստական կոլաժների ստեղծում, Վայոց ձոր

Նկարիչ-քանդակագործ Արտյոմ Երկաթ Ղազարյան

Ես կրթությամբ ճարտարապետ եմ, զբաղվել եմ դիզայնով, գեղանկարչությամբ, քանդակագործությամբ, փայտի, մետաղի, քարի ու այլ նյութերի ծավալային օբյեկտներ ու նաև կոլաժներ եմ ստեղծում: Վերջին տարիներին խորացել եմ երկաթյա կերպարների և կոմպոզիցիաների ստեղծման մեջ, բայց սա դարբնություն չէ: Երկաթը կենցաղային դաշտից բերել եմ մեկ այլ՝ գեղարվեստական դաշտ: Ի դեպ, մետաղի գեղարվեստական մշակման ժողովրդական վարպետ եմ:

Իմ աշխատանքի հիմքում իմպրովիզացիան է: Գնում եմ ըստ իմ տրամադրության ու երբեք չեմ կրկնօրինակում հինը: Նույնիսկ ինքս ինձ չեմ կրկնում: Հաճախ են ասում, որ իմ նկարած կտավներից յուրաքանչյուրը կարծես տարբեր հեղինակներ նկարած լինեն: Պետք է աշխատես դարի շնչով, քո աշխատանքներում պետք է նկատվի քո սեփականը, հակառակ դեպքում՝ ինչո՞վ ես տարբերվում ուրիշներից:

Միշտ ցանկացել եմ զբոսաշրջիկների հետ աշխատել, և «Իմ Հայաստան» ծրագրի աջակցությամբ մշակեցինք վարպետաց դասերի կոնցեպտ: Ամեն ազգ ունի իր գույները, ծավալներն ու կոնտրաստները, և իմ մոտ գալով՝ զբոսաշրջիկը կարող է տեսնել հենց այդ տիպիկ հայկական կոլորիտը: Նրանց հրավիրում եմ իմ պապենական տուն, ծանոթացնում իմ աշխատանքների հետ, այնուհետև տանում մեր բակը, որտեղ սեղանի շուրջ՝ թարմայի տակ անցկացնում ենք մեր վարպետաց դասը: Միասին կոլաժներ ենք պատրաստում՝ օգտագործելով ամենաանպետք առարկաները: Ծիրանի կորիզ, թռչնի փետուր՝ իրեր, որոնք այլ տարբերակով դժվար թե օգտակար լինեն, բայց կոլաժների դեպքում նոր կյանք են ձեռք բերում: Մի խոսքով՝ հյուրերիս տրամադրում եմ նյութեր, լրիվ ստեղծագործական ազատություն եմ տալիս: Ասում եմ ՝ կարող ես ծառի ճյուղ պոկել, կամ մի տեղից մի այլ դետալ գտնել և օգտագործել: Հետաքրքիր բան եմ նկատել. նրանից, թե ինչպես է մարդը համադրել իր կոլաժը, կարելի է գուշակել, թե ինչ տեսակ մարդ է՝ նրա բնավորությունն ու էությունը: Դասընթացն ավարտվում է, բոլորով իջնում ենք տան իմ ամենասիրելի հատվածը, որը կոչել եմ Օթաղ: Այդտեղ՝ տան նկուղային հատվածում, մեզ արդեն հյուրասիրություն է սպասում: Այնտեղ էլ զրուցում, շփվում ենք:

Հավելյալ տեղեկությունների համար՝

facebook.com/artyom.yerkat

facebook.com/medtrailrides

Վարպետության դասեր և թանգարանային խանութ Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահում, Գյումրի

Միքայել Վարդապետյան

Ես մանկուց շրջապատված եմ եղել արվեստով: Պապիկս՝ Խաչատուր Վարդապետյանը, ԽՍՀՄ-ի վաստակավոր նկարիչ էր: Ոգեշնչված իր ժառանգությամբ՝ որոշեցի ընդունվել Գեղարվեստի ակադեմիա, որն էլ ավարտելուց հետո մի քանի տարի զբաղվել եմ որմնանկարների վերականգնումով, այդ թվում՝ Մինաս Ավետիսյանի աշխատանքների: Վերադառնալով Գյումրի՝ շարունակել եմ ռեստավրատորի աշխատանքն Ասլամազյան քույրերի պատկերասրահում: Սկզբում միայն նկարիչ-վերականգնող էի, հետո սկսեցի համատեղել էքսկուրսավարի աշխատանքի հետ ու նաև կավով աշխատանքի վարպետաց դասեր եմ անցկացնում: Այս պահին նաև պատկերասրահի տնօրենի պաշտոնակատարն եմ: Ինձ համար շատ կարևոր է, որ կարողացա շարունակել զբաղվել արվեստով իմ ծննդավայրում, այն էլ այսպիսի առանձնահատուկ պատկերասրահում, որն ունի իր սեփական մշակութային խոր արմատները:

Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահը հիմնադրվել է 1987-ին, երբ Հայաստանում և ամբողջ Սովետական Միությունում հայտնի քույրերը որոշեցին սեփական բնօրինակ ստեղծագործություններից շուրջ 620-ը ներկայացնել իրենց ծննդավայրում՝ Գյումրիում, և առ այսօր նրանց նկարները, գրաֆիկ և կերամիկական աշխատանքները ցուցադրվում են մեզ մոտ:

Վերջին շրջանում ակտիվ աշխատում ենք խանութի ստեղծման վրա, որտեղ կվաճառվեն հուշանվերներ՝ պատրաստված Ասլամազյան քույրերի ոճով, տեխնիկայով և գունային լուծումներով: Հեղինակները լինելու են վարպետներ տարբեր մարզերից: Ասլամազյան քույրերի պատկերասրահն այն եզակիներից է Հայաստանում, որն ունի իր սեփական արտադրությունը և դա էր պատճառներից մեկը, թե ինչու որոշեցինք ստեղծել խանութը: Թանգարանը կերամիկական կրկնօրինակումներ էր անում ավելի փոքր՝ հուշանվերային տարբերակներով՝ օգտագործելով Ասլամազյան քույրերի ոճը, իրենց բնորոշ գույների բազմազանությունն ու տեխնիկան: Մեզ հարկավոր էր առանձնացնել մի տարածք, որտեղ այդ ամբողջ արտադրանքը կարելի էր իրացնել: «Իմ Հայաստան» ծրագրի աջակցությամբ սկսեցինք վերանորոգել սրահը, որը շատ շուտով կբացի իր դռները:

Նաև մշակել ենք «Հազար ու մի երանգ» վարպետության դասերը, որոնք իրենցից ենթադրում են մի ամբողջական ծառայությունների փաթեթ՝ ներառյալ շրջայց պատկերասրահով զբոսավարի ուղեկցությամբ, տեղացի արհեստավորի ուղեկցությամբ ծանոթացում պատկերասրահում ցուցադրված Ասլամազյան քույրերի գործերին, տեխնիկային և կերամիկական աշխատանքներին: Այնուհետև այցելուները մասնակցում են կավագործության դասընթացի, որտեղ պատրաստում են իրենց սեփական հուշանվերները կրկին ասլամազյանական ոճով և տեխնիկայի օգտագործմամբ: Վերջում էլ, բնականաբար, հյուրասիրություն, սուրճ, թեյ: Ի դեպ, այս իրավիճակն օգտագործեցինք սրճարանային տարածք ստեղծելու վրա: Հետագայում հյուրասիրությունները հենց այնտեղ էլ կանցկացնենք: Սուրճը մատուցելու ենք Ասլամազյան քույրերի ոճով ստեղծված սրճեփներով:

«Բասեն» հյուրանոց և շրջայցեր, Սիսիան

Հյուրանոցի սեփականատեր և մենեջեր Հասմիկ Ազոյան

«Բասեն» հյուրանոցը գտնվում է Սիսիան քաղաքում: Նախկին Արևմտյան Հայաստանի տարածքում՝ ներկայիս Երզրումի մերձակայքում, համանուն շրջան գոյություն ուներ: Հայոց Ցեղասպանության տարիներին մեր ընտանիքի նախնիները հենց այդտեղից եկել և բնակություն են հաստատել Սիսիանում: Ըստ իս, այս տեղանքի ամենակարևոր այցեքարտը Սյունիքի ժայռապատկերներին մոտ լինելն է: Մենք արդեն շուրջ տասը տարի փորձում ենք այն հայտնի դարձնել զբոսաշրջիկներին և պարբերաբար շրջայցեր ենք իրականացնում այստեղի տեսարժան վայրերով:

Մեր ամենահայտնի ուղղությունն Ուղտասարի 5-րդ հազարամյակի ժայռապատկերների հատվածն է: Նախկինում մեր շրջայցերը զբոսաշրջիկներին առաջարկում էինք ոչ ամբողջական փաթեթավորմամբ, այսինքն՝ այն կոմերցիոն նախագիծ չէր մեզ համար, պարզապես այցելուներին բացահայտում էինք Սիսիանը, օգնում, որպեսզի ճանապարհորդելու տարբերակներ գտնեն: Արդեն 2017-2018 թվականներին, երբ «Իմ Հայաստան» ծրագրի թիմը եկավ Սիսիան և նախաձեռնեցին զբոսավարների վերապատրաստման ծրագիր, ինքս դիմեցի և մասնակցեցի, քանի որ ինձ հաճույք է պատճառում այլ մարդկանց փոխանցել իմ գիտելիքն ու սերը Սիսիանի նկատմամբ:

Այդ ժամանակ մեր մոտ արդեն կար Ուղտասարի ժայռապատկերների շրջայցի կոնցեպտը, պարզապես կիսատ վիճակում էր: Պետք էր ճիշտ բրենդավորել այն և դարձնել ավելի կոմերցիոն: «Իմ Հայաստանն» իր հետ Սիսիան բերեց Թումո կենտրոնի սաներին, ովքեր մեզ հետ ունեցած զրույցից հետո պատրաստեցին «Բասեն Տուրի» լոգոն, որը շատ սիրեցինք, և հիմա այն, ներառելով ժայռապատկերային մոտիվներ, դառել է մեր վիզուալ ընկալման անբաժանելի մասը: Այժմ հենց այդ բրենդավորմամբ մենք առաջարկում ենք «Բասեն» հյուրանոցն ու զբոսաշրջային փորձառությունը մեր հյուրերին:

Ի դեպ, մի առանձնահատկություն էլ ունենք: Քանի որ Ուղտասարի ժայռապատկերները բավական մեծ հեռավորության վրա են գտնվում՝ շուրջ 3000 մետր, այնտեղ պետք է գնալ դրսից բերված ջիպերով, բայց քանի որ հենց Սիսիանում շատ են սովետական հայտնի Վազերը, մենք ընտրեցինք հենց դրանք՝ մտքում ունենալով սովետական ջիպ տուրի գաղափարը: Ցանկության դեպքում կարող ենք նաև հասարակ ջիպերով գնալ, բայց շատ հետաքրքիր փորձառություն է, հատկապես արտասահմանցիների համար, ովքեր գալիս ու միանգամից ընկնում են օֆռոդային սովետական միջավայր:

Հավելյալ տեղեկությունների համար՝
aslamazyanmuseum.com
facebook.com/Basenhotelandtours
www.myarmenia.si.edu

Մարգարիտ Միրզոյան
«Իմ Հայաստան» ծրագիր

Իր ծննդավայրի զբոսավարը

Սեփական մարկում զբոսաշրջության խթանման, ունեցած գիտելիքները ճիշտ օգտագործելու և ծննդավայրի հանդեպ սիրո մասին:

Տեղայի զբոսավարն ուրիշ է

Որևէ տարածքի հետ խորքային ծանոթության լավագույն ձևը ճամփորդելն է, ընդ որում, կարևոր է լինել ոչ միայն բոլորին հայտնի վայրերում, այլև այնտեղ, որտեղ քչերն են գնում, որտեղ կարելի է բացահայտել իրական ֆոլկլոր, նիստուկաց, մոռացված հուշարձաններ ու քիչ քայլված արահետներ: Այդ ծանոթությունն առավել ամբողջական է դառնում, երբ ճանապարհորդության ընթացքում ուղեկիցդ մեկն է, ով ծնվել ու ապրում է այդ տարածքում, ով էմոցիոնալ կապ ունի հողի հետ, ով տիրապետում է տարածքի պատմությանը ոչ թե որպես պարզապես տեղեկատվության, այլ որպես իր սեփական պատմության, ով գիտի բոլոր ծակուծուկները, գաղտնի ճանապարհները, լեգենդներն ու տեղացիներին: Բարեբախտաբար, Հայաստանում էլ շատ են տեղացի զբոսավարները, որոնց վերաբերում է այս ամենը: 2016-2017-ից «Իմ Հայաստան» ծրագիրը ձեռնարկեց մարզային զբոսավարների հավաքագրում: Հիմնական չափանիշը՝ զբոսավար լինելու ցանկություն, հիմնական նպատակը՝ օգնել տեղացիներին օգտագործել սեփական մարզի մասին իրենց գիտելիքները հօգուտ տարածաշրջանի և իրենց: Այսպես՝ ծրագրին միացան շատ երիտասարդ տարիքից մինչև հասուն տարիքի մարդիկ, որոնց մի մասն արդեն իսկ զբաղվում էին զբոսավարությամբ, իսկ մյուս մասն ուներ դրա մեծ ցանկությունը: Հավաքագրումից հետո «Իմ Հայաստանը» համագործակցեց Հայաստանում ամերիկյան համալսարանի հետ, Զբոսավարների միության ու ոլորտի մասնագետների հետ, կազմակերպեց դասընթացներ նորաթուխ զբոսավարների համար: Կազմակերպվեցին նաև հանդիպումներ երևանյան զբոսաշրջային օպերատորների հետ: Սա հնարավորություն տվեց զբոսաշրջային օպերատորներին ճանաչել մարզային զբոսավարներին և ընդգրկել նրանց մատուցած ծառայությունները մի քանի օր տևողությամբ զբոսաշրջային փաթեթներում:



Սյունիք. լքված գյուղերի հմայքը

Հայաստանի լանդշաֆտը բազմազան է, և հաճախ մեկ մարզում մի քանի տարածաշրջան է առանձնացվում՝ իրենց հատուկ զբոսաշրջային ուղղություններով: Օրինակ՝ Սյունիքը, լինելով Հայաստանի ամենամեծ մարզը, զբոսաշրջային մի քանի ուղղությամբ է աչքի ընկնում, որոնցից են Գորիսը և Սիսիանը: Երկու դեպքում էլ տուրերը կենտրոնացված են ոչ միայն քաղաքներում, այլև հարակից տարածքներում: Այսպես՝ Սիսիանում կան արդեն իսկ իրենց փորձառությունը, այսինքն՝ հստակ զբոսաշրջային ծրագիրը ձևավորած զբոսավարներ, ինչպես, օրինակ՝ Հասմիկ Ազոյանը, ով «Բասեն» հյուրանոցի հիմնադիրն է և դրան զուգահեռ զբոսավարական ծառայություններ է մատուցում հյուրանոցի այցելուներին. ջիփինգ դեպի Ուխտասար, ծանոթացում ժայռապատկերներին, քայլարշավ դեպի մոտակա հրաբխային գագաթները և այլն: Հասմիկ Ազոյանն ինքը միավորել է Սիսիանի մի քանի զբոսավարների: Ուխտասարի ջիփինգ տուրը, օրինակ, վստահվում է նաև Սասուն Բաղդասարյանին, ով, չնայած խմբում ամենաավագը լինելուն, մեծ ոգևորվածությամբ ու սիրով է կատարում իր աշխատանքը: Սիսիանի մեկ այլ ուղղությունը լքված գյուղերով դեպի Տաթև տանող ճանապարհն է, որը կարելի է անցնել Կատյա Բաբայանի երկօրյա քայլարշավի շրջանակում: Սա թերևս բոլորովին նոր, թեմատիկ փորձառություն է, որ հենց ինքը՝ Կատյան է մշակել «Իմ Հայաստան» ծրագրի հետ միասին և առաջարկում է զբոսաշրջային շուկային: Դեպի Գորիսի տարածաշրջան ուղղության տուրեր վարում է նաև երիտասարդ, էնտուզիազմով լի Վահագն Պետրոսյանը, ով այժմ Երևանում է բնակվում, բայց ամեն անգամ վերադառնում է ծննդավայր և ոչ մի տուր բաց չի թողնում:

Ընդհանուր առմամբ, Սիսիանի զբոսավարները մոտ 10-ն են: Ուրախալի է այն փաստը, որ նրանք աշխատում են մեկը մյուսի հետ մշտական կապի մեջ, զբոսաշրջային խմբերը միմյանց փոխանցում որևէ կոնկրետ լեզվի իմացության անհրաժեշտության դեպքում, օգնում և աջակցում միմյանց:

Սյունիքի մարզի մյուս կարևոր ուղղությունը Գորիսն է, մասնավորապես՝ Խնձորեսկը: Այստեղի զբոսավարները յուրահատուկ ընդարձակ քայլարշավներ են անցկացնում հին և նոր գյուղերով, լքված քարանձավներով և զբոսաշրջիկներին եզակի հնարավորություն ընձեռում

← Արդաված գյուղը
Վայոց ձորում

← Զբոսափար Սևադան Ուղղասարում

↑ Արշավ Սուրբ Կիրակի մատուռ Վահե Մայիլյանի հետ

← Ալբերտ և Ավետիք Վարդանյանները

շփվելու մարդկանց հետ, ովքեր ոչ շատ հեռավոր անցյալում ծնվել կամ ապրել են այդ քարանձավներում: Խնձորեսկի կամրջի մոտ միշտ կարելի է հանդիպել զբոսավար Սևադա Շահնազարյանին: Նա իսկապես միշտ այնտեղ է և յուրաքանչյուրը, ով գոնե մեկ անգամ այցելել է Խնձորեսկ, վստահաբար ճանաչում է նրան: Խնձորեսկի գիտակներից է նաև Հերմինե Դիլանչյանը: Այստեղ զբոսավարները ևս համախմբված են, դրան նպաստում է նաև «Խնձորեսկի վերածննդի հիմնադրամը»:

Վայոց ձոր. Արտավանի թաքնված բնությունը

Այս մարզի մասին ունեցած պատկերացումները բոլորովին փոխվում են Գառնիկ Գևորգյանի հետ կատարած ճամփորդությունից հետո: Նրան միշտ հաջողվում է նորովի բացահայտել Վայոց ձորը, այն ներկայացնել ոչ միայն իբրև լեռնոտ ու քարքարոտ լանդշաֆտ, այլ, որքան էլ որ զարմանալի է, որպես կանաչ ու սաղարթախիտ տարածք՝ ի դեմս իր հայրենի գյուղի՝ Արտավանի: Քայլարշավներ, վրանակաց, ձիավարություն. այս բոլորը Գառնիկի մշակած տուրի շրջանակներում է: Ընդ որում, նա ոչ միայն վարում է սեփական տուրերը, այլև աշխատում և համագործակցում է ոլորտին մոտ կազմակերպությունների հետ: Այսպես՝ WWF Armenia-ի շրջանակում Գառնիկն ընձառյուծի խնամակալ է: Ի դեպ, Գառնիկը համագործակցում է նաև HIKEArmenia-ի հետ: Այս կազմակերպության շնորհիվ Հայաստանում մշակվել և քարտեզագրվել են բազմաթիվ արշավական ճանապարհներ, լրկալ ուղեցույցեր, որոնք կարելի է գտնել www.hikearmenia.org կայքում կամ համանուն հավելվածում:

Շիրակ. Խարբերդսպեղական հայապի

Շիրակի զբոսաշրջությունը կենտրոնացած է հիմնականում Գյումրիում: Այստեղ զբոսավարների հետ հնարավոր է շրջել պատմական կենտրոնի փողոցներով, ծանոթանալ քաղաքի հին ու նոր շենքերի, ճարտարապետական կառույցների հետ, տեսնել հայտնի ֆիլմերում հանդիպող ծանոթ վայրերը: Գյումրիում ևս երիտասարդ զբոսավարները հիանալի համագործակցում են միմյանց հետ: Այս հարթ համագործակցությունը պայմանավորված է նրանով, որ Գյումրու տուրերը բազմազան են և յուրաքանչյուր զբոսավար ունի իր մասնագիտացումը: Այսպես, օրինակ, Գայանե Պապիկյանը մասնագիտությամբ ճարտարապետ է և զբոսաշրջիկներին ծանոթացնում է քաղաքի ճարտարապետությանը: Ավելի բազմազան են Լիզա Գասպարյանի տուրերը, որոնք կարող են մի քանի ուղղվածություն ընդգրկել:
Իսկ ահա Լիանա Ստեփանյանը «Արի Գյումրի» նախաձեռնությամբ զարկ է տվել աշակերտների և ուսանողների համար էքսկուրսիաների կազմակերպմանը և մի նոր մշակույթ ձևավորել: Թե՛ Երևանից և թե՛ այլ մարզերից ուսուցիչները հաճախ իրենց աշակերտներին նոր տեղեկություններ տալու գործը վստահում են Գյումրու երիտասարդ զբոսավարներին:
Այցը Գյումրի լիարժեք չի լինի առանց կերպարվեստին առնչվելու: Ալբերտ Վարդանյանը և նրա երկու որդին՝ Հրաչյա Վարդանյանը և Ավետիք Վարդանյանը, թերևս, ամենահայտնի գյումրեցի արվեստագետներից են: Զբոսաշրջիկները հնարավորություն ունեն ոչ միայն շրջայց կատարելու Վարդանյանների արվեստանոց, այլև հաջորդիվ շրջելու քաղաքում Ավետիք Վարդանյանի հետ, ով ևս մասնագիտությամբ ճարտարապետ է և յուրովի է ներկայացնում Գյումրու շինությունները:

Լոռի. բանաստեղծական լանդշաֆտներ

Թումանյանական Դսեղն ու իր շրջակայքը, ինչպես նաև Ալավերդին տեսնելու համար միշտ կարելի է դիմել Սարո Օհանյանին, ով կարող է օգնել, կազմակերպել, պատմել ու ցույց տալ, մի խոսքով՝ մարդ, ով միշտ այնտեղ է, երբ զբոսաշրջիկն իր կարիքն ունի: Նա նաև ձիավարություններ է կազմակերպում: Ալավերդու շրջակայքին ծանոթացնել միշտ պատրաստ է նաև տեղի երիտասարդ զբոսավարների խումբը, որի տուրերը բազմազան են: Իսկ ահա Չինաստանից ժամանած զբոսաշրջիկներին (երբ համավարակն ավարտվի ու սահմանները վերաբացվեն, իհարկե) հաճելիորեն կզարմացնի Ռոզա Հովհաննիսյանի չինարենի իմացությունն ու ակտիվ մասնակցությունը Դեբեդ գետի վրա իրականացվող ռաֆթինգներին:

Սևավուշ. Մարկ-թռչնադիտարան

Իջևանցի Վահե Մայիլյանը փայտագործ վարպետ է: Նա սիրով հյուրընկալում է զբոսաշրջիկներին, կազմակերպում վարպետաց դասեր, ապա ինքն էլ ուղեկցում նրանց դեպի տեղի փոքրիկ Սուրբ Կիրակի մատուռը, որը քչերին է հայտնի: Գինու սիրահարներին էլ Իջևանի գինու գործարանում կհյուրընկալի Էլինա Քոչարյանը, ով իրականացնում է շրջայց գործարանի տարածքով և գինու համտես, որում վարպետացել է «Իմ Հայաստան» ծրագրի կազմակերպած դասընթացների ժամանակ: Դավիթ Հովհաննիսյանն ու Ռուզաննա Ամիրյանն էլ Դիլիջանում են և տարատեսակ արշավներ են առաջարկում քաղաքի հյուրերին: Տավուշը յուրահատուկ է ոչ միայն խիտ բնությամբ ու գեղարվեստական մեծ ներուժով՝ ի դեմս Դիլիջանի ազգային պարկի, այն նաև թռչնագիտական կենտրոն դառնալու մեծ հեռանկար ունի՝ շնորհիվ թռչնատեսակների բազմազանության և էնդեմիկ թռչունների առկայության: Այլ կերպ ասած, հայ զբոսավարներն անհամար նյութ ունեն կիսվելու հյուրերի հետ:

Հավելյալ տեղեկությունների համար՝
www.myarmenia.si.edu

Հասմիկ Բարիսուդարյան
«Իմ Հայաստան» ծրագիր

Ներքին զբոսաշրջության հեռանկարով

ԵՐԵՎԱՆ-ը կրուցել է Սմիթսոնյան ժողովրդական կյանքի և մշակութային ժառանգության հայրուկ նախագծերի գնօրեն Հալլե Բաթվինի, Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Սուսաննա Սաֆարյանի և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, «Իմ Հայաստան» ծրագրի հետազոտական թիմի անդամ Ռուզաննա Ճատուրյանի հետ գիտահենք մշակութային զբոսաշրջության ներկայի և հեռանկարների մասին:

Սմիթսոնյան ժողովրդական կյանքի և մշակութային ժառանգության հայրուկ նախագծերի գնօրեն Հալլե Բաթվին

Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Սուսաննա Սաֆարյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, «Իմ Հայաստան» ծրագրի հետազոտական թիմի անդամ Ռուզաննա Ճատուրյան

Գիտահենք մշակութային զբոսաշրջություն

Հալլե Բաթվին

Գիտահենք և դասական զբոսաշրջության տարբերությունն այն է, որ վերջինիս դեպքում կարևորվում է դրա սպառողական կողմը, մինչդեռ հետազոտական մոտեցումները հնարավորություն են ընձեռում բացահայտել փոքր պատմությունները մեծ բովանդակության համատեքստում՝ թույլ տալով այդ պատմությունները կրող մարդկանց ստանձնել բանասացի դերը:

Գիտահենք մշակութային զբոսաշրջության զարգացման հայեցակարգը ծնվել է այն մեթոդներից, որոնք Սմիթսոնյան ինստիտուտը կիրառում է Folklife ամենամյա փառատոնը ստեղծելիս, որ տեղի է ունենում Վաշինգտոնում արդեն ավելի քան 50 տարի: Փառատոնի հիմնական նպատակներից է միավորել մարդկանց մշակութային փոխշփման միջոցով: Մասնակիցները ժամանում են տարբեր երկրներից և համայնքներից, որպեսզի ցուցադրեն իրենց մշակույթը: Մեր աշխատանքը միշտ սկսում ենք հետազոտությունից, և այդ մոտեցման արդյունքում մարդիկ գալիս են Folklife փառատոնին նոր մշակույթներ ճանաչելու համար:

Ռուզաննա Ճատուրյան

Հետազոտական մոտեցումը դարձնում է զբոսաշրջությունն ավելի մարդակենտրոն, բայց դրա հիմնական նպատակն է ստեղծել նախադրյալներ զբոսաշրջային առաջարկների դիվերսիֆիկացման և բովանդակային զարգացման համար: Սա միանշանակ մրցակցային առավելություն է ներկայիս ստանդարտ առաջարկներով լի շուկայում: Մարդիկ շատ ընդհանրական ընկալում ունեն հայկական մշակույթի վերաբերյալ:

«Իմ Հայաստան» ծրագրի հետ մենք փորձում ենք վերծանել այդ ընդհանրական առանձնահատկությունները՝ հետազոտելով այն բոլոր իմաստները, որոնք մարդիկ կցում են իրենց ստեղծած փորձառություններին և կարողություններին: Մուտք գործելով համայնքներ՝ մենք նախապես ունենք հետազոտությունների հիման վրա ծրագրի համար մշակված մարզային առանձնահատկությունների գաղափարները, որի շուրջ ուզում ենք կառուցել մեր զբոսաշրջային արդյունքը, բայց կարևորն այն է, որ եթե նույնիսկ մեկ մարզում մենք ունենք գինեգործությանը վերաբերող 3 տուրիստական առաջարկ, մենք ձևավորում ենք դրանք իրարից բացառապես տարբեր մոտեցումներով՝ բացահայտելով դրանց տեղական առանձնահատկությունները: Այն փորձառությունները, որոնց հետ մենք ծանոթանում ենք ծրագրի շրջանակներում՝ սկսած հայկական տուֆից, վերջացրած Գորիսի լոբով, հետազոտողների համար ևս հիանալի հնարավորություն են լինել մշակութային ժառանգության զարգացման դինամիկայի կիզակետում:

Սուսաննա Սաֆարյան

Հայաստանում զբոսաշրջությունը վերջին վեց տարիներին տեսանելի աճ է գրանցել՝ անցյալ տարի հասնելով 1,8 միլիոն այցելուի: Այս աճը պայմանավորված է հետևյալ երեք գործոններով՝ հարուստ պատմություն և մշակույթ, առատ վայրի բնություն, ջերմ ու հյուրընկալ մարդիկ: Մշակութային զբոսաշրջությունը, լինելով գերակա և շարունակ աճող ուղղություն Հայաստանի համար, դեռևս ունի չբացահայտված ներուժ՝ այնպիսի ռեսուրսներ ու կարողություններ, որոնք հաճախ կարիք ունեն ավելի խոր ուսումնասիրման, վերհանման, այնուհետև ճիշտ փաթեթավորման:

Զբոսաշրջության գիտահենք մոտեցումները բացահայտեցին, որ Հայաստանում կան նաև բազմաթիվ պատմություններ, որոնք, եթե նույնիսկ կապված չեն մեր երկրի հրաշք եկեղեցիների և տեսարժան վայրերի հետ, միևնույն է, զբոսաշրջային արժեք են ներկայացնում: Որպես արդյունք՝ մարզերում բնակվող շատ մարդիկ ներգրավվեցին զբոսաշրջության ոլորտում: Ինչպես, օրինակ՝ որևէ տեղանքին հատուկ հայկական արհեստն ու արվեստը մատուցվում է

յուրովի՝ միաձուլելով զբոսաշրջիկի անհատական փորձառությունը, մարդկային շփումները և վերջնարդյունքը որևէ հուշանվերի տեսքով, որը զբոսաշրջիկը վերցնում է իր հետ՝ առավել սերտ և մնայուն կապ ստեղծելով տվյալ զբոսաշրջային վայրի մարդկանց հետ:

Նոր կրեսակի կբոսաշրզություն Հայաստանում

Ռուզաննա Ծատուրյան

Գիտահենք մշակութային զբոսաշրջության մոդելի ներդրման համար մեզ հարկավոր է ձևավորել համակարգված քաղաքականություն՝ մշակութային ժառանգության պահպանության համար: Պետք է ունենանք հստակ պատկերացում, թե ինչ է ապրող մշակութային ժառանգությունը, այլ ոչ թե մնանք դրա արհեստական բեմականացման աստիճանում, երբ դու զբոսաշրջիկի առջև ներկայացում ես խաղում: Նման մոտեցումը չի կարող նպաստել կայուն զարգացմանը: Ինձ համար շատ կարևոր է, որ «Իմ Հայաստան» ծրագիրը, հիմնված Սմիթսոնյան ինստիտուտի ստանդարտների վրա, կենտրոնանում է իրական՝ ապրող մշակութային ժառանգության վրա: Հետազոտության վրա հիմնված մոտեցումը կօգնի պահպանել էթիկայի կանոնները, տարանջատել իրական արժեքներ, անկեղծ լինել զբոսաշրջիկի հետ: Ոչ թե ներկայացնել նրան այս կամ այն ավանդույթը, այլ կիսվել դրանով՝ այն տարբերակով ինչպիսին այն կա այսօր:



Սուսաննա Սաֆարյան

Համագործակցելով միջազգային գործընկեր կառույցների հետ՝ Զբոսաշրջության կոմիտեն շեշտադրում է ծառայությունների բազմազանեցման կարևորությունը՝ խրախուսելով մշակույթը, մարդկային կենցաղը ներկայացնող նախագծերի իրականացումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ազգագրական տեղեկատվությունների հավաքագրումն ու փաթեթավորումը:

Վերջին շրջանում բազմաթիվ նոր և բազմազան նախագծեր են իրականացվել, և կյանքի կոչվել գործընկեր կառույցների կողմից, որոնք արագորեն կարողացել են իրենց տեղն ու պահանջարկը գտնել շուկայում, հայտնի դառնալ և սիրվել զբոսաշրջիկների կողմից: Դրանց վառ օրինակներ են «Իմ Հայաստան» ծրագրի արհեստագործական բաղադրիչով ձևավորված փորձառությունները, ՄԱԶԾ կողմից ստեղծված գաստրոբակերը, Հայաստանում իրականացվող բազմաթիվ փառատոները, միջոցառումները և այլն:

Բախումը համաեարակի հետ ու ելքի նոր եանապարհներ

Սուսաննա Սաֆարյան

Այս պահին կառավարության բոլոր ջանքերն ուղղված են անվտանգության երաշխիքների ստեղծմանը, որոնք թույլ կտան կամաց-կամաց վերականգնել զբոսաշրջությունը և ստեղծել ապահով պայմաններ օտարերկրյա քաղաքացիների համար: Միջազգային գործընկերների հետ մշակում ենք զբոսաշրջիկների հյուրընկալման, սպասարկման անվտանգ կանոններ: Վստահ եմ, երբ այս ամենը վերջանա, զբոսաշրջիկների բնութագիրը կփոխվի, նրանց համար առաջնային կարևորություն կունենա ապահովությունը, և Հայաստանը պետք է ներկայացնի իրեն որպես երկիր, որտեղ կարելի է գալ ոչ միայն մշակութային փորձառության, տեղական կոլորիտի կամ գեղատեսիլ վայրերի և համալիրների համար, այլ նաև ապահովության նկատառումներից ելնելով:

2019-ին Հայաստանի ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 1,544,600 մարդ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 41.4 տոկոսով: Արտաքին փակ սահմանների պարագայում ակնհայտ էր, որ մեծ թափ է ստանալու ներքին տուրիզմը: Ներքին զբոսաշրջության խթանման արդյունքում ակտիվացել է ներքին զբոսաշրջային ենթակառուցվածքների գործունեությունը հատկապես մարզերում, ինչն իհարկե դրական կանդրադառնա մարզերում սոցիալ-տնտեսական կյանքի աշխուժացման վրա: Այստեղ միակ խնդիրը նրանում է, որ Հայաստանը շատ մեծ երկիր չէ, և մարդկանց քանակը նույնպես մեծ չէ, այդ իսկ պատճառով հույսը դնել միայն ներքին տուրիզմի վրա՝ չենք կարող, պետք է կոմպլեքսային լուծում, որը կներառի զբոսաշրջության բոլոր մոտեցումները:

Հալլե Բաթվին

Տնտեսական զարգացման տեսանկյունից հույս դնել միայն ներքին տուրիզմի վրա, բնականաբար չի կարելի, այնուհանդերձ կա մի «բայց»: Արդեն տևական ժամանակ է «Իմ Հայաստան» ծրագրով աշխատում ենք մարզերում բնակվող շահառուների հետ: Արդյունքում ինձ պարզ դարձավ, որ Հայաստանում կա շատ մեծ մշակութային ժառանգություն ոչ միայն Երևանում, այլ նաև ամբողջ երկրում: Ներքին տուրիզմը բնականաբար չի կարողանա փոխարինել 1.8 միլիոն արտասահմանյան զբոսաշրջիկներին, բայց նմանատիպ իրողությունները դարձնում են աշխարհը ավելի փոքր և ցույց են տալիս, որ այն երկրները, որոնք ունեն լավ կապեր սեփական տարածքի ներսում՝ տեղական և մարզային, կարող են ավելի դիմակայուն գտնվել աղետների ժամանակ: Սա միակ ճգնաժամը չի լինելու, որով մենք անցնելու ենք: Շատ կարևոր է կարողանալ զարգացնել մեր ներքին զբոսաշրջային ոլորտը: Թե՛ արտասահմանից եկած զբոսաշրջիկը, թե՛ Երևանում բնակվող մեկը, գալով և դառնալով այս փորձառություններից մեկի մասնակիցը, վստահաբար մի նոր բան կսովորի իր սեփական երկրի մասին, ինչը նախկինում չգիտեր:

Գիրականի և կբոսաշրզության հարումը

Հալլե Բաթվին

Առհասարակ մեր թիմի և հետազոտողների գործառույթներից մեկն է ստեղծել կամուրջ ակադեմիական հետազոտությունների և տուրիզմի ոլորտի միջև: Կարծում ենք՝ հիմա արդեն բավական առաջ ենք գնացել և կարողացել ենք ինտեգրել հետազոտական տարրերը զբոսաշրջային փորձառությունների զարգացման գործընթացում: Դրա վառ օրինակն է «Իմ Հայաստան» ծրագրի և հետազոտողների համատեղ աշխատանքը: Սկզբում «Իմ Հայաստանը» պիլոտային ծրագիր էր, և Սմիթսոնյան ինստիտուտն առաջին նմանօրինակ փորձն էր: Այս տարի մենք նաև աշխատում ենք Folklife Festival Incubator նախագծի վրա՝ օգնելով այլ փառատոների ներդնել այն հետազոտական մոտեցումները, որոնք մենք օգտագործում ենք Folklife փառատոնի շրջանակներում Վաշինգտոնում, ինչը թույլ կտա նոր բովանդակությամբ և գիտահենք պատմություններով լցնել այդ փառատոները:

Ռուզաննա Ծատուրյան

Մարզերում միշտ անցկացվում են փոքր տեղական փառատոներ, որոնք լավ հնարավորություն են ներկայացնելու մեր մշակութային ժառանգությունը: Folklife Festival Incubator-ը մեկ այլ բաղադրիչ է, որը կնպաստի մշակութային զբոսաշրջության կայուն զարգացմանը: Մենք փորձում ենք ներդնել Սմիթսոնյան ինստիտուտի փառատոների անցկացման մոտեցումները: Ավելացնել այդ փառատոներին մարդկային պատմությունների արժեքը, զգացմունքները՝ քաջալերելով վարպետներին ներկայացնել իրենց պատմություններն ու կատարած աշխատանքը: Սա հետազոտողների համար շատ հետաքրքիր փորձ է մեր գիտելիքն ու աշխատանքը հանրամատչելի ֆորմատի մեջ դնելու, համադրելու այն մարդկային պատմությունների հետ՝ միևնույն ժամանակ պահպանելով տնտեսական ռացիոնալությունը, առանց վնասելու բովանդակության որակին:

Ներքին տուրիզմը կարող է լավ ուղերձ լինել մայրաքաղաքում և, ինչու չէ, մարզերում բնակվող մարդկանց համար, թե ինչպես նման դժվար պահերի կարելի է աջակցել միմյանց:

Մարգարիտ Միրզոյան
«Իմ Հայաստան» ծրագիր

→ Երևանի գինու օրեր

Փառատոնային ընդմիջում

Ինչպե՞ս որոշ փառատոներ կեղափոխվեցին առցանց հարթակներ, իսկ մյուս փառատոները սկսեցին պատրաստվել հազորդ տարվան: ԵՐԵՎԱՆ-ը կրուցել է փառատոնային ոլորտում գործող անձանց հետ, պարզել, թե ինչպես է ոլորտը հարմարվում փիրող համաճարակային իրավիճակին, ինչ մարտահրավերներ և հնարավորություններ են առաջանում արդյունքում:

↑ Հայաստանը խաղաղության խաչմերուկում փառատոն

Մարվա լավագույն ժամանակը

Առաջին տաք ցիկլոնի հետ Հայաստանում բացվում է փառատոնային սեզոնը: Երկրի ամենատարբեր հատվածներում տեղադրվում են տաղավարներ, հնչում է կենդանի երաժշտություն, մարդիկ զբոսնում են, շփվում, ուրախանում, զգում են իրենց մի մեծ իրադարձության կարևոր դերակատար: Դա Հայաստան այցելելու լավագույն ժամանակն է, տեղական փառատոնների քանակն էլ գնալով աճում է: Այս տարի նախատեսվածը չիրականացավ, հայտնի պատճառով: Թեև համաճարակային իրավիճակը մեծ հարված հասցրեց զբոսաշրջային ոլորտին, բայց ճանաչելով մեր երկիրը և մարդկանց՝ ակնհայտ է, որ այս ամենի ավարտից հետո փառատոնային մշակույթն էլ ավելի մեծ թափ կառնի:

2017 թվականին «Իմ Հայաստան» ծրագրի աջակցությամբ ստեղծվեց «ՖեստիվԱր» հայկական փառատոների ասոցիացիան, որի հիմնական նպատակն է մեկ հարթակի շուրջ միավորել երկրում կազմակերպվող բոլոր փառատոները, աջակցություն տրամադրել անդամ փառատոներին, ստեղծել կարողությունների զարգացմանը միտված նախաձեռնություններ, խթանել ընդհանուր փառատոնային քաղաքականության մշակումը և համակարգել փառատոների գրաֆիկները: Սկզբում ասոցիացիան ուներ ընդամենը 10 անդամ, իսկ այսօր արդեն 25 անդամ և 33 փառատոն, ինչն էլ վկայում է, որ ոլորտը գնալով զարգանում է:

«ՖեստիվԱրի» խորհրդի նախագահ Վազգեն Գալստյանը լավատես է տրամադրված, իր խոսքով չնայած ժամանակավոր բարդություններին, նույնիսկ նպատակ կա Հայաստանը դարձնել աշխարհի փառատոնային մայրաքաղաքներից մեկը: «Մայիսից սկսած գրեթե ամեն շաբաթ-կիրակի փառատոներ ենք ունենում, տուր օպերատորները մեկ կամ երկու շաբաթ տևողությամբ փաթեթներ են ստեղծում, որպեսզի զբոսաշրջիկները կարողանան միանգամից մի քանի փառատոնի մասնակից դառնալ,– ասում է Վազգենը:– Ձգտում ենք ունենալ ոչ թե նման մեկ կամ երկու շաբաթ, այլ ամիսներ: Համաճարակը խանգարեց, բայց մոտ ենք»:

Նախկինում Հայաստանում կազմակերպվել են տեղական նշանակության փառատոներ, որոնք ոչ մի կերպ չեն անցել Հայաստանի սահմանը՝ անհայտ մնալով օտարերկրացիներին: Հիմնական պատճառը մասնագետների և կարողությունների պակասն էր: Այսօր երկիրն արդեն ի վիճակի է ընդունել ավելի մեծ թվով զբոսաշրջիկների հոսք ու դարձնել Հայաստանը փառատոնային ուղղություն: «Փոխվել է փառատոների ֆորմատը: Նախկինում ավելի շատ էր տոնավաճառի կոմպոնենտը, իսկ այժմ տարբեր ժամանցի տեսակներ են ավելացել, համերգներ, վարպետաց դասեր,– ասում է «Իմ Հայաստան» ծրագրից Ալիսա Սարգսյանը:– Այսինքն՝

← Թթի փառատոն

↓ Էկոպուրիպի փառատոն

← Հայբույս փառատոն

→ Համով-հոտով փառատոն

փառատոնները դարձել են մի վայր, որտեղ դու գալիս ես մի նոր փորձառության հետևից, այլ ոչ թե միայն զնումներ կատարելու»:

Առյուծյ գինեխմություն

Ամեն ինչ այսպիսի դրական դինամիկայով էլ կշարունակվեր և մոտ ապագայում Հայաստանը կկարողանար գործի դնել իր ամբողջ զբոսաշրջային ներուժը, բայց աշխարհում սկսվեց կորոնավիրուսի համաճարակը, և փառատոնի կազմակերպիչները ստիպված եղան դիմել պլան Բ-ի: Լավագույն այլընտրանքն այս իրավիճակում փառատոնների առցանց ձևաչափին անցնելն էր, և ասոցիացիան խրախուսեց իր անդամ փառատոներին զնալ հենց այդ ճանապարհով:

«Միգուցե կոմերցիոն տեսանկյունից առցանց հարթակներում փառատոն անցկացնելն այդքան էլ շահութաբեր նախաձեռնություն չէ,– ասում է Ալիսա Սարգսյանը,– բայց առաջխաղացման առումով այն հավելյալ բովանդակություն ստեղծելու հնարավորություն է»: Առաջինը դա արեց Էվենտտուրա ընկերությունը՝ անցկացնելով Երևանի Գինու Օրեր փառատոնն օնլայն եթերում: Սա կոմերցիոն նախագիծ է, բայց նրանց առաջնային նպատակը գինու մշակույթի և ոլորտի առաջխաղացումն է, և երբ զրուցելով գինեգործների հետ՝ պարզեցին, որ իրենց մոտ նույնպես աշխատանքը կանգնած է, որոշեցին, որ չեն կարող պարզապես չեղարկել փառատոնը և սպասել, թե ինչ կլինի: Սկզբում մտածում էին հնարավորություն տալ գինեգործներին ներկայացնել իրենց, միգուցե նաև պրոմո ակցիաներ կազմակերպել, բայց ստացված արձագանքներից հասկացան, որ հասարակական պահանջ կա, և որոշեցին անցկացնել առցանց փառատոն: Ընթացքը բավական բարդ էր, քանի որ մնացել էր ընդամենը մեկ ամիս, իսկ անցկացման օրերը փոխելու մտադրություն չկար:

Գինու օրերի հատուկ տրամադրությունը պահպանելու համար Էվենտտուրան որոշեց հեռարձակել փառատոնը հենց Սարյան փողոցից: Պարզվեց, որ գործընկերներից մեկը բնակարան ունի հենց Ին Վինոյի վերևում, այդտեղ էլ կազմակերպեցին միացումը: Նրանք հրավիրեցին քաղաքի լավագույն գինեգետներին և կազմակերպեցին մի քանի վարպետության դաս մեկ եթերի ընթացքում: «Մեզ համար միշտ շատ կարևոր է եղել միջոցառման բովանդակային հատվածը և առցանց տարբերակը բացառություն չէր,– ասում է Էվենտտուրա ընկերության համահիմնադիր Մերի Բաղալյանը:– Երբ կա բովանդակություն օֆլայնում, առցանցը վստահաբար կաշխատի»: Եթերը պլանավորած հինգ ժամվա փոխարեն տևեց յոթ ժամ: Հաղորդավարուհի Հերմինե Ստեփանյանը և DJ Guevo-ն յոթ ժամ անընդմեջ եթերում էին: Նկարահանումներ իրականացնում էին Սիվիլնեթի և Dream Shots-ի թիմերը:

Օնլայն բույս

Այնուհետև վիրտուալ հարթակ տեղափոխվեց նաև Հայբույս փառատոնը, որն անցկացվում է Տավուշի լեռներում: Փառատոնի կազմակերպիչները վստահ են, որ մարդն ավելի հոգատար է նրա հանդեպ, ինչ սիրում է, իսկ սիրել կարող է այն, ինչը ճանաչում է: Այդտեղից էլ փառատոնի կարգախոսը՝ պահպանում ենք այն, ինչ գիտենք, գիտենք այն, ինչ սիրում ենք: Իր իրական տարբերակով փառատոնը շատ բազմաշերտ է: Նախորդ տարիներին մի հատվածում կարելի էր ուրախ երգ ու պարի մասնակցել, իսկ մեկ այլ մասում կարելի էր, օրինակ, վայելել լռությունն ու վայրի բնությունը: Նախ և առաջ որոշում կայացրին թեկուզ մասամբ հրաժարվել Zoom-ային տարբերակից: «Մարդիկ այս վերջին ամիսներին առանց դրա էլ շատ էին ժամանակ անցկացնում օնլայն զանգերի և տեսակապերի մեջ, իսկ մեր փառատոնը տեղի էր ունենալու շաբաթ օրը, երբ մարդիկ ուզում են զբոսնել, վայելել բնությունը,– պատմում է Հայբույսի հիմնադիրներից Իրինան:– Այդպես որոշեցինք տեսահոլովակների տարբերակով գնալ»: Առհասարակ Հայբույս փառատոնի վերջում բոլոր մասնակիցների և այցելուների հետ պատրաստում են մեծ բրդուճ՝ օգտագործելով պանիր, հայկական խոտաբույսեր և լավաշ: Փառատոնի այս տարվա միակ առցանց, ուղիղ միացումով տարրն այդ բրդուճի պատրաստումն էր, իսկ լավագույն բրդուճի բաղադրատոմսի հեղինակները մրցանակներ ստացան: Կազմակերպիչները հոլովակների համար ունեին երկու նախապայման. դրանք պետք է լինեին ուսուցողական և գեղեցիկ, քանի որ այս տարվա փառատոնի թեման հենց գեղեցկությունն էր:

Օրինակ՝ «Կարա Սիլվեր Սալոնը» նկարահանեց հոլովակ, որտեղ պատմում է արծաթի մասին, Դիլիջանի «Պապանինո Հաուզ» սրճարանի շեֆխոհարարը ներկայացրեց ավելուկով բրուսկետա պատրաստելու բաղադրատոմս, իսկ փառատոնի երկար տարիների մասնակից Աստղիկ Ամիրբեկյանը փոքր վարպետաց դաս էր նկարահանել թարմ ծաղիկներից պանո գործելու մասին: Մեկ այլ տեսահոլովակում պատմում էին տոլմայի պատրաստման համար ազնվամորու և խաղողի տերևների պահածոյացման գաղտնիքներից (ձեզ պետք կգա լուցկի): Բոլոր մասնակիցները շատ լուրջ էին վերաբերվել արձագանքին, իսկ արդյունքները հրաշալի էին (տեսահոլովակներն առկա են Հայբույս փառատոնի ֆեյսբուքյան էջում): Իսկ Տավուշի մշակութային ժառանգությունը ներկայացնելու նպատակով ավանդական տեղական վրանի պատրաստման մասին հոլովակ նկարահանվեց:

Նորը, ավելի լավը

Անկախ ամեն ինչից, ըստ Վազգենի, տվյալ իրավիճակն իր առավելությունները նույնպես ուներ: Իր համար պարզ դարձավ, որ այսուհետ փառատոները պարտադիր ներառելու են առցանց տարր, քանի որ օնլայնը չգնահատված ռեսուրս է, որ պիտի օգտագործենք: Սա երբեք չի փոխարինի իրական մթնոլորտին, բայց մարքեթինգի տեսանկյունից այն կարող է մեծ խթան դառնալ ոլորտի զարգացման համար: Բացի այդ, այս ժամանակավոր դադարը լավ առիթ է ոլորտի ներկայացուցիչների համար մի պահ կանգ առնելու, խոր շունչ քաշելու և հասկանալու, թե ուր են գնում: «Փառատոնն իրադարձային տուրիզմի կարևոր տարր է և շատ լավ հնարավորություն որպես երկիր լավ տպավորություն թողնելու օտարերկրացի հյուրերի վրա,– համոզված է Վազգենը:– Մենք հիմա ունենք ժամանակ այս ամենի մասին լավ մտածելու և նոր գաղափարներ գեներացնելու համար»:

Մարգարիտ Միրզոյան
«ԻՄ Հայաստան» ծրագիր

Իմ ձեռագործ Հայաստան

Դեպի Հայաստանի մարզային համայնքներ զբոսաշրջության խթանման, արհեստների վերաիմաստավորման, ավանդույթների վերականգնման ու դրանց ժամանակակից մատուցման խնդիրների մասին խոսեցինք «Իմ Հայաստան» ծրագրի ջեռնարկությունների վարգացման ավագ մասնագետ Աշխեն Ռուդավերդյանի հետ:

Ուսումնասիրություն և վերաիմաստավորում

Արվեստն ու արհեստը դարեր շարունակ կարևորագույն դեր են խաղացել հայ ժողովրդի կյանքում: Բայց դրանցից չկտրվելու համար անդադար վազվզոցով և ինֆորմացիոն հոսքերով լի 21-րդ դարում անհրաժեշտ են նոր լուծումներ: Ահա թե ինչու մի քանի տարի առաջ ծնվեց «Իմ Հայաստան» ծրագիրը, որն աջակցում է Հայաստանի մարզային համայնքներում փայտի և քարի փորագրության, տեքստիլի, ասեղնագործության, գորգագործության, կավագործության և այլ ավանդական արհեստների վերականգման գործընթացին, նպաստում դրանց ճիշտ մատուցմանը մարքեթինգի տեսանկյունից և օգնում հասանելի դառնալ զնորդին: «Իմ Հայաստան» ծրագիրը մեկնարկել է 2016 թվականից, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և իրականացվում է Սմիթսոնյան ինստիտուտի կողմից: Ծրագրի գործընկերն է Տերյան մշակութային կենտրոն ՀԿ-ն:

Բոլոր կողմերի համար էլ մեծ պատասխանատվություն էր ծրագրի իրականացումը: Այդ պատճառով ծրագրի հիմքում դրվեց հետազոտական աշխատանքը: Առաջին տարում համագործակցությունը սկսվեց Հայաստանի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ: Ազգագրագետների իրականացրած հետազոտություններն ու հավաքագրված պատմությունները հիմք հանդիսացան հետագա ծրագրի հիմնական բաղկացուցիչների ձևավորման համար՝ նոր ստեղծված զբոսաշրջային փորձառություններ, փառատոներ, թանգարաններ ու արհեստագործ վարպետներ:

«Ազգագրագետների և մեր մյուս փորձագետների միջոցով 5 մարզում 100-ից ավել արհեստագործի էինք ցուցակագրել, որոնց համար սկսեցինք դասընթացներ վարել մարքեթինգի, դիզայնի վերաբերյալ, սովորեցրել, թե ինչ է արհեստագործական դիզայնը, գնագոյացումը, ինչպես կատարել հաշվարկը և այլն: Այս դասընթացների նպատակը ծրագրի և վարպետների միմյանց հետ ծանոթանալն էր: Իհարկե, ոչ բոլոր ցուցակագրված վարպետները շարունակեցին մեզ հետ համագործակցությունը: Այժմ 5 մարզում ունենք մոտավորապես մինչև 60 ակտիվ վարպետ, որոնց հետ ակտիվ համագործակցում ենք»,– պատմում է Աշխենը:

Վարպետների հետ աշխատում էր նաև «Տերյան» մշակութային կենտրոնը, օգնում, որպեսզի պատրաստվող իրերը լինեին ավելի ֆունկցիոնալ և տուրիստի համար առավել հաճելի, իսկ վարպետներն էլ չվատնեին իրենց տաղանդը՝ ստեղծելով պարզապես սովորական հուշանվերային իրեր: Կարևորվեց այնպիսի իրերի ստեղծումը, որոնք կլինեին օգտակար, հնարավոր կլիներ դրանց օգտագործումն առօրյայում, բայց և հայկական մոտիվների, զարդանախշերի առկայության շնորհիվ կհիշեցնեին Հայաստանի մասին:
Բացի դիզայներներից վարպետների հետ աշխատել են նաև լուսանկարիչներ, գրաֆիկ դիզայներներ, վիդեոգրաֆներ՝ հավաքածուների

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ԱՅՆՊԻՍԻ ԻՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՈՐՈՆՔ ԿԼԻՆԵԻՆ ՕԳՏԱԿԱՐ, ՀՆԱՐԱՎՈՐ ԿԼԻՆԵՐ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՌՕՐՅԱՅՈՒՄ, ԲԱՅՑ ԵՎ ԿՀԻՇԵՑՆԵԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ:

ուղեկցող նյութերի պատրաստման համար: Հավաքածուները բրենդավորվել են, ստեղծվել են տարբերանշաններ, տպագիր և օնլայն նյութեր, փաթեթավորման տարբերակներ: Այդպիսով, վարպետները հնարավորություն են ստացել նորովի ներկայանալ զբոսաշրջային շուկայում արդեն ոչ թե առանձին աշխատանքներով, այլ ամբողջական հավաքածուներով ու բրենդով: Սա հնարավորություն է տալիս ավանդական թվացող իրերը ներկայացնել ժամանակակից տեսքով: Մյուս կողմից, վարպետներից շատերը վերաիմաստավորում են հայկական արհեստագործական հին ավանդույթները, այցելում թանգարաններ, ուսումնասիրում հին տեխնիկաներն ու նյութերը և հրամցնում դրանք նորովի: Աշխատանքներ են տարվում նաև վարպետներին խանութների և պատվիրատուների հետ կապելու ուղղությամբ: Կապեր են ստեղծվում արտերկրում հայկական դեսպանությունների, ինչպես նաև տարբեր փառատոնների հետ:

Փառատոնը՝ որպես հազողության հավասարիչ

Բացի տարվող աշխատանքը, շատ կարևոր էր նաև հավատացնել վարպետներին, որ ամեն ինչ նպատակային է և անպայման արդյունք է տալու: Ահա թե ինչու միտք առաջացավ կազմակերպել «Իմ ձեռագործ Հայաստան» փառատոնը:
«Սկզբնական շրջանում վարպետներից շատերը թերահավատորեն էին մոտենում ծրագրին, ասում էին՝ շատ չի վաճառվի, ինչի՞ համար պատրաստեմ, մեր գյուղում պահանջարկը չկա, մեր քաղաքում նման բան չեն ուզել և այլն: Բայց առաջին իսկ փառատոնից հետո մարդիկ հասկացան, որ շուկան չի սահմանափակվում իրենց գյուղով, քաղաքով կամ մարզով»,– պատմում է Աշխենը:
Առաջին փառատոնը տեղի է ունեցել 2017-ի սեպտեմբերին՝ Գաֆէսճեան արվեստի կենտրոնում (Կասկադի հարակից այգում): Տեղը ևս պատահական չէր ընտրված, անշուշտ, տուրիստների մեծ հոսք ունեցող վայր էր պետք ընտրել և այդ հարցում ընտրությունը միանգամայն ճիշտ էր: Փառատոնի ստեղծման օրից ի վեր վարպետները մեծ ոգևորությամբ են մասնակցում և նույնիսկ դիմում կազմակերպիչներին՝ տարվա մեջ երկու անգամ անցկացնելու խնդրանքով: Շատ կարևոր էր ոչ միայն վարպետների մեջ այդ ոգևորությունն արթնացնելը, այլև այն, որ փառատոնը պետք է կրեր թե՛ կոմերցիոն, և թե՛ մշակութային բնույթ: Անհրաժեշտ էր, որ փառատոնը ցույց տար ձեռագործի ուժը, կարևորությունն ու մշակութային արժեքը: Ահա թե ինչու տեղում ձեռնարկվեցին փոքրիկ աշխատարաններ, որտեղ յուրաքանչյուր վարպետ այցելուներին ցուցադրում էր այն տեխնիկան, որով պատրաստել է ներկայացված իրերը: Ամբողջ փառատոնի ընթացքում դրանք լի էին մարդկանցով և հետաքրքրված հայացքներով:

Ձեռագործն ու զբոսաշրջությունը

«Իմ ձեռագործ Հայաստան» փառատոնը միտված է ոչ միայն օգնելու վարպետներին, այլև նոր, հետաքրքիր հնարավորություններ ստեղծելու զբոսաշրջիկների ժամանցի կազմակերպման համար: Նախ, զբոսաշրջիկները հնարավորություն են ստանում գնելու հուշանվերային ստանդարտներից դուրս իրեր, որոնք կարող են օգտագործել հետագայում իրենց առօրյա կյանքում, միևնույն ժամանակ իրենց երկիր տանել հայկական մշակութային ժառանգության մի մասնիկ, որն առավելագույնս իրական է ու մոտ ավանդականին: Բացի դա, հենց փառատոնի շնորհիվ զբոսաշրջիկները ծանոթանում են Հայաստանի տարբեր մարզերում ապրող ու ստեղծագործող վարպետների հետ, կապեր հաստատում, պահպանում կոնտակտները, հաճախ պատվերներ կատարում և նույնիսկ այցելում տվյալ մարզ, տեղում՝ աշխատանոցում, ծանոթանալու վարպետի ու նրա աշխատանքի հետ: Այն արհեստագործները, որոնք կարող են իրենց աշխատանոցներում վարպետաց դասեր կազմակերպել այցելուների համար, կրկնակի խթան են հանդիսանում իրենց մարզ զբոսաշրջային հոսքերի մեծացման համար: Այս առումով հատկանշական է կապը տուրօպերատորների հետ, ովքեր ավանդական դարձած տուրերը համալրում են այդպիսի այցելություններով ու առավել հագեցած դարձնում զբոսաշրջիկների օրը: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր մարդու համար էլ հետաքրքրական ու կրկնակի հաճելի է գնել մի իր, որի պատրաստման մեջ ինքն էլ թաթախվել ու սովորել է:

Հավելյալ տեղեկությունների համար՝
www.myarmenia.si.edu
www.myhandmadearmenia.am

Համիկ Բարխուդարյան
«Իմ Հայաստան» ծրագիր

Ավտոստոպը Հայաստանում,

կամ տեղական պապուծիի առանձնահատկությունները

Վերջին տարիներին Հայաստանում տարածվում է ավտոստոպով ճամփորդելու տարբերակը: Ընդ որում, նույն ճանապարհով ընթացող մեքենաներից օգտվում են ինչպես հայ ճամփորդները, այնպես էլ արտասահմանցի բեքփեքերները («ուսապարկային զբոսաշրջիկները»). Հայաստանը նրանց շրջանում հեշտ ու ապահով երկրի համբավ ունի: Հայաստանյան ավտոստոպի առանձնահատկությունների մասին պատմում է փորձառու ճամփորդ Արտյոմ Բաբայանը, որն այս ձևով շրջել է, առանց չափազանցնելու, ամբողջ աշխարհով:

Անվտանգ

Ավտոստոպով ճամփորդելը Հայաստանում շատ հեշտ է: Հաճախ նաև ավելի արագ ու հարմարավետ, քան միջքաղաքային տրանսպորտից օգտվելը: Եվ դա ուղղակի փրկություն է, եթե մարդաշատ գազելները ձեր ահ ու սարսափն են: Օրինակ, Երևանից Դիլիջան ավտոստոպով ճամփորդությունը 1,5-2 ժամից երկար շատ հազվադեպ է տևում. անկախ նրանից, թե քանի հոգով եք ճամփորդում, շաբաթվա որ օրն եք ճամփա ընկել, կամ օրվա որ ժամին: Եվ այդ ընթացքում դուք երթևեկում եք հարմարավետ մեքենաներով, հանդիպում և շփվում եք նոր մարդկանց հետ, և, ինչը շատերի համար ավտոստոպով ճամփորդելու №1 պատճառն է, գումար չեք ծախսում: Այսքանից հետո էլ ո՞վ կուզի գազելով ուղևորվել Ա կետից Բ կետ՝ ստիպված լինելով վայելել «Gazelle №5»-ի անմոռանալի բույրերի փունջը:

Արագ

Ավտոստոպը Հայաստանում նաև շատ արագ է: Բանուկ ճանապարհին 5-10 րոպեից ավել չեք սպասում մեքենայի կանգնելուն: Մեր վարորդներն անգամ եթե չգիտեն, թե ինչ է ավտոստոպը, միևնույն է, կանգնում և օգնում են ճամփորդներին: Ի դեպ, Հայաստանում ավտոստոպը հաճախ կոչում են մեկ այլ բառով՝ «պապուծի» (ռուսերեն «по пути»՝ «նույն ճանապարհով» եզրի հայաֆիկացված տարբերակն է): Համեմատության համար, օրինակ, Ռուսաստանում մեկ ժամից ավել մեքենա «որսալը» նորմալ է (իմ անձնական հակառեկորդը 8 ժամ է), իսկ Հայաստանում 15 րոպե սպասելն է արդեն արտասովոր: Եթե Ռուսաստանում 150 կմ հեռավորությունն ավտոստոպով հատելը ձեզանից առնվազն 4-5 ժամ կպահանջի, Հայաստանում նման ճամփորդությունը կտևի 2,5-3 ժամ, որովհետև մեքենա սպասելուն շատ քիչ ժամանակ եք ծախսում:

Բարի առաքիչ

Մեր երկրում ավտոստոպն ունի մի հետաքրքիր յուրահատկություն, որը պայմանավորված է Հայաստանի աշխարհագրական լանդշաֆտով: Հայաստանը փոքր երկիր է, և կարող է թվալ, որ մեկ օրում երկրի մի ծայրից մյուսը կհասնեք ավտոստոպով, բայց դա այդպես չէ: Բավրայից Մեղրի ընդամենը 520 կմ ճանապարհ է, բայց մեկ օրում այդ հեռավորությունը հաղթահարելը գրեթե անհնար է մեր լեռներով անցնող ճանապարհների պատճառով: Չինաստանում, Ռուսաստանում կամ Իրանում, օրինակ, լուսային օրվա ընթացքում (մինչև մութն ընկնելը) հանգիստ կարող եք 1000 կմ երկարությամբ ճանապարհ հատել միայն մեկ բեռնատարով:

Ի դեպ, եթե երազում եք հսկայական բեռնատար մեքենաներով ճամփորդել, մոռացեք այդ երազանքի մասին, որովհետև Հայաստանում մեծ բեռնատարները գրեթե երբեք չեն կանգնում, ինչը, անկեղծ ասած զարմանալի է: Հնուց հայտնի փաստ է. ավտոստոպով ճանապարհորդողի լավագույն ընկերը բեռնատարի վարորդն է: Փորձը ցույց է տվել, որ Հայաստանում այդ լավագույն ընկերը վարորդ-առաքիչն է՝ իր բեռնատար գազելով կամ ֆորդով: Նրանք շատ հաճախ են կանգնում, գրեթե միշտ մենակ են լինում և ունենում են երկար երթուղի, ինչը նրանց ուղղակի իդեալական է դարձնում ավտոստոպի համար: Մենք կնոջս հետ անգամ հայտնի «Բարի արագիլ» երգն ենք դարձրել մեր ավտոստոպի երգը՝ մի փոքր փոխելով բառերը՝ «բարի առաքիչ»:

Մի կլոր հայ

Երևանից Դիլիջան 1,5 ժամ տևողությամբ ճամփորդությունը ձեզ համար շատ անսպասելի կարող է վերածվել մեկ այլ փորձառության, որովհետև Հայաստանում ավտոստոպով ճամփորդությունը միշտ ուղեկցվում է անկանխատեսելի մի գործոնով, որը կարող է տակնուվրա անել ձեր պլանները: Այն է՝ հայ մարդու անկեղծ ցանկությունը նոր հանդիպած մեկի հետ սեղան կիսել և ծանոթության կենացը խմել: Այս ցանկությունն ի հայտ է գալիս շատ անսպասելի, և հաճախ դու ուղղակի չես էլ հասցնում մի բան անել կամ ասել, երբ հանկարծ նկատում ես, որ թեքվեցիք հիմնական ճանապարհից, իսկ քո հարցին, թե ուր ենք գնում, վարորդը հանգիստ պատասխանում է. «Գնանք տուն, մի կտոր հաց ուտենք իրար հետ, հետո կգնաս»:

Ի վերջո, մենք ուտող-խմող ազգ ենք: Երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ վարորդներն ուղղակի պատրաստ սպասում են, որ իրենց ձեռքը հյուր ընկնի (նշանակություն չունի՝ տեղացի, թե արտասահմանցի): Գնում ես Երևանից Թիֆլիս, բայց հանկարծ հայտնվում ես Շնողում՝ գյուղացիներից մեկի տանն ես ճաշում: Գնում ես Վանաձոր, բայց հայտնվում ես Ապարանի տներից մեկում, ուր քեզ սուրճ և սառը ձմերուկ են հյուրասիրում: Գորիսից ճամփորդում ես Մեղրի, բայց հայտնվում ես Քաջարանում, վարորդն իր կնոջ հետ քեզ իրենց տուն են տանում, արդեն զանգել են հարևաններին, որ սեղանը դնեն: Իրանցի երեք ընկերներիդ հետ ավտոստոպով գնում ես Արտանիշ, մեկ էլ հայտնվում ես Դրախտիկում, ընկերներդ վարորդի ու իր ընկերոջ հետ արդեն երրորդ բաժակն են խմում, իսկ դու բակում սմբուկ, լոլիկ ու պղպեղ ես խորովում կրակի վրա: Եվ այսպես շարունակ:

Սա Հայաստանում ավտոստոպով ճամփորդելու փորձառության մի մասն է, գրեթե անբաժան: Բազմիցս եմ հայտնվել նման իրավիճակներում և եկել եմ երկու եզրակացության. ա) մենք իրոք հյուրընկալ ազգ ենք, և սա զբոսաշրջիկներին գրավելու համար մարկետինգային հնարք չէ, բ) Հայաստանում ավտոստոպով ճամփորդելը վնասակար է լարդի համար:

Մի բաժակ

Ասեմ ավելին, այս 13 տարիների ընթացքում ինչ ես ճամփորդում եմ ավտոստոպով, ամենախմած և խենթ փորձառությունները տեղի են ունեցել հենց Հայաստանում: Մի քանի տարի առաջ ֆրանսուհի իմ ընկերոջ հետ ավտոստոպով ճամփա էինք ընկել հայ-վրացական սահմանից մինչև հայ-իրանական սահմանը: Ճամփորդության նախավերջին օրը Մեղրիում էինք, որոշել էինք զբոսնել քաղաքի Փոքր Թաղի նեղլիկ փողոցներով: Տներից մեկի բակում միջին տարիքի մի մարդ (անունը Արմեն էր) պարաններին կախած խուրմայի շարաններն էր զննում: Մեզ նկատելուն պես անմիջապես զրույցի բռնվեց և հինգ րոպե էլ չանցած հրավիրեց տուն՝ սրճելու: Մենք սիրով ընդունեցինք հրավերը. կարիք ունեինք մի փոքր հանգստանալու և թարմանալու: Բայց... ինչպես կասեր Աղմիրալ Ակբարը. «Դա ծուղակ է»: Որովհետև «համեցեք տուն՝ մի բաժակ կոֆե խմենք»-ը Հայաստանում գրեթե երբեք սուրճի մասին չէ: Համենայնդեպս ճամփորդելու ընթացքում: Տանն Արմենից բացի միայն իր ընկերն էր (երեխաները դպրոցում էին, կինը՝ աշխատանքի), ով հեռացավ խոհանոց, իսկ քիչ անց վերադարձավ սրճեփով, որից նոր եփած սուրճի գոլորշին էր վեր բարձրանում: Նստեցինք հյուրասենյակում, բայց դեռ մի կում էլ չէինք արել, երբ սեղանին հանկարծ գինու բաժակներ հայտնվեցին, այնուհետև մի մեծ շիշ տնական գինի և կոնյակ: «Ռե հո սուրճ չենք խմելու»: Տան տերը լայն ժպիտը դեմքին նայեց մեզ և լցրեց բաժակները: Եվ սկսվեց այն, ինչից հետո մենք դեռ մի քանի օր ուշքի էինք գալիս. դե, բարով տեսանք, ծանոթության կենացը, ընկերության կենացը, Ֆրանսիայի կենացը, Հայաստան-Ֆրանսիա ընկերության կենացը, երեխաների կենացը, ծնողների կենացը... Մենք սկզբում փորձեր էինք անում հրաժարվել, բայց հասկանալով, որ դա անհնար է՝ որոշեցինք գնալ ալիքի հետ: Երկու ժամ հետո, երբ տանն էլ խմելու բան չկար, խնջույքը տեղափոխվեց սրճարան, իսկ այնտեղից՝ կրկին տուն, ուր Արմենի կինն արդեն սեղան էր դրել և անհամբեր սպասում էր հյուրերին. 15 րոպեն մեկ զանգում էր նրան և հարցնում, թե ուր մնացինք: Այդ օրը մենք խմեցինք մինչև գիշերվա ժամը երեքը, կենացը կենացի հետևից: Մեղրեցիների այս ընտանիքը չէր թողնում հեռանայինք իրենց տնից. այսօր մենք իրենց տան հյուրերն էինք, ինչը նաև նշանակում էր, որ տեղական ամեն տեսակի տնական օղի ու գինի պիտի համտեսեինք:

Արտասահմանցիների համար սա մեծ խնդիր է. շատ խմել չեն կարողանում և չեն էլ ուզում, բայց նաև ամաչում ու վախենում են մերժել: Ստիպված խմում են: Բայց եթե չեք ցանկանում խմել, կա երկու տարբերակ, ինչպես հրաժարվել առանց որևէ մեկին վիրավորելու: Կարող եք ասել, որ ունեք առողջական խնդիրներ և չեք կարող խմել: Սակայն իմ փորձը ցույց է տվել, որ այս տարբերակը ոչ միշտ է աշխատում. «Յաա՛ա, բա խմի, որ բուժվես, տնաշեն»: Երկրորդ տարբերակ. կարող եք ասել, որ պահքի մեջ եք: Այո, գիտեմ, սուտ ասելը լավ բան չի, բայց հանուն լարդի առողջության երբեմն կարելի ստել:

Իրական կյանք

Ինձ համար ավտոստոպը լավագույն տարբերակն է Հայաստանը և հայերին ներսից ճանաչելու և հասկանալու: Ճամփորդության այս ձևը հնարավորություն է ընձեռում հայաստանյան կյանքի բազում շերտերի ծանոթանալ, որոնք թաքնված են խորքում, մարդկանց տներում, իրենց առօրյայում: Սա, օրինակ, հնարավոր չէ, երբ ճամփորդում ես տուրիստական խմբի հետ որևէ ֆիքսված երթուղով: Ավտոստոպով ճամփորդելիս տեսնում ես կյանքը Հայաստանում այնպիսին, ինչպիսին այն կա իրականում, միգուցե այն պատճառով, որ մարդիկ քեզ չեն ընկալում որպես «տուրիստ» և չեն փորձում ցույց տալ միայն լավն ու դրականը, այլ իրենցից մեկն են քեզ համարում և չեն վախենում անկեղծանալ: Միգուցե պաթետիկ հնչի, բայց չեմ վախենա ասել. եթե ուզում եք անկեղծ սիրով սիրահարվել Հայաստանին՝ իրական, անկեղծ, խենթ, բարդ և մի քիչ էլ հարբած, ապա անպայման գոնե մեկ անգամ ճամփորդեք ամբողջ երկրով մեկ ավտոստոպով:

Արտյոմ Բաբայան

Հայերն ու քաղաքիցդուրսը

Բանաստեղծ և զբոսաշրջային բիզնեսի վետերան Կարեն Անտաշյանը պատմում է, թե ինչպես Հայաստանում ձևավորվեց ներքին տուրիզմը և ինչու մեզանից շատերն այդպես էլ չսովորեցին քաղաքից դուրս հանգստանալ այնպես, որ բնությունը չկրի անդառնալի զոհեր:

ԱՄԵՆԱՎԱՏ ՏՈՒՐԻՍՏՆԵՐԸ

Երբ կորոնապոկալիպսիսի բերումով սկսեց բուռն աճ գրանցել ներքին տուրիզմը, ես սարսափեցի: Տուրիստական ծառայությունների ոլորտում մեկ տասնամյակից ավելի իմ փորձը հուշում էր, որ հայերն ամենավատ տուրիստներն են: Ներքին տուրիզմի բումը կանխատեսում էր հակամշակույթի վերածված մեր վատագույն վարքագծի դրսևորումների ծավալումն արդեն հայտնի ու հասանելի տեսարժան վայրերից ու հանգստավայրերից դեպի ավելի ծպտված, դժվարամատչելի ու զուտ դրա շնորհիվ քիչ թե շատ մաքուր ու անաղարտ մնացող մեկնակետեր: Վատի սպասումն ու կանխատեսումն իրենց երկար սպասեցնել չտվեց՝ համացանցում սկսեցին հայտնվել օրինակ Լոռու մարզում գտնվող հազվագյուտ կարմիրգրքային ջրաշուշանների փնջերով մարդկանց նկարներ, աղբակույտային նորագոյացություններ, կասկածելի համբավ և անհասկանալի պատմամշակութային ու հոգևոր բովանդակություն ունեցող վայրերում գերկուտակումներ և այլն: Ինչո՞ւմն է բուն խնդիրը, ինչո՞ւ է «այստեղով հայեր են անցել» բնորոշումը վատով արժանին մատուցում հայ ներքին զբոսաշրջիկին:

ՈՉ ՀԵՌՈՒ ՏՈՒՐԻԶՄ

Սովետական երկաթե վարագույրը, հանրապետության բլոկադան անբարյացակամ հարևանների կողմից ու աշխարհագրական բնական կղզիացածությունը, ճանապարհների վատ վիճակն ու տրանսպորտային ներքին ցանցի անմխիթար վիճակը, ազգային ինքնության ընկալումը խիստ սահմանափակ խորհրդանիշերով, բնության մասին տարրական գիտելիքների բացակայությունը, սոցիալական ծանր պայմաններն ու ուրախության (երբեմն անգամ տխրության) ցանկացած առիթ ուտելխմելու հանգեցնելու ավանդույթն այն հիմնական գործոններն են, որ բնորոշում են մեր տեղ գնալու մշակույթը:

Հետսովետական Հայաստանի առաջին երկու տասնամյակում բնակչության հիմնական մասի համար բնորոշ էր հարաբերական նստակյացությունն ու միայն սեփական բնակավայրի հարակից վայրերի այցելությունը, իսկ հեռու տեղ գնալը միայն բարեկամներին այցելելու ֆորմատով էր կամ տուրիզմի անվան տակ արտագաղթելու հնարքները:

Մեր հայրենակիցներից շատերի համար իրենց հատուկենտ զբոսաշրջային փորձառությունները սահմանափակվում էին դպրոցական էքսկուրսիաներով, որտեղ, իհարկե, սննդի սպառումը միշտ ավելի առանցքային է եղել, քան կրթական-մշակութային-բնապահպանականը: Ներքին տուրիզմի առանձին դաս է արշավական տուրիզմը, որը ֆիզիկական բարձր պատրաստվածություն ու որոշակի կոնկրետ հետաքրքրություններ ենթադրելու բերումով էլի մնում էր իբրև երիտասարդների շատ նեղ շրջանի տուրպրոդուկտ:

ՍՐԸՆԹԱՑ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Սակայն 2000-ականներին սկզբից դանդաղ, բայց աննահանջ քայլերով սկսեց զարգանալ ներգնա տուրիզմը, այսինքն՝ արտասահմանցիների այցը Հայաստան զբոսաշրջության նպատակով, որը սկզբում, ճիշտ է, հիմնականում ծածկվում էր սփյուռքահայ տուրիստներով, բայց այնուամենայնիվ սկսեց քիչ-քիչ ձևավորել հյուրընկալության միջազգային ստանդարտներին բնորոշ մշակույթ՝ համեմված ազգային առանձնահատկություններով և արդյունքում շուրջ երկու տասնամյակ անց մենք վստահաբար ունենք տարածաշրջանի զբոսաշրջային ամենաբարձր մակարդակի սպասարկումը: Այսպիսով ներքին տուրիզմի խթանման առաջին ու ամենակարևոր գործոնը ներգնա տուրիստական մշակույթի ձևավորումն էր: Թեպետ միջին վիճակագրական հայը մինչև հիմա մի տեսակ քամահրական ու հեգնական վերաբերմունք ունի օտարազգի զբոսաշրջիկի հանդեպ ու մի տեսակ կասկածի տակ է առնում Հայաստան այցելելու պարսիկի, ռուսի, ամերիկացու, ֆրանսիացու կամ արաբի բարի միտքը, բայց ամեն դեպքում մեր աչքը քիչ-քիչ սկսեց սովորել տուրիստական կոկիկ ավտոբուսներին, գեղեցիկ հյուրանոցներին, ուսապարկով ու ֆոտոխցիկով զինված մարդկանց ներկայությանը: Հաջորդ լուրջ գործոնը տեղաշարժման ազատության հաղթահարումն էր էականորեն էժան գազով մեքենաների բումի շնորհիվ: Գազի բալոնով օպելը դարձավ միջին վիճակագրական հայ ընտանիքի տնօրինած տնտեսության կարևոր ատրիբուտը, որ տանելի ներդրումով ապահովում էր կյանքի որակի էական բարելավում:



Սարեն Անդրաշյանը խորտակած է պլաստիկատում ֆաղաքիից դուրս (բայց վերցրում ամեն ինչ հավաքում է)

Սրանք անուղղակի գործոններ էին, այ ուղղակի գործոն էր առաջարկի ձևավորումը: Այսպիսով վրացական Քոբուլեթին սկսեց դառնալ ներքին տուրիզմի առանցքային խորհրդանիշը, տեղ, որի այցելությամբ մենք սկսեցինք աչքաբացվելով քաղաքակրթվելու դժվարին, բայց անհրաժեշտ աշխատանքը: Եգիպտոսի, Թուրքիայի ու Դուբայի էժան օլ-ինքլուզիվ փաթեթներն ամեն դեպքում անհասանելի մնացին միջինին հարող ու ցածր սոցիալական խավերի, այսինքն բնակչության մեծամասնության համար: Ներքին տուրիզմի իսկական բում առաջացրեց սոցիալական փաթեթների պետական ծրագիրը, որով որոշակի ոլորտների բյուջետային աշխատողներ պետությունից ֆիքսված գումար էին ստանում հանգստի վրա ծախսելու նպատակով: Այս հանգամանքը միանգամից սեզոնային էժան հանգստյան տների բում առաջացրեց և շարունակում է մնալ ներքին տուրիզմին սպասարկող տուրիստական ենթակառուցվածքների ողնաշարը: Իբրև ժամանց մի տեղ գնալու մշակույթն ամրապնդեց հավաքովի խմբերով ռեգուլյար տուրիստական երթուղիների ի հայտ գալը, երբ մի քանի հազար դրամով կարելի է գնել տոմս և մեկ օրվա մեջ խմբի հետ գիդի ուղեկցությամբ այցելել մեկ տուրիստական երթուղու վրա տեղակայված մի քանի տեսարժան վայրեր:

ՏԱՂԱՎԱՐԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄ

Սակայն այս սաղմնային ու էական զարգացումներին զուգահեռ ներքին զբոսաշրջիկի համար անշեղորեն ձևավորվեց ու ցավալիորեն ամրապնդվեց մի հակա-տուրպրոդուկտ, որն էլ մեզ բարեվարքություն սովորեցնելու փոխարեն ամրապնդեց ու կուլտիվացրեց այն ամենը, ինչ մեզանում բացակայում էր իբրև տուրիստների: Սա այսպես կոչված «հանգստյան գոտիներում» տեղակայված այսպես կոչված «տաղավարների» վարձույթն է սեփական կամ տեղում պատվիրվող սնունդով հետագա ուտել-խմելու նպատակով: Հայաստանի գողտրիկ բնության հուշարձանների համար բնապահպանական իսկական չարիք ու մեր հայրենակիցներին քաղաքակրթելու իմաստով իսկական ձախողում դարձած այս տաղավարային կոմպլեքսները նախաձեռնող տղերքի ջանքերով սկսեցին գրավել բոլոր հնարավոր կիրճերի ու գետակների ափերը, տեսարժան վայրերի մերձակայքը, մերձքաղաքային արվարձանները և այլն՝ ամենուր երկինք հղելով խորոված ի սրբազան ծուխը, բազմապատկելով գետեր, ձորակներ և ճամփեզրեր թափվող աղբը, նաև ձայնային աղբը՝ կիրճերը լցնող փսիխոդելիկ ռաբիզի դեցիբելներով:

Սոցիալական ամուր և բազմաշերտ կապեր պահպանելու հակումով, ասել-խոսելու, իրարով հետաքրքրված լինելու մեր ազգային չքնաղ խառնվածքը սկսեց վերածվել իրար հետ ուտելու, շա՛ատ, շա՛ատ ուտելու և համարժեք խմելու, կասկածելի որակի բարձր քոքած երաժշտության տակ թռվռալու ավանդույթի: Ներկայումս այս տաղավարային կազմակերպված գաստրոօրգիաներն ու ինքնագործ ընտանեկան պիկնիկները հայկական ներքին տուրիզմ ասվածի հիմնական մասն են կազմում: Սրանք կարող են ուղեկցվել ավանդական ու էդ պահին պոպուլյար որևէ այցելավայր մտնելու հետ, բայց առանցքում իհարկե ուտելն է: Արդյունքում օպել աստրայի համար հասանելի Հայաստանի բոլոր անտառներում, լճերում, գետափնյա տեղերում, ձորակներում, կիրճերում, բացատներում, պուրակների ու անգամ միայնակ կանգնած ծառերի ստվերներում համառորեն շարունակում են կուտակվել պոլիէթիլենից տոպրակները, պլաստիկ ու ապակյա շշերը, բիչոկները, մեկանգամյա օգտագործման սպասքը և այն ամենը, ինչ բնությունը զորու չէ սեփական ուժերով մարսելու:

Ինքնատիպ ու շքեղ կենսաբազմազանությամբ եվրոպացի գիտակներին ու էսթետներին գերած մեր բնությունը շարունակում է մութ ու լղոզված մնալ մեր բնակչության մեծամասնության համար՝ եթե ծաղիկ տեսան, պետք է քաղեն, եթե սողուն տեսան, պետք է սատկացնեն, եթե թռչուն տեսան, պետք է խփեն ուտեն, եթե ծառ տեսան, պետք է անունները փորագրեն վրան, հետո տակը կրակ անեն, եթե գետակ, լճակ տեսան՝ պետք է փորձեն բոլոր հնարավոր միջոցներով որսան ձկներին, եթե միջատ տեսան՝ նավսյակի լխճեն սեփական անգիտության ու վախի բերումով, վայրի կաթնասուններ, ցավոք, արդեն գրեթե չեն էլ հանդիպում, և այս ամենը բարձր քոքած աուդիոաղբի ուղեկցությամբ:

ՄԻ ԱՐԵՔ ԱՅՍՊԵՍ

Ահա, այս էր վախս, երբ ինքնաբուխ ու հախուռն ներքին տուրիզմը սկսեց կազմակերպվել ու խրախուսվել զանգվածայնորեն: Միջին վիճակագրական հայն իր բնության ու պատմամշակութային ժառանգության անգետ թշնամին է, իրենից վտանգ է ներկայացնում սերունդների ժառանգության ու կենսամիջավայրի համար: Առանց նրան կրթելու ու պատրաստելու, առանց ոստիկանական հատուկ ստորաբաժանում ստեղծելու ու կոշտ վերահսկելու նրա համար չի կարելի ասֆալտապատել դժվարամատչելի ճանապարհները, նրան չի կարելի խրախուսել, որ մեկնի ճամփորդության իր երկրին ծանոթանալու, քանի որ նա զուտ մարդկային ճանաչողության, բնության հետ ներդաշնակության կարիք չունի, անմիջականորեն իրենը չհանդիսացող բաների հանդեպ հոգատարության ու հանրային բարեվարքության մշակույթ չունի, նա բարբարոս ու վայրենի սպառող է ու դեռ չի հասունացել քաղաքակրթության ամենակարևոր պրոդուկտներից մեկի՝ ճամփորդության սուբյեկտ լինելու համար:

Սարեն Անդրաշյան

Ազատ Արցախը սպասում է ջեկ

Ուղղախոս արցախցու նման սկսենք չոր թվերից: Գիտեի՞ք, որ հայաստանաբնակների մոտ 60%-ը երբեք ոտք չի դրել Արցախ: Առազարկում ենք փոխել իրավիճակը հենց առազին հնարավորության դեպքում: Արվեստաբան Էմմա Հարությունյանը, որը համավարակի սկզբից ճամփորդում է երկրով, բացատրում է, թե հատկապես ինչու:



Հուշումներ նախիխան այցելելը

Զրուցե՛ք արցախցիների հետ, լսե՛ք նրանց զրույցները, որոնք կարող է մի քիչ դժվար ըմբռնելի լինել բարբառի պատճառով, բայց քաղցր կթվան ու դուք ամեն ինչ կհասկանաք: Պատմության գրքերով մեզ հասած տեքստերը բոլորովին այլ իմաստներ կստանան և կկենդանանան այդ պատմվածքներում: Վստահեցնում եմ, ինչքան էլ տխուր լինեն մըսլըհաթները (խոհերը), դուք աշխուժություն, ապրելու ցանկություն ու կյանք կգտնեք դրանց մեջ: Թողեք Արցախի տատիկները ձեզ «մատաղ» ասեն, պապիկները թթի՝ իրենց քաշած օղի հյուրասիրեն, բալիկները ձեզանով հետաքրքրվեն ու փորձեն ուշադրություն գրավել: Արցախի բալիկների աչքերը, ի դեպ, շատ մեծ են և վառվռուն, ինքներդ կտեսնեք: Ուստի ամբողջական տպավորություն ստանալու համար փորձեք հարցուփորձ անել և բացահայտել ձեր սեփական Արցախը:

← Երից Մանկանց
եկեղեցին

Քարվաճառ

Հիմա անցնենք բուն ճամփորդությանը։
Դե գիտեք, որ Արցախ ժամանելու երկու հիմնական ճանապարհ կա, երկուսն էլ բարեկարգ։ Առաջարկում եմ գնալ վերին՝ Քարվաճառի, իսկ հետ գալ ներքևի՝ Գորիսի ճանապարհով։ Վերջերս կառուցված վերին ճանապարհը տանում է գեղատեսիլ և աչք չհոգնեցնող տեսարանների մոտով։ Փորձե՛ք ուշադրություն դարձնել, թե ինչպես Սևանի փափուկ ալիքների ընկերակցությունը փոխարինվում է Արցախի տարածքում երևի ամենահուժկու, բայց կուսական և ազատագրված Քարվաճառի լեռներով։
Հիացմունքից հետո իհարկե միանգամից պարզ կդառնա, որ Արցախի, հատկապես իր այս մասի բնությունը տարբերվում է ձեր տեսած այլ մասերի բնությունից։ Քարվաճառի խիտ լեռների մեջ էլ տեղադրված է Դադիվանքը, որն անպայման պետք է այցելել հատկապես հիմա, երբ երկու նվիրյալ վերականգնող վարպետների՝ Կոստան Զարյանի թոռ Արա Զարյանի և բելգուհի Քրիստին Լամուրեի շնորհիվ վերածնվել են վանքի բացառիկ որմնանկարները։ Նրանք հրաշքով են մեզ հասել, քանի որ եկեղեցում տասնամյակներ ապրող քուրդ անասնապահները մրի, ածուխի և փոշու շերտերի տակ ուղղակի չէին նկատել քրիստոնեական պատկերները։
Բնության մեջ պատսպարված այս ճարտարապետական ոգեղեն կոթողը երկար խաղում է նյարդերի հետ, ստիպում ամեն կողմից ուսումնասիրել վանքի շինությունը։ 1993 թվականին՝ երկար դադարից հետո, երբ հայերը ոտք դրեցին Դադիվանք, այստեղ մնացել էին կիսավեր շենքի փլատակները, որոնք միայն վերջերս լցվեցին նոր ոգով նաև վանքի վանահայր Տեր Հովհաննեսի շնորհիվ։ Այս հուժկու կեցվածքով հինգ որդիների հայրը Փարաջանովի ֆիլմերի հերոսներին է հիշեցնում։ Եթե նրան հանդիպեք, նա ձեզ սիրով կպատմի, թե ինչպես է հրացանը ձեռքին ամիսներ շարունակ զիշերել վանքում, պաշտպանել այն, երբ սահմանին այդքան մոտ գտնվող վանքը դեռ վտանգի տակ էր։
Այստեղից ճանապարհորդությունը կարելի է շարունակել երկու ուղով։ Երկուսն էլ ջրային, երկուսն էլ տաք և տպավորիչ բնության մեջ։ Գուշակեցիք երևի. խոսքս հանքային և բուժական ջրավազանների մասին է։ Տասնյակ հազարամյակների ընթացքում գետերի ջուրը մերկացրել է կիրճում գտնվող հանքային աղբյուրները և ստեղծել տաք, երբեմն շատ տաք այս լողավազանները, իսկ մեզ հիմա մնում է վայելել։
Ուրեմն այսպես. առաջին տարբերակը Ջերմաջուրն է (մայրուղուց 1,5-2 ժամ), որտեղ բացի լավ լողանալուց կարող եք տեսնել նաև սովետական հայտնի Իստիզու առողջարանի ավերակները։ Այստեղ գալիս էին երիկամները, լյարդը բուժելու համար, կամ ուղղակի չոփչոփի։ Այժմ փոթորիկների միջով անցած այս տարածքում ապրում է կոմունիզմի ուրվականը, որն իր մասին հիշեցնել է տալիս հատակին ընկած Լենինի հսկայական քարակերտ գլխի, կիսաքանդ հիվանդանոցի և կլուբի պատուհանների միջով։
Երկրորդ տարբերակը Զուար գյուղի մոտ գտնվող «Տաք ջուրն» է (մայրուղուց 1 ժամ)։ Այստեղ մի քանի մետր տրամագծով հսկայական ջակուզին անգամ ձմռանն այցելուներ ունի, սակայն անպայման դուք էլ մտեք, քանի որ տեղացիները վստահ են և հարյուր ապացույց ունեն, որ ջուրը մաքրում է բոլոր սթրեսները։ Պիտանի բան է լոքդաունից և վիրուսի տանջանքներից հետո։

Մարտակերտ

Արցախը նաև ներհայեցողության համար ամենաիդեալական վայրերից է։ Թաքնված, աչքից հեռու և զբոսաշրջիկների երթուղիներից հիմնականում դուրս մնացած ուղղություններից է Ջրաբերդի ամրոցը և Երից Մանկանց եկեղեցին։ Երկուսն էլ գտնվում են արդեն գրեթե բնակչություն չունեցող Թրխի գետի կիրճում՝ շատ օրգանիկ զետեղված շլացնող բնության մեջ։
Ջրաբերդի ամրոցը դեռ վաղ միջնադարից հանդիսացել է ուժի և կայունության խորհրդանիշ։ Մաղավուզ գյուղից 6 կիլոմետրանոց հողե ճանապարհը տանում է դեպի Ջրաբերդ՝ Արցախի ամենահետաքրքիր ամրոցներից մեկը։ Ամրոց հասնելու համար պետք է անցնել 50-ականներին երկրաբան-հետախուզողների կողմից փորված թունելով և բարձրանալ կտրուկ կածանով դեպի ամրոց։ Ի վերջո անառիկ Ջրաբերդն եք բարձրանում, այն չի կարող հեշտ ճանապարհներ ունենալ։ Այստեղ գտնվում են նաև Մեջլում մելիքի ապարանքի և ևս մի քանի շինության բեկորները, իսկ բերդից ուղղակի հրաշալի՝ ափի մեջ է երևում Երից Մանկանց եկեղեցին։
Ասում են, որ այս եկեղեցին կառուցվել է Գանձասարի մոնոպոլիային հակակշիռ ստեղծելու համար։ Դե դուք էլ կարող եք տուրիստական մոնոպոլիստներից բացի նաև մի քիչ աչքաթող արված անկյուններ այցելել, պրպտել։ Լուռ և ասֆալտե ճանապարհ չունեցող եկեղեցիներն ինձ համար հատուկ հմայք ունեն։ Այս անտառներում զգացվում է հուսահատ արցախյան հպարտություն։ 1993 թվականին ադրբեջանցիները, կարծելով, որ եկեղեցում հայեր են պատսպարված, կրակոց բացեցին վանքի վրա և տապալեցին գմբեթի խաչը, վնասեցին պատերը։ Հենց հաջորդ օրն այստեղ մտած հայ զինվորների ջոկատը խոսք տվեց վերականգնել խաչը, սակայն պատերազմի ծանր պայմաններում տղաներից շատերը զոհ գնացին, իսկ խոստումը 21 տարի հետո, միևնույն է, իրականություն դարձավ։ Նրանք «Եղնիկներ» հատուկ ջոկատի տղաներն էին։
Այս վայրերը այցելելու համար ցանկալի է ձեզ ուղեկցի տեղացի մեկը, ով կկարողանա անսխալ մատնանշել ճանապարհները։ Տեղացի ընկեր այստեղ կարելի է շատ շուտ գտնել։
Բնության հետ միասնություն զգալու համար զբոսաշրջիկի համար լավագույն լեռնային ճանապարհներից է վերելքը դեպի Կաչաղակաբերդ, որտեղ ամպերի հետ միաձուլվել է բերդի ուրվագիծը։ Զգուշացնում եմ, որ սկզբում կարող է թվալ, որ բերդը շատ մոտ է և փոքր, բայց մի քանի ժամից հետո, երբ առջևում կշարունակեք տեսնել նույն գրեթե չփոփոխվող տեսարանը, տեսողական խաբկանքներին կսկսեք հավատալ, բայց վստահ եմ, որ նպատակասլաց զբոսաշրջիկը չի կանգնի կես ժամապարհին և կբարձրանա վայելելու «Արցախն ափի մեջ» տեսարանը։ Միայն մինչև ճանապարհի վերջը բարձրանալով՝ կտեսնեք, որ ժայռը և բերդի փլատակներն իսկապես ինչ հսկայական են։
Երկար օրվա մայրամուտին անպայման պետք է այցելել ազատագրական շարժման մասնակից Նիկոլ Դումանի աուտենտիկ թանգարանը։ Այստեղ կտեսնեք պարզ կենցաղի պարագաներ, որոնք ներկայացված են ոչ թանգարանային խիստ ապակյա տուփիկների մեջ, այլ իրենց բնական միջավայրում։ Տպավորությունն է կարծես մի երկու դար ետ գնալով մտել եք մի անծանոթի տուն։

↓ Քարվաճառի Ջերմաջուրը

← Նիկոլ Դումանի
թանգարանը

Արցախյան
Մոիգրանակերդի ամրոցը

→ Սպեփանակերդի
շուկայում

← Ասկերանի ամրոցը

Ստեփանակերտ

Ինչպես Երևանում, այնպես էլ Ստեփանակերտում կենտրոնացած է բնակչության մեծ մասը: Նախ խորհուրդ կտամ շրջել քաղաքով առանց google maps-ի, զգալ քաղաքի ռիթմը, ինչը, մի քիչ առաջ գնալով, ասեմ, որ անգամ շատ արխային երևանցիներին կզարմացնի իր դանդաղ անհոգությամբ: Ստեփանակերտը փոքր, բայց կենդանի քաղաք է, իսկ կենտրոնն իր հրապարակով մաքուր և գրավիչ է երեկոյան պռոմենադների համար:
Ստեփանակերտի ամենագեղեցիկ շենքերից է Վահրամ Փափազյանի անվան թատրոնը, որը, ցավոք, այժմ վթարային վիճակում է և այլևս չի շահագործվում: Այն գտնվում է քաղաքի սրտում և մինչև արցախյան պատերազմն իսկապես քաղաքի սիրտն էր: Աշխատակիցները պատմում են, որ թատրոնում ամսական մինչև 70 ներկայացում էր խաղացվում, իսկ քաղաքի բնակիչները տարեկան տասն անգամ թատրոն էին գնում (սա պարտադիր էր, քանի որ բոլորը թատրոնի աբոնեմենտ ունեին): Շենքն իրոք տպավորիչ է ներսից և դրսից և կառուցվել է փոքրամարմին կին ճարտարապետ Մարգո Բալասանյանի նախագծերով և ամենօրյա հսկողության ներքո: Միշտ չէ, որ հնարավոր է մտնել թատրոն, բայց տնօրենի թույլտվությամբ և պահակի հսկողությամբ շանսերը մեծ են:
Ստեփանակերտի շուկան ամենամտերմիկ և, բնականաբար, համով վայրերից է: Հենց մուտքի մոտ ձեզ կդիմավորի արցախցի տատիկը, ձեռքի մեջ կդնի ժենգյալով հացը և կուղարկի այս ու այն կողմից իրենց թարմ ու սեփական ձեռքով աճեցրած մթերքի պիառշիկների՝ վաճառողների մոտ: Իհարկե, չեմ հավատում, որ կարդացողներից որևէ մեկը չգիտի այս բուսակերական, լիականաչ հացի մասին, այնպես որ միայն ասեմ, որ կարող եք լսել, որ հենց ձեր լոշիկում մինչև 40 տեսակի կանաչի կա, բայց դուք դա երբեք չեք ճշտի:
Արցախցիները մարինացնում և թթու են դնում ամեն ինչ՝ սոխից սկսած՝ վերջացրած զկեռով և ամեն տեսակ կանաչիներով: Ի դեպ, անպայման փորձեք և ձեզ հետ վերցրեք արցախյան կապերները, որոնք այստեղ անվանում են կապար:
Ստեփանակերտի ներքևի, ավելի փոքր շուկայում կգտնեք նաև ամբողջահատիկ ցորենից պատրաստված տեղական «թուրնավ հացը»՝ թոնրի հաց: Այս հացի համար ալյուրը, ի դեպ, բերում են Արցախում աշխատող միակ հին ջրաղացից:
Երեկոյան այցելեք Իոսիֆ գինեգործին, որ Խնձորի բաղ կոչվող թաղամասում մի փոքրիկ, բայց շատ կոլորիտային հյուրատուն ունի, չնայած հենց ինքն ավելի կոլորիտային է: Ալիսիմիկ (այդպես են իրեն անվանում ընկերները) Իոսիֆն ամբողջ կյանքում աշխատել է ոգելից խմիչքների ստեղծման վրա, իր մառանը միշտ լիքն է սեփական արտադրության գինիներով, հապալասենու, բալի և տարբեր հատապտուղների թուրմերով, սեփական արտադրության մրգային օղիներով և կոնյակով, որոնց մասին նա կարող է երկար պատմել և անպայման այս ամենն ուղեկցել արցախյան իմաստությամբ լցված կենացներով:

Ասկերան

Կարծում եմ արդեն պարզ է, որ Արցախում շատ են հին ամրոցներն ու բերդերը: Նրանց շարքում, հարկավ, ամենահայտնին է Ասկերանի բերդը: Այս՝ համեմատաբար երիտասարդ բերդը բավական բարվոք վիճակում է. հուժկու, 9-մետրանոց պատերը մինչև հիմա էլ պաշտպանության հստակ զգացում են փոխանցում: Խորհուրդ կտամ շրջել, անցնել միջանցքով մի ծայրից մյուսը և նայել դիտակետերից. ի դեպ, ամբողջ երկայնքը մոտ 1,5 կիլոմետր է: Իսկ բերդն ինչպես 18-րդ դարում, այնպես էլ 20-րդ դարի վերջում զանգվածային ընդհարումների ժամանակ վստահելի պատնեշ է հանդիսացել:
Հասկանում եմ, շատ տարբերվող չեմ լինի, եթե առաջարկեմ գնալ Տիգրանակերտ, սակայն այստեղ հատուկ նշում եմ Տիգրանակերտի մասին, քանի որ շատերը միայն թանգարանն են այցելում՝ մոռանալով հսկա և ճոխ քաղաքի խոսուն ավերակների մասին, որտեղ արդեն տարիներ ի վեր պեղումներ են տեղի ունենում անփոփոխ ղեկավար Համլետ Պետրոսյանի ղեկավարությամբ: Ես վստահ եմ, որ պարոն Պետրոսյանը շատ զբաղված կլինի, բայց եթե նրան հանդիպեք պեղումների վայրում և հետաքրքիր հարցեր տաք, անմոռանալի զրույցը դեռ երկար կմնա մտքում: Զարմանալի է, որ մի քանի տարիների ընթացքում պեղվել է ամբողջ մի քաղաք, որը, ի դեպ, հաստատվել է մ.թ.ա. առաջին դարում: Այստեղ էլ երևակայությունը պետք կգա պեղումներից գտնված բեկորների վրա տեսնելու այգիների մեջ սփռված այս սպիտակ քաղաքը, որը զբաղեցրել էր մոտ 70 հա տարածություն: Մշակութային օրվանից հետո զարկ տանք աղրենալինին: Ասեմ ինչպես. Արցախի օդանավակայանում կարելի է ամերիկյան CH701 մակնիշի ինքնաթիռով ճախրել Ստեփանակերտի, Շուշիի, անգամ ամբողջ Արցախի վրայով, բայց դա, իհարկե, արդեն ըստ դրամապանակի ճոխության: Սրահում միայն լինելու եք օդաչուի՝ Սամվելի հետ, ով ձեզ ցույց կտա Արցախը վերևից:

↓ Շուշին՝ երկրեղանի օդանավից

→ Շուշիի պատմության թանգարան

← Շուշիի մզկիթը

↑ Հադրութ

↑ Շուշիի պատմության թանգարան

← Շուշիի բերդը

Շուշի

Իմ կարծիքով, Շուշին պետք է առավոտյան սիրել: Սիրուն է, երբ արթնանում ես վաղ առավոտյան և զբոսնում դեռևս նոր-նոր աշխուժացող տների կողքով: Բոլորն էլ Շուշիում իրենց սիրած շենքերն ունեն, դուք էլ կունենաք: Իհարկե, քաղաքից ստացած տրամադրությունը կարող է կոնտրաստային լինել. մի կողմից կիսավեր և ժամանակին շատ հարուստ տների փլատակները, որտեղ արդեն հսկա ծառեր են աճում, մյուս կողմից՝ վառ հաղթանակի և սպիտակ Շուշիի վերածնվող կերպարը տարբեր մտքեր են առաջ բերում և խորհել տալիս քաղաքի ապագայի մասին:

Դե Շուշին մշակութային մայրաքաղաք է, այստեղ պետք է թանգարաններն էլ ուսումնասիրել: Անպայման այցելեք Շուշիի արվեստի կենտրոնը, որի առաջին հարկում տեղակայված է գորգերի մշտական ցուցահանդեսը: Ի դեպ, կենտրոնը տեղակայված է 19-րդ դարասկզբի տպարանի շենքում: Շուշիում կան նաև քաղաքի պատմության, կերպարվեստի, երկրագիտության, դրամի թանգարաններ:

Մշակութային դոպինգից հետո գնում եք մեգահայտնի, բայց պարտադիր ուղիով: Ջդրդուզ, Ջոնտիկներ, Հունոտի կիրճ: Այստեղ շատ չկանգնեմ, ուղղակի ասեմ, որ Հունոտն իսկապես Արցախի ամենագեղեցիկ կիրճն է և դրա մասին բոլոր արցախցիները տեղյակ են, ուստի բազմաթիվ հանդիպումները տեղացիների հետ այս վայրից անբաժան են:

Կարծում եմ՝ կսիրեք Քարինտակ գյուղը, որը գտնվում է հենց այն ժայռի տակ, որտեղ կառուցվել է անառիկ Շուշին: Այսպես դուզ-դուզ էլ անվանել են, քարի տակ, էլի: Այն անուշ գյուղ է, դժվար անցյալով: Վերևից Քարինտակը կարելի է տեսնել ինչպես մեծ քարտեզի վրա, այն բաց, ռազմավարական տեսանկյունից անպաշտպան և խոցելի դիրք ունի: Այս փաստը, սակայն, ազատագրական պայքարի ժամանակ գյուղի բնակիչներին չխանգարեց հերոսական դիմադրություն և հակահարված կազմակերպել:

Գյուղի կենտրոնը համեմատաբար լավ է պահպանվել: Այստեղ կարելի է շրջել նեղ փողոցներով, ուսումնասիրել հին շենքերը և հետևել գյուղի կոլորիտին, երբ կանայք թոնրի հաց են թխում, իսկ հարևանները ոգևորված քննարկում են օրվա իրադարձությունները:

↓ Շուշիի լեգենդար «Ջոնտիկներ» բնական դեսարժան վայրը



Հադրութ

Հադրութը շատ գեղեցիկ շրջան է, թովիչ բնությամբ, թարմ կանաչով և մշակութային: Հենց Հադրութ քաղաքն էլ առանձին ժամանակ է պահանջում զբոսանքի և ուսումնասիրության համար: Այստեղ դեռ նկատվում են նախկինում ակտիվ զարգացած արհեստավորական քաղաքի հիշողությունները: Քաղաքում մոտ 25 արհեստավորական արտադրություն կար, ինչի շնորհիվ քաղաքն աննախադեպ զարգանում էր: Հատուկ ուշադրություն դարձրեք քաղաքում ամենուրեք հանդիպող, ձեռքով նկարված պաստառներին և գովազդային վահանակներին: Ժամանակին այսպիսի վահանակներ ամեն քաղաքում կային, հիմա իրենց օրինակը դեռ Հադրութում կարելի է գտնել:

Հադրութի մասին խոսելիս պետք է պարտադիր նշել նրա ինտելիգենտ անցյալի մասին: Քաղաքի բնակչության մեծամասնությունը դեռևս 19-րդ դարի վերջին կիրթ էր: Ակտիվ երիտասարդության շնորհիվ այստեղ 1976 թվականին անգամ Արցախում առաջին դիսկոտեկն է հիմնվել՝ «Արմատը», որտեղ Բիթլերին էին լսում և կուլտուրական հանգստանում: Ասեմ, որ մինչև վերջերս սա Արցախում միակ դիսկոտեկային նախադեպն էր: Իսկ եթե ավելի լուրջ ձեռքբերումներից խոսենք, ապա հենց այստեղ են դրվել արցախյան շարժման նախադրյալները, խմորումները, որտեղից էլ ծնվել է հաղթանակը:

Ինձ վրա շատ մեծ տպավորություն թողեց Տյաք փոքրիկ գյուղը, որը գրեթե ամբողջությամբ լքված է, սակայն իրենից մի մեծ մշակութային հուշարձան է հիշեցնում: Գյուղը ստեղծվել է այն ժամանակ, երբ 19-րդ դարում Հադրութ քաղաքի զարգացման ֆոնին հայտնվեցին նաև մեծահարուստներ, որոնք սկսեցին բնակություն հաստատել մոտակա սքանչելի սարերի փեշերին և կառուցել գեղեցիկ ու ամուր տներ: Տյաքը հենց այդ բնակավայրերից է, որի շենքերի մի մասին, ի դեպ, ժամանակին ուզում էին մշակութային հուշարձանի կարգավիճակ տային: Ըստ իս, գյուղը հայկական ստեղծարար ոլորտների զարգացման համար հսկայական պոտենցիալ ունի: Քայլեք այս փոքրիկ գյուղը. վստահ եմ, ձեզ մոտ էլ շատ մտքեր կառաջանան:

Եթե չզլանաք և բարձրանաք Գտչավանք, որը ինչպես շատ հայկական եկեղեցիներ, խորոտիկ բնության մեջ է գտնվում, ասեմ, որ այն դարեր ի վեր եղել է այստեղ հաստատված մելիքների հոգևոր կենտրոնը և մեծածավալ ձեռագրերի ստեղծման վայր: Քանի որ այստեղի վանահայրն էլ եղել է մելիք Եգանի հայրը, որը հայտնի է որպես Տող գյուղի տանուտեր, տրամաբանական է այստեղից իջնել և տեսնել մելիքի ապարանքների վերականգնված մնացուկները: Ապարանքի մոտակայքում մինչև հիմա էլ բնակվում են մելիքի հեռավոր հետնորդները, որոնք ձեզ սիրով կպատմեն մելիքների ընտանիքի մասին և ցույց կտան փառավոր ապարանքներից մնացած բեկորները:

Հենց այստեղ էլ կազմակերպվում է Արցախի գինու փառատոնը: Փառատոնն այստեղ անցկացնելու ամենամեծ պատճառն է մի քանի քայլ այն կողմ գտնվող և միջազգային բարձր ստանդարտներով կյանքի կոչված «Կատարո» գինու գործարանը, որտեղ ձեզ որակյալ շրջայց կկազմակերպեն և համով գինիներ կհյուրասիրեն:

Հետո ձեզ սպասում է հենց Կատարովանքը, որն Արցախի ամենաբարձրադիր եկեղեցին է (ծովի մակարդակից 2480 մետր բարձրության վրա): Այն շրջապատված է ժայռերով և գտնվում է Դիզափայտ լեռան գագաթին: Կատարովանքն ապշեցուցիչ տպավորություն է թողնում ոչ միայն ուխտավորների, այլև յուրաքանչյուր այցելուի վրա: Բավական խրթին ճանապարհից հետո իսկապես երանություն կթվա գտնել վանքի՝ ժամանակի հետ մաշված պատերը և բարձունքից հայացք գցել Արցախյան լեռնաշղթայի և Իրանի տափաստանների վրա: Բայց դա լավ եղանակին, իսկ եթե ամպեր լինեն, ապա նրանք լինելու են ձեր ոտքերի տակ:

Երբ վերադառնաք Տող, այստեղ կարող եք գիշերել Մարի հյուրատանը, որը գտնվում է դարասկզբին կառուցված գյուղական տանը և փոխանցում է ժամանակի շունչը:

← Ամարասի վանքը

→ Սիպորաշենյի Սնգրի ծառը

↓ Հադրութի լեռները



Մարտունի

Երևի երկար չպատմեմ Սխտորաշենցի Տնջրի ծառի մասին։ Տարածաշրջանում ամենատարեց և բարձր, ամեն ինչ տեսած չինարի ծառն իր մեջ (ծառի մեջ հսկայական փչակ կա, որի մեջ կարող է հարյուրից ավելի մարդ տեղավորվել), վստահաբար, ընդունել է բոլոր արցախցիներին և ոչ միայն։ Այն զուտ ծառ չի արցախցիների համար, այլ հազարավոր տարիների պատմություն ունեցող հայրենիքի խորհրդանիշ։
Քանի որ Մարտունու շրջանում առաջինն է հասնում թութը (և ամենահամեղն է), իսկ թթի հսկայական այգիները սփռված են մի քանի հեկտար տարածության վրա, այստեղ կարելի է վայելել հով զբոսանք բերքատու այգիների միջով։ Գուցե նաև կարողանաք հանդիպել թութ թափ տալու զվարճալի արարողությանը, երբ ամբողջ ընտանիքներով հավաքվում են, մեծ կտորը միասին բռնում, ամենափոքրիկին ուղարկում թթի ծառի վրա, հետո թափ տալիս ու այգիներում էլ համտեսում քաղցր պտուղը։ Այս այգիները սկիզբ են առնում Մաճկալաշեն գյուղից և տանում են մինչև Ամարասի եկեղեցին, որտեղ առաջին անգամ հայ մանուկները սկսեցին հայերեն գրել և կարդալ դեռ նորաթուխ հայկական տառերով Մեսրոպ Մաշտոցի հիմնած առաջին արցախյան դպրոցում։ Եկեղեցու պարիսպների երկայնքով ձգվում են օժանդակ և բնակելի շինությունները, որտեղ՝ քարե բուխարու գլուխ գլխի դրած ֆիգուրների մոտ, սիրում են նկարվել սիրահարները։
Եթե 2724 մետր բարձրանալու ցանկություն առաջանա, ամենալավ տարբերակը հենց Քիրս լեռն է, որի ուրվագիծը պատկերված է Արցախի զինանշանի վրա։ Այն վեհ է, անվերջ գեղեցիկ, իսկ լեռներից գեղեցիկ Արցախում կարող են լինել միայն լեռները։

Քաշաթաղ

Արցախը լքելուց առաջ անպայման այցելեք սոսիների արգելոց-պուրակի արցախյան հատվածը։ Ասում եմ արցախյան, քանի որ պուրակի մի մասը գտնվում է նաև Հայաստանի տարածքում և մտնում է Շիկահողի արգելոցի մեջ։ Պուրակի արցախյան մասը ձգվում է 17 կիլոմետր՝ Բասուտաջուր գետի երկայնքով։ Առանց չափազանցնելու ուղղակի դրախտային վայր է և առանձնահատուկ ոչ միայն Արցախի և Հայաստանի համար։ Մասնագետների կարծիքով այն ամենահին և ամենաերկար սոսենիների պուրակներից մեկն է աշխարհում։ Այստեղ քեզ երեխա ես զգում, ով թափառում է հսկա ծառերի միջև։ Հատկապես աշնանը, երբ այս հարյուրամյա ծառերը դեղնում են և սկսում է տերևաթափը, իսկ արմատների ոլորան-լաբիրինթներն ավելի արտահայտիչ են ուրվագծվում տերևների ֆոնին, անբացատրելի հուզմունք է պատում։ Այստեղ կարելի է հանգիստ մոռանալ ժամանակի մասին և ուղղակի անվերջ տրվել զբոսանքին՝ անցնելով գետի մի ափից մյուսը։ Պուրակը սկսվում է Վորդուակ գյուղից և ձգվում է մինչև Դիցմայրի, որտեղ կարելի է իջնել Կովսական գյուղից։
Արցախը կարելի է սիրել միայն ապրումակցելով և հասկանալով նրա դժվար, բայց խրոխտ պատմությունը։ Ազատ Արցախը սպասում է ձեզ, սկսեք հավաքվել։

↓ Սապարո վանքը՝ վերականգնումից հետո

Էմմա Հարությունյան
Լիլիթ Սուպլանոյան, Առնոս Մարտիրոսյան, Էդուարդ Դանիելյան, Սմբատ Ավետյան, Ալեքսեյ Յակովլև, Սահակ Մուրադյան, Դևիդ Հոֆֆման, Արեգ Բալայան, Հայկ Մելիքոնյան

Տուրիստական պաստառներ, 1950-60-ականներ

Խորհրդային Միությունում խրախուսվում էր հատկապես ներքին տուրիզմը: Արշավներն ու ճամփորդությունները համարվում էին սովորական երևույթ: Կային զանազան միություններ, իսկ աչքի ընկնողները ստանում էին հատուկ շքանշաններ: Կար նույնիսկ հատուկ Տուրիստի օր:
Ինչպես և այսօր, ամենաշատ գովազդվող ուղղություններն էին Աղստևի հովիտը (Դիլիջանն ամենասիրված առողջարաններից էր), Սևանը, Գառնին (այն ժամանակ տաճարը դեռ վերականգնված չէր, տուրիստները զմայլվում էին բեկորներով), Լոռին (Հաղպատ, Սանահին, Օձուն, Ախթալա, Թումանյանի ծննդավայր Դսեղ), Սյունիքը:

Հայաստանի ազգային գրադարան

KOOR

MILLENNIAL JOURNEY

www.koor.am

The Main
Design Store

@TheMainDesignStore

/

TheMain.am

/

Միեր Մկրտչյան 10
(Միրզոյան գրադարան,
առաջին հարկ)